ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԻԼԻԹԴԱՎԻԹ**

# ՀԱԿԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
Հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝
Ռ.Հ.Պողոսյան

ԵՐԵՎԱՆ 2018

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
……..…….....3
ԳԼՈՒԽ 1. ՀԱԿԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ
……..……..…...12
1.1. Հակահասարակական վարքի հետազոտության տեսական հիմքերը…….12
1.2. Հակահասարակական վարքի սուբյեկտիվ կողմի հիմնախնդիրը հոգեբանության
մեջ ……
…...25
ԳԼՈՒԽ 2. ՀԱԿԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԷՄՊԻՐԻԿ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ…….....6
5
2.1. Հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոնների ընդհանուր հոգեբանական բնութագիրը
……..…..…65
2. 2. Հետազոտության կազմակերպումն ու
մեթոդիկաները……...……75
2. 3. Հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոնների
հետազոտության
արդյունքները և դրանց
վերլուծությունը……80
ԳԼՈՒԽ 3. ՀԱԿԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
……...……93
3. 1. Սուբյեկտիվ գործոնների գենեզիսի հոգեբանական
առանձնահատկությունները……
933. 2. Օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հարաբերակցության
առանձնահատկությունները
……103

3. 3. Սուբյեկտիվ գործոնների նախականխման հոգեբանա-
քրեաբանական
պայմանները
……..109
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……..……..……
116
ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ……....119
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՑԱՆԿ……..……...122
ՀԱՎԵԼՎԱԾ
……..129

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հանցավորության պատճառ հանդիսացող գործոնների վեր հանումը, դրանց էության բացահայտումը և հնարավորինս չեզոքացումը արդեն երկար ժամանակ է ինչ գտնվում է թե՛ տեսաբանների, թե՛ պրակտիկ աշխատողների ուշադրության առանցքում: Առաջադրված խնդրի լուծումը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով: Դրանցից մեկն էլ այն է, որ հանցավորության պատճառ հանդիսացող գործոնների ուսումնասիրությունը հիմնականում իրականացվում է առանձին իրավաբանական գիտությունների շրջանակներում և ուսումնասիրության շրջանակներից երբեմն դուրս են մնում հանցավոր վարքի ընկալման բազմաթիվ հիմնահարցեր, որոնց բացահայտումը հնարավոր է միայն համապատասխան նեղ մասնագիտական, օրինակ՝ հոգեբանական գիտելիքների առկայության պարագայում: Մեր կողմից ներկայացված աշխատանքի շրջանակներում անդրադարձ է կատարվում հենց արծարծված

հիմնախնդրին, ինչն էլ կասկածի տակ չի դնում ընտրված թեմայի արդիականությունը և կարևորությունը:

Հետազոտական թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև նրանով, որ թեկուզ հակահասարակական վարքի սուբյեկտիվ կամ հոգեբանական կողմի բաղադրիչների մասին տարբեր առիթներով հիշատակվում են հոգեբանների և իրավաբանների մի շարք աշխատություններում, սակայն այդ հարցը դեռևս մենագրական հետազոտության առարկա չի դարձել, որում ամփոփված լինի երևույթի ուսումնասիրության տարբեր կողմերն ու եզրերը իրենց ամբողջության մեջ ներառված:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Քանի որ հակահասարակական վարքի պատճառականությունը, դրա շարժառիթները հասկանալու, դրա դեմ կազմակերպված և նպատակասլաց պայքար ծավալելու համար խիստ էական է այդ վարքի սուբյեկտիվ կողմի ուսումնասիրությունը և հանցագործության օբյեկտիվ կողմի հետ դրա հարաբերակցության պարզաբանումը, ուստի սուբյեկտիվ գործոնների ուսումնասիրության հիմնախնդրին նշանակալի ուշադրություն են դարձրել քրեաբանական, քրեա-իրավական, հոգեբանական, փիլիսոփայական գրականության շրջանակներում:

Իրավաբանները հակահասարակական վարքի կառուցվածքում առանձնացնում են օբյեկտիվ և սուբյեկտիվ (հոգեբանական) պատճառականություն, ինչպես նաև հանցակազմ հասկացությունը, որը բաղկացած է չորս խումբ հատկանիշներից. հանցագործության օբյեկտը, դրա օբյեկտիվ կողմը, հանցագործության սուբյեկտը, դրա սուբյեկտիվ կողմը: Իրավաբանական հատկանիշների դերում, որոնցով բնութագրվում է հանցագործության սուբյեկտիվ կողմը, հանդես են գալիս մեղքը, դրդապատճառը, նպատակը, հույզերը: Իրավաբանների մեկնաբանությամբ վերջին չորս գործոններով սահմանափակվում է հանցագործության սուբյեկտիվ կամ հոգեբանական կողմը, որը հնարավորություն չի տալիս հանցագործության սուբյեկտի բարոյական դեգրադացիան լայն հոգեբանա-քրեաբանական վերլուծության ենթարկել: Անհրաժեշտություն է առաջանում ընդլայնել հակահասարակական

վարքի սուբյեկտիվ գործոնների կազմը և այն համալրել այնպիսի էապես կարևոր բաղադրիչներով, ինչպիսիք են հակահասարակական դիրքորոշումը՝ Կ.Ե. Իգոշև [48,49], քրեածին վարքի դիրքորոշումը՝ Ս. Ջ. Արզումանյան [18], հանցավորության դրդապատճառը՝ Վ.Ն. Կուդրյավցև [58,59], հոգեբանական օտարացումը՝ Յու. Մ. Անտոնյան [9] և այլն: Այսինքն անձնային այն կառույցները, այդ թվում՝ անգիտակցական, որոնք ակտիվ մասնակցություն են ունենում հակահասարակական վարքի գործունեություն ծավալելու համար:

Հետազոտության օբյեկտը - հակահասարակական վարքը պայմանավորող սուբյեկտիվ գործոններն են:

Հետազոտության առարկան - հակահասարակական վարքը պայմանավորող այն սուբյեկտիվ գործոնները, որոնք ընդհանուր են տարբեր բնույթի հանցագործություններ իրականացրած անձանց մեջ:

Հետազոտության նպատակը - հետազոտության ենթարկել հակահասարակական վարքի սուբյեկտիվ, այսինքն հոգեբանական գործոնները:

**Հետազոտության հիմքում ընկած ընդհանուր և մասնավոր վարկածային դրույթները**

Հակահասարակական վարքի պատճառականության շղթայում կարևոր դեր են խաղում սուբյեկտիվ գործոնները, որոնք հանդես են գալիս որպես հիերարխիկ համակարգ, որի կառուցվածքում հատկապես կարևոր դեր է խաղում կոգնիտիվ բաղադրիչը՝ տվյալ հանցագործության նկատմամբ անձի «տեսությունը»: Այն, զուգորդվելով հակահասարակական վարքին նպաստող մյուս սուբյեկտիվ գործոնների՝ անձի հանցածին դիրքորոշումների, մոտիվացիոն, արժեքային, հուզական առանձնահատկությունների հետ, հանցավոր վարքի պատրաստակամություն է ձևավորում: Այս ընդհանուր վարկածային դրույթների հիման վրա առաջ են քաշվել հետևյալ մասնավոր դրույթները.

1. Անձի հակահասարակական գործունեության կամ կոնկրետ արարքի կողմնորոշման հիմքում առկա է պատկերացումների յուրահատուկ համակարգ, տեսություն, որով անձն իր և ուրիշների համար տրամաբանորեն հիմնավորում է,

ռացիոնալիզացիայի է ենթարկում, արդարացնում է տվյալ արարքը կամ գործունեությունը: Հենց այդ պատկերացումների համակարգի միջոցով է անձը «հանում» տվյալ հանցագործությունն իրականացնելու բարոյական արգելքը:

2. Անձի հակահասարակական գործունեությունը պայմանավորող որոշ սուբյեկտիվ գործոններ ընդհանուր են տարբեր բնույթի հանցագործությունների պարագայում: Այդ գործոններն են. կյանքի անիմաստության զգացումը, էքստերնալությունը՝ որպես անձի հասունության, ինքնաքննադատականության և սեփական արարքների համար պատասխանատվության ցածր մակարդակները պայմանավորող գործոն, նյութական բարեհարմարության ընդունումը որպես գերարժեք և բարձր ռեակտիվ ագրեսիվությունը:

Հետազոտության նպատակի և վարկածի հիման վրա առանձանցվել են հետևյալ խնդիրները.

1. Վերլուծել հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոններին վերաբերող հետազոտությունները իրավաբանական և հոգեբանա-քրեաբանական գրականության մեջ:
2. Կատարել օրինապահ և հակահասարակական վարքերի համեմատական հոգեբանական վերլուծություն և հիմնավորել, որ այդ վարքի սուբյեկտիվ բաղադրիչները հոգեբանա–քրեաբանական հետազոտության հիմնախնդիր են:
3. Առանձնացնել, դասակարգել հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոնները և տալ դրանց ընդհանուր հոգեբանա–քրեաբանական բնութագիրը, ինչպես նաև ցույց տալ, թե դրանցից որոնք են գերակայում հանցավոր գործողության մեջ:
4. Տեսական վերլուծության ենթարկել հանցավոր վարքին նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հարաբերակցությունը:
5. Բացահայտել հակահասարակական վարքի հիմքում ընկած ընդհանուր սուբյեկտիվ գործոնները:

6. Մշակել մեթոդական հանձնարարականներ հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոնների կանխարգելման համար:

Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը: Հետազոտության ընթացքում հիմնվել ենք դետերմինիզմի, համակարգայնության, զարգացման և պատմականության սկզբունքների վրա: Քանի որ հետազոտության առարկան երկու գիտությունների՝ իրավաբանության և հոգեբանության սահմանագծում է, ուստի մեթոդաբանական հիմքերի դերում հանդես են գալիս անվանի իրավաբաններ–քրեաբաններ Ա.Բ. Սախարովի [87], Վ.Ն. Կուդրյավցևի [55], Կ.Ե Իգոշևի [48,49], Յու.Մ. Անտոնյանի [9], Ի.Ա. Կուդրյավցևի [58], իրավաբանական հոգեբաններ Ա.Ս. Արզումանյանի [18], Վ.Լ. Վասիլևի [30], Մ.Ի. Ենիկեևի [43], Վ.Վ. Ռոմանովի [84], Ա.Ռ. Ռատինովի [81], Յու.Վ. Չուֆարովսկու [100], ճանաչված հոգեբաններ Բ.Գ. Անանևի [7], Ա.Ն. Լեոնտևի [64,65], Ա.Լ. Ռուբինշտեյնի [86], Ա.Մ. Յակովլևի [102], Ա.Ռ. Լուրիայի [68], Կ.Է. Իզարդի [52], Դ.Ն. Ուզնաձեի [95,96], Ծ.Ա. Նադիրաշվիլու [73], Վ.Ն. Մյասիշևի [72], Ա.Ա. Բոդալյովի [27] տեսական դրույթները և հիմնարար հետազոտությունները: Հատկապես կողմնորոշվել ենք Վ.Ն. Մյասիշևի՝ [72] հարաբերությունների, Դ.Ն. Ուզնաձեի՝ [95,96] հոգեբանական դիրքորոշման, Ա.Ն. Լեոնտևի՝ [64,66], Լ.Ի. Բոժովիչի՝ [24] անձի ձևավորման, Ս.Ջ. Արզումանյանի՝ [18], իրավախախտի անձի կազմավորման հոգեբանա–քրեաբանական, Ա.Ա. Բոդալյովի՝ [26] սոցիալական ընկալման, սոցիալական ադապտացիայի և սոցիալիզացիայի, Ա.Բ.Սախարովի՝ [87], Վ.Ն. Կուդրյավցևի, Վ.Ե. Էմինովի, Յու. Մ. Անտոնյանի՝ [13] հանցագործի անձի և հանցագործության պատճառականության մասին տեսություններով:

Աշխատանքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները.____Հետազոտության ընթացքում կիրառվել են փաստաթղթերի և դատավճիռների վերլուծության, զրույցի (ինտերվյուի) հոգեբանական թեստերի մեթոդները: Հետազոտության ընթացքում կիրառել ենք «Արժեքների նշանակության և հասանելիության ուսումնասիրության մեթոդիկան» (Ֆոնտալովա Ե.), «Ռեակտիվ և անձնային տագնապայնության մակարդակի

գնահատման սանդղակը (Սպիլբերգեր–Խանին)», անձնավորության ուսումնասիրության FPI մեթոդիկան և «Վերահսկման տեղակայման հարցարանը» (Ջ. Ռոթեր):

Հետազոտության գիտական նորությունը և տեսական նշանակությունը: Հետազոտության մեջ ցույց է տրվում, որ թեկուզ հանցավոր վարքի առանձին բաղադրիչներ (հակահասարակական դիրքորոշում՝ Կ.Ե. Իգոշև [48,49], քրեածին վարքի դիրքորոշում՝ Ս.Ջ. Արզումանյան [18], հանցավորության դրդապատճառ՝ Վ.Ն. Կուդրյավցև [58,59] և այլն) որոշակիորեն լուսաբանված են, սակայն նման վարքի բազմաթիվ այլ սուբյեկտիվ գործոններ դեռևս հետազոտված չեն:

Ներկա հետազոտության մեջ ցույց է տրվում, որ անձի հանցավոր գործունեությունն ունի որոշակի կողմնորոշման հիմք, տեսություն, որով անձն իր և ուրիշների համար ռացիոնալիզացիայի է ենթարկում տվյալ գործունեությունը կամ կոնկրետ արարքը: Այդ տեսությամբ անձն արդարացնում է իր հանցավոր գործունեությունը կամ արարքը՝ հանելով հանցագործությունն իրականացնելու բարոյական արգելքը:

Հետազոտությամբ բացահայտվել է նաև, որ հակահասարակական վարքի հիմքում կան որոշ սուբյեկտիվ գործոններ, որոնք ընդհանուր են տարբեր բնույթի հանցագործությունների պարագայում: Այդ գործոններից առավել կարևոր են սեփական գոյության անիմաստության զգացումը, էքստերնալությունը և գումարը, նյութական բարիքները որպես գերարժեք ընդունելը:

Քանի որ իրավաբանական հոգեբանությունը որպես հոգեբանության ինքնուրույն ճյուղ ինտենսիվ զարգացման փուլում է, ուստի այդ բնագավառին վերաբերող բազմակողմանի էմպիրիկ հետազոտությունները ինչպես նպաստում են եղած տեսությունների հարստացմանը, այնպես էլ հիմքեր են ստեղծում նոր տեսական դրույթների կազմավորման համար: Անձի հակահասարակական վարքի հոգեբանական կամ սուբյեկտիվ գործոնների ուսումնասիրության տեսական նշանակությունը արտահայտվում է հետևյալում.

ա) անվանի իրավաբանների (Ա. Սախարով [87], Վ. Կուդրյավցև, Ի. Կարպեց, Պ. Դուբինին [38], Վ. Տարարուխին [91] և ուր.) կողմից

ստեղծված հանցագործի անձի և վարքի, հանցավորության պատճառականության տեսություններում անձի քրեականացման գործընթացում անձնային, հոգեբանական բազմաթիվ գործոններ դեռևս բավարար չափով ներկայացված չեն: Մեր հետազոտության տեսական արժեքն էլ հենց այն է, որ հակահասարակական գործունեությունը պայմանավորող սուբյեկտիվ գործոնների տեսությունը հարստացվում է նոր, դեռևս բավարար չափով չհետազոտված հոգեբանական գործոններով:

բ) Հետազոտության մեջ տրվում է հանցավոր վարքի սուբյեկտիվ գործոնների հետևյալ դասակարգումը. կոգնիտիվ գործոններ (պատկերացումները հանցագործության վերաբերյալ), դիրքորոշումներ, մոտիվացիոն գործոններ (պահանջմունքներ, դրդապատճառներ, կյանքի իմաստավորվածություն, արժեքներ), անձի անհատական առանձնահատկություններ (բնավորություն, խառնվածք), հուզական գործոններ (տագնապայնություն, ագրեսիվություն): Այս գործոնների հանցավոր վարքի օբյեկտիվ պատճառների հետ հարաբերակցության առանձնահատկությունների պարզաբանումը, տեսական նոր դրույթների առաջադրումը հնարավոր է դարձնում մի կողմից որոշակիորեն խմբագրել հանցավոր վարքի կառուցվածքի մասին տեսական պատկերացումները և ըստ արժանավույն կարևորել հոգեբանական բաղադրիչները, իսկ մյուս կողմից, հանցագործի անձի կազմավորման գենեզիսի օրինաչափություններից ելնելով՝ վերահմաստավորել վաղ հոգեբանական և սոցիալական պրոֆիլակտիկայի բովանդակությունը, դերը և համարժեք միջոցառումները:

գ) Հետազոտության տեսական նշանակությունը առավելապես կարևորվում է նաև նրանով, որ տեսական և էմպիրիկ հետազոտություններով բացահայտված իրողությունները էապես կարող են նպաստել շեղվող (դևիանտ) վարքի հոգեբանական տեսության զարգացմանը, ինչն էլ ավելի նպատակասլաց և արդյունավետ կդարձնի հանցավորության դեմ պայքարը, և որի հիմնական բաղադրիչներից մեկը մենք համարում են անձի բարոյալքման գործընթացի կանխարգելումը, նախազգուշացումը:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կիրառական առումով կարող են օգտագործվել մի շարք նպատակներով.

ա) Հանցագործի անձի կազմավորման գենեզիսի առանձնահատկությունների հաշվառման հիման վրա կարելի է երեխաների կրթա–դաստիարակչական պրոցեսը այնպես կազմակերպել, որպեսզի նրանց մեջ ձևավորվի հարգանք իրավավարքի և օրենքի նկատմամբ, նրանց մեջ դրվեն բարոյագիտակցության և իրավագիտակցության հիմքերը, ինչը կնպաստի նրանց սոցիալական վարքի շեղման կանխարգելմանը:

բ) Հետազոտությամբ ստացված արդյունքները, բացահայտված տեսական դրույթները և առաջադրված գործնական մեթոդական հանձնարարականները կարող են արդյունավետորեն օգտագործվել ինչպես քրեակատարողական հիմնարկներում, այնպես էլ հատուկ (ուղղիչ–դաստիարակչական) դպրոցներում պրոֆտեխուսումնարաններում և նմանատիպ այլ հիմնարկ–ձեռնարկություններում վարքը շեղված անձանց ուղղելու և սոցիալապես վերականգնելու (ռեսոցիալականացնելու) նպատակով:

գ) Հակահասարակական վարքի սուբյեկտիվ բաղադրիչների ծավալուն բնութագրերը և հանցարարքի կազմում դրանց դերի հիմնավորումները իրավաբանները և հոգեբանա-սոցիալական աշխատողները (քրեակատարողական հիմնարկներում) կարող են հիմք ընդունել նախ հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառականությունը լիարժեք պարզելու, այնուհետև հանցագործի (մեղադրյալի) նկատմամբ համարժեք մոտեցում ցուցաբերելու համար (հանցարարքը որակելիս, խափանման միջոցը ընտրելիս, մեղքը որակելիս, պատժամիջոց և պատիժ կրելու վայրը ընտրելիս և այլն):

դ) Անձնային կամ հոգեբանական գործոնների առաջացման և զարգացման առանձնահատկությունների իմացությունը հնարավորություն կտա ծնողներին (հատկապես անբարենպաստ ընտանիքների), դաստիարակներին և մանկավարժներին ժամանակին բացահայտել երեխայի անձի և վարքի հետ կատարվող բացասական փոփոխությունները:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Հակահասարակական վարքն իր հանցակազմով ունի բարդ կառուցվածք, որտեղ որոշակիորեն հարաբերակցվում են հանցագործության օբյեկտը և օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Համապատասխանաբար հանցավոր վարքը ունի օբյեկտիվ պատճառականություն, որն ենթադրում է այն քրեածին պայմաններն ու հանգամանքներն, որոնք նպաստում են հանցավոր մտադրության առաջացմանը և դրա կատարմանը: Այդ վարքը ունի նաև սուբյեկտիվ պատճառականություն, որի տակ հասկացվում է անձից բխող հոգեբանական գործոնները:
2. Կարելի է առանձնացնել հանցագործության սուբյեկտիվ գործոնների հետևյալ հիմնական խմբերը. ա/ կոգնիտիվ գործոններ (պատկերացումները հանցագործության վերաբերյալ), դիրքորոշումներ, բ/ մոտիվացիոն գործոններ (պահանջմունքներ, դրդապատճառներ, կյանքի իմաստավորվածություն, արժեքներ), գ/ անհատական առանձնահատկություններ (բնավորություն, խառնվածք), դ/ հուզական գործոններ (տագնապայնություն, ագրեսիվություն):
3. Անձի հակահասարակական գործունեությունը հիմնվում է յուրահատուկ կողմնորոշման հիմքի վրա, որի կարևոր առանձնահատկությունն այն է, որ անձը տրամաբանորեն, հաճախ էլ փաստերով հիմնավորում և արդարացնում է իր հանցավոր գործունեությունը կամ կոնկրետ արարքը: Այդ տեսությամբ անձը «հանում» է տվյալ հանցագործությունն իրականացնելու բարոյական արգելքը:
4. Անձի հակահասարակական գործունեության մեջ առկա են որոշ սուբյեկտիվ գործոններ, որոնք ընդհանուր են տարբեր բնույթի հանցագործությունների պարագայում:
5. Անձի հակահասարակական գործունեության ընդհանուր սուբյեկտիվ գործոններն են. կյանքի անիմաստության զգացումը, էքստերնալությունը, նյութական բարօրության արժեքի բացարձակացումը:

6. Հանցավոր վարքի պատճառականության մեջ որոշակի հոգեբանական հարաբերակցության մեջ են գտնվում օբյեկտիվ պատճառներն ու պայմանները և սուբյեկտիվ պատճառները: Դրա առանձնահատկությունների իմացությունը հնարավորություն է տալիս գնահատել այդ պատճառները, առավել ակնհայտ տեսնել դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերը, ճիշտ ընտրել ինչպես օբյեկտիվ պատճառներից խուսափելու, այնպես էլ սուբյեկտիվ գործոնների առաջացումը կասեցնելու ուղիները, ինչպես նաև տարբերակել հանցավոր վարքին նպաստող մի շարք գործոններ ևս, որոնք ըստ ծագման պատճառականության օբյեկտիվ բնույթի են, իսկ ըստ դրսևորման՝ սուբյեկտիվ, այսինքն՝ անձնային պայմանավորվածություն ունեն: Վերջին հանգամանքը կազմում է վարքը շեղված, հանցավոր անձի, կալանավորի նկատմամբ առհասարակ մոտեցման հիմքը ուղղման և վերադաստիարակության, հոգեբանական վերականգնման, ռեսոցիալիզացիայի գործընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացվել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի Զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերի ընթացքում:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հիմնավորվածությունը ապահովվել է աշխատանքի գիտական ապարատով, հիմնավոր մեթոդաբանական և տեսական բազայով, ադեկվատ հետազոտական մեթոդների ընտրությամբ ստացված արդյունքների քանակական և որակական բազմակողմանի վերլուծությամբ, բավարար քանակի ընտրանքի ընդգրկմամբ:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 137 տպագիր էջերի վրա, առանց հավելվածի՝ 128 էջ:

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

# ՀԱԿԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

## 1.1. Հակահասարակական վարքի հետազոտության տեսական հիմքերը

Հակահասարակական վարքի հետազոտությունների տեսական հիմքերը դրվել են Վ.Ն. Մյասիշևի՝ [72] հարաբերությունների, Դ.Ն. Ուզնաձեի՝ [95] հոգեբանական դիրքորոշման, Ա.Ն. Լեոնտևի [64], Լ.Ի. Բոժովիչի՝ [24] անձի ձևավորման, Ս.Ջ. Արզումանյանի՝ [18] իրավախախտի անձի կազմավորման հոգեբանա–քրեաբանական, Ա.Ա. Բոդալյովի՝ [26] սոցիալական ընկալման, սոցիալական հարմարման և սոցիալականացման, Ա.Բ. Սախարովի՝ [85], Վ.Ն. Կուդրյավցևի, Վ.Ե. Էմինովի, Յու. Մ. Անտոնյանի՝ [13] հանցագործի անձի և հանցագործության պատճառականության մասին տեսություններով:

Ըստ Վ.Ն. Մյասիշևի՝ անձի միջանձնային հարաբերությունների համակարգը պայմանավորված է մարդկության զարգացման ողջ պատմությամբ, արտացոլում է նրա անձնական փորձը, որոշում է նրա գործողությունները, ապրումները [72]: Մարդու հոգեբանությունը, հարաբերությունները հանդես են գալիս որպես օբյեկտիվ իրականության տարբեր կողմերի հետ անձի անհատական, ընտրողական, գիտակցական կապերի ամբողջական համակարգ:

Անձի հարաբերությունները, որպես սուբյեկտի և օբյեկտի միջև կապ, ունի հստակ կառուցվածք, որի առանձին բաղկացուցիչները կարող են հանդես գալ որպես մասնավոր հարաբերություններ, նրա կողմեր կամ տեսակներ [72]: Հարաբերությունները որոշվում են մի շարք հիմնական հատկանիշներով. ընտրողականությամբ, ակտիվությամբ, ամբողջական–անձնային բնույթով, գիտակցականությամբ [72]: Որպես հարաբերությունների կարևոր բաղադրիչներ Վ. Մյասիշևը համարում էր պահանջմունքները, դրդապատճառները, զգացմունքային հարաբերությունները (կապվածություն, սեր, թշնամություն, համակրանք, հակակրանք), հետաքրքրությունները, գնահատականները, համոզմունքները, իսկ գերակայող

հարաբերությունը՝ ուղղվածությունն է [72]: Ըստ հեղինակի՝ անձնավորության և նրա հարաբերությունների զարգացման բարձր աստիճանը որոշվում է շրջապատի նկատմամբ գիտակցական մակարդակով և ինքնագիտակցությամբ:

Դ.Ն. Ուզնադզեն իր անձի տեսությունը կառուցում է «դիրքորոշում» հասկացության վրա: Դիրքորոշումը նա համարում էր կարևորագույն հոգեբանական կազմավորում [95]: Ըստ հեղինակի՝ դիրքորոշումը մարդու վարքի հիմնական կարգավորիչ մեխանիզմն է, այն որոշում է անձի ուղղվածությունը և ընտրողական ակտիվությունը [95]: Միևնույն ժամանակ, ՈՒզնաձեն անձնավորության էությունը չի հանգեցնում դիրքորոշման գործառույթավորմանը, այլ պայմանավորում է այնպիսի հիմնադիր բնութագրերի առկայությամբ, ինչպիսիք են գիտակցությունը, օբյեկտիվացիայի ընդունակությունը: Մարդու վարքը, ըստ հեղինակի, կարող է ընթանալ երկու մակարդակներում՝ իմպուլսիվ և գիտակցությամբ կառավարվող: Իմպուլսիվ վարքը մեծապես պայմանավորված է դիրքորոշմամբ, որը ծագում է մարդու պահանջմունքների և իրադրությունների փոխազդեցության արդյունքում: Վարքի առավել բարձր մակարդակների պարագայում մարդը չի ենթարկվում իմպուլսին, այլ գտնում է վարքի այնպիսի ձևեր, որոնց համար կարող է իր վրա վերցնել պատասխանատվությունը: Դա տեղի է ունենում շնորհիվ օբյեկտիվացիայի մեխանիզմի, որի համաձայն մարդը հակադրում է իրեն արտաքին միջավայրին, սկսում է գիտակցել իրականությունը այնպես, ինչպիսին նա կա, և օբյեկտիվացնել, ավելի առարկայական դարձնել իր վարքը [95]:

Կախված օբյեկտիվացիայի նկատմամբ մարդու ընդունակությունից՝ Դ.Ն. Ուզնադզեն նկարագրում է անձնավորության երեք տիպ. 1. դինամիկ անձնավորություն, որն ունի օբյեկտիվացման զարգացած ընդունակություն և օժտված է հեշտությամբ օբյեկտիվացված ուղղությամբ հակվելու պատրաստակամությամբ; 2. ստատիկ անձնավորություն, որը դրսևորում է հիպեր օբյեկտիվացիա, այսինքն իր կամային ջանքերով զսպում է դիրքորոշումների անընդհատ իմպուլսները և

գործունեության նպատակահարմար տեսակներ է ընտրում, 3. վարիաբել անձնավորություն, որը ընդունակ է օբյեկտիվացման բավական հեշտությամբ, բայց չունի բավական կամային ընդունակություններ դրա իրականացման համար [95]:

Դիրքորոշման տեսության մեջ անձնավորության կարևոր բնութագիրներից մեկը պատասխանատվությունն է, որի շնորհիվ մարդը կարող է բարձր կանգնել իր ընդունակություններից՝ հանդես գալով որպես կամքի սուբյեկտ: Մոտիվացիայի իմաստը գործունեության իրականացումն է, որը համապատասխանում է կյանքի ընթացքում հիմնական, ամրապնդված անձնավորության դիրքորոշմանը: Նպատակի ձևավորման ընթացքը բաժանվում է երկու աստիճանի.

1. ընտրություն, որը համարվում է ինտելեկտ, գործողություն և իրականացվում է տվյալ սուբյեկտի վարքի անձնային արժեքների հիման վրա;

2. մոտիվացիա, որը ճանաչվում է կամային գործընթաց: Կամային վարքը դա անձի ընդունակությունն է իր ակտիվությունը ենթարկել ոչ միայն անձնային արժեքներին, այլև ակտիվանալ ըստ օբյեկտիվ անհրաժեշտության [95]:

Ըստ Ա.Ն. Լեոնտևի՝ [64, 65] անհատի զարգացման առանձնահատկությունները սկսում են դրսևորվել արդեն ամենավաղ փուլերում: Հեղինակը կարևորում է հատկապես երեխայի կապերի միջնորդավորված բնույթը: Երեխայի գործունեությունը հանդես է գալիս շրջապատող աշխարհի հետ նրա կապերը իրականացնող առարկաների միջոցով, իսկ իրերի հետ կապերը՝ մարդու միջոցով [64]:

Զարգացման այս իրադրությունը բերում է նրան, որ իրերը երեխային բացվում են ոչ միայն իրենց ֆիզիկական հատկանիշներով, այլև այն որակով, որ նրանք ձեռք են բերում մարդկային գործունեության մեջ իրենց ֆունկցիոնալ նշանակությամբ, իսկ մարդիկ որպես այդ իրերի տիրակալներ, որոնցից կախված են նրա կապերը դրանց հետ: Երեխայի առարկայական գործունեությունը ձեռք է բերում գործիքային կառուցվածք, իսկ շփումը դառնում է խոսքային՝ լեզվով միջնորդավորված [64]: Հենց

այս հիմքի վրա է ձևավորվում անձնավորությունը: Սկզբնապես իրերի աշխարհի և շրջապատող մարդկանց նկատմամբ հարաբերությունները երեխայի համար միաձուլված են միմյանց միջև, բայց հետագայում տեղի է ունենում դրանց երկատում, և դրանք կազմավորում են զարգացման տարբեր, փոխկապված ուղիներ՝ մեկը մյուսին անցնող [65]:

Մարդու անհատական զարգացման ընթացքում (օնտոգենեզում) այս անցումներն արտահայտվում են հաջորդական փուլերի փոփոխման մեջ. առարկայական (պրակտիկ և ճանաչողական) գործունեության զարգացման փուլ: Բայց նույն անցումները բնութագրում են դրդապատճառների շարժը յուրաքանչյուր փուլի ներսում: Արդյունքում ծագում են մոտիվների այն հիերարխիկ կապերը, որոնք կազմավորում են անձնավորության «հանգույցները» [63]: Կարևորելով մոտիվների դերը գործունեության մեջ՝ Ա. Լեոնտևը նշում է, որ գործունեությունը միշտ ունենում է դրդապատճառ, «չմոտիվացված» գործունեությունը դա մոտիվից զրկված գործունեություն չէ, այլ գործունեություն սուբյեկտիվորեն և օբյեկտիվորեն թաքնված մոտիվներով [63]: Հեղինակը անձի ձևավորման ընթացքը ներկայացնում է նաև որպես կամքի զարգացման գործընթաց: Մարդը ապրում է իր համար անընդհատ ընդլայնվող իրականությունում: Սկզբում դա նրան շրջապատող մարդկանց և առարկաների նեղ շրջանակն է, հետագայում գյուղը, քաղաքը հանրապետությունը, սրա շնորհիվ ընդլայնվում են նաև իմացության սահմանները:

Լ.Ի. Բոժովիչը, [24,25] բնութագրելով հոգեկան զարգացման հիմնական միտումը, գրել է, որ անհատական (օնտոգենետիկ) զարգացման ողջ իմաստը կայանում է նրանում, որ երեխան աստիճանաբար դառնում է անձնավորություն: Մարդկության կողմից կուտակված սոցիալական փորձը յուրացրած անհատից նավերածվում է այդ փորձը ստեղծողի, այն նյութական և հոգևոր արժեքները ստեղծողի, որոնք իրենց մեջ բյուրեղացնում են մարդկային հոգեկանի նոր հարստությունները [24]: Հեղինակը անձնավորությանը բնութագրում է որպես ամբողջական հոգեբանական կառույց, որը ձևավորվում է կյանքի ընթացքում

դաստիարակության և շրջակա միջավայրի հետ մարդկանց փոխազդեցության արդյունքում: Դառնալով անձնավորություն՝ մարդն աստիճանաբար ազատվում է շրջակա միջավայրի ազդեցությանը անմիջական ենթարկվելուց, որը թույլ է տալիս նրան գիտակցաբար փոխել ինչպես այդ միջավայրն, այնպես էլ իրեն [24]:

Ըստ Լ.Ի. Բոժովիչի՝ անձնավորության զարգացումը տեղի է ունենում մարդու կողմից հասարակական փորձի, որոշակի նորմերի և օրինակների յուրացման ընթացքում: Սակայն այդ գործընթացի էությունը չի հանգեցնում դրանց իմացությանը. անհրաժեշտ է այնպիսի յուրացում, որի դեպքում նորմերը և օրինակները դառնում են երեխայի վարքի և գործունեության շարժառիթներ: Իսկ դրան հասնելու համար Լ. Ի. Բոժովիչը անհրաժեշտ էր համարում երեխայի զարգացման ներքին սուբյեկտիվ աշխարհի ուսումնասիրությունը, այսինքն՝ այն «հոգեբանական հողը», որի վրա ներգործում է դաստիարակությունը [24]:

«Երեխայի զարգացումը,-գրում է Բոժովիչը,-ունի իր ներքին տրամաբանությունը, իր սեփական օրինաչափությունները, և չի հանդիսանում իրականության պասիվ արտացոլում, որի պայմաններում այդ զարգացումը կատարվում է» [24, էջ 69]:

Ընդհանրացնելով երեխայի զարգացման մասին փորձարարական նյութերը՝ Լ.Բոժովիչը հանգում է հետևյալ եզրակացության. «Ինչ ազդեցություն որ գործի միջավայրը երեխայի վրա, ինչ պահանջներ որ այն ներկայացնի նրան, դրանք չեն հանդիսանում նրա զարգացման իրական գործոններ: Երեխայի սեփական պահանջմունքներ են դրանք դառնում միայն այն դեպքում, երբ դրանց կատարումը ապահովում է ոչ միայն նրա համար օբյեկտիվորեն նշանակալից դիրքորոշումը, այլև նրա ներքին դիրքորոշման պահպանումը» [24, էջ 78]:

Լ.Ի. Բոժովիչն ուսումնասիրելով դրդապատճառը, դրա ծագումը և զարգացումը, տալիս է հետևյալ սահմանումը. «Դրդապատճառն այն է, ինչի շնորհիվ իրականացվում է գործունեությունը, ի տարբերություն նպատակի, որին ուղղված է այդ գործունեությունը» [25, էջ 88]: Այսինքն հեղինակը դրդապատճառ է

համարում այն ամենը, ինչը առաջացնում է մարդու ակտիվությունը. խաղալիքը, հետաքրքրությունը, պարտքի զգացումը, երեխայի կողմից ընդունված որոշումը:

Հակահասարակական վարքի նախադրյալ հանդիսացող հանցածին դիրքորոշման բացատրություն է տալիս իրավաբանական հոգեբան Ս.Ջ. Արզումանյանն իր՝ իրավախախտ անձի կազմավորման հոգեբանա–քրեաբանական տեսության մեջ [18]:

Համաձայն վերջինիս՝ անձի հուզական-անձնային ոլորտների, նրա բարոյական և իրավական գիտակցության խաթարումն իր արտահայտությունն է գտնում անձի քրեածին դիրքորոշման մեջ [18]: Քրեածին դիրքորոշումը սահմանվում է որպես անբարենպաստ բարոյա-հոգեբանական ազդեցության տակ ձեռքբերված անձի ներքին պատրաստակամություն անձի անօրինական ակտիվության նկատմամբ: Սոցիալականացման ընթացքում անբարենպաստ ընտանիքներում մեծացող անչափահասների վրա շարունակական բարոյա-հոգեբանական ազդեցության դեպքում առաջանում են անցանկալի անձնային որակներ և հատկանիշներ, բացասական հուզական և նեգատիվ դիրքորոշումներ, որոնք ամբողջության մեջ կազմավորում են նրանց անօրինական ակտիվության ներքին անձնային դետերմինացիան [18]:

Քրեածին դիրքորոշումն ընկած է անօրինական վարքի դրդապատճառների հիմքում և ի վիճակի է կառավարել դրանք, ինչպես նաև կարող է ձևավորել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի դրդապատճառներ դրված նպատակն իրականացնելու համար: Վարքի դրդապատճառները պայմանավորվում են անձի դիրքորոշումներով:

Ա.Ս. Արզումանյանը հանցավոր վարքի կառուցվածքում առանձնացնում է բարոյապես ոչ համարժեք դիրքորոշումներ, որոնք դասակարգում է հետևյալ կերպ. բացասական հուզական, նեգատիվ, նախաքրեածին, քրեածին, հանցածին: Հեղինակը տալիս է յուրաքանչյուր խմբի հոգեբանական, ինչպես նաև վերջին երեքի հոգեբանա–քրեաբանական բնութագիրը. [18]

1. Բացասական հուզական դիրքորոշումների հիմքում ընկած է բացասական երանգ ունեցող հուզական վիճակը, որն առաջ

է եկել բացասական հուզական իրադրություններում: Այն քողարկված կամ թաքուն ընթացող վիճակ է:

2. Նեգատիվ կամ բացասական դիրքորոշումները կազմավորվում են բացասական հուզական դիրքորոշումների հիման վրա՝ վերջիններիս որոշակի ամրապնդումից հետո:
3. Նախաքրեածին դիրքորոշումները միջանկյալ դիրք են զբաղեցնում նեգատիվ կամ բացասական և քրեածին դիրքորոշումների միջև: Նախաքրեածին դիրքորոշմամբ անձնավորությունը կանգնած է նախաքրեական վարքի ճանապարհին:
4. Քրեածին դիրքորոշումը պարունակում է բացասական հուզական, նեգատիվ կամ բացասական և նախաքրեածին դիրքորոշումների որակներ և հանգեցնում է անձի բարոյական այլափոխման որակապես նոր մակարդակի:
5. Քրեական դիրքորոշումը հանդես է գալիս որպես քրեածին դիրքորոշման քրեականացման արդյունք:

Առանձնացվում է քրեածին դիրքորոշման երկու տեսակ. խոր-անձնային և իրադրային: Խոր անձնային դիրքորոշումներն արտացոլում են անձի կայուն ներքին միտումն անօրինական ակտիվության նկատմամբ: Այսպիսի դիրքորոշումներն արտահայտում են անձի զգացմունքային, բարոյական, իրավական ոլորտների այլափոխվածությունը, որը դրսևորվում է ինչպես նրահոգեկան զարգացման անաներդաշնակության մեջ (արտահայտված վերբալիզացված դիրքորոշումներում), այնպես էլ նախաքրեական վարքի կոնկրետ գործողություններում: Իրադրային քրեածին դիրքորոշումները կառավարվում են խորը անձնային դիրքորոշումների կողմից և ենթարկվում են նրանց: Իրադրային դիրքորոշումների դերում հանդես են գալիս վերբալիզացված քրեական դիրքորշումները, որոնց առաջացումը և դրսևորումը պայմանավորված են կոնկրետիրադրություններով:

Քրեածին դիրքորոշումը օժտված է մի շարք առանձնահատկություններով. գրգռողականությամբ, դիֆուզությամբ, ընդհանրացվածությամբ, շարժունությամբ կամ

դինամիկությամբ, քողարկող գործառույթով և այլն, որոնք լրացնում են նրա հոգեբանական բնութագիրը:

Ա.Ա. Բոդալյովը անձնավորության մեջ առանձնացնում է երկու հոգեկան կազմավորումներ. նրանք, որոնք հանդես են գալիս որպես նրա վարքի դրդիչներ, և նրանք, որոնք կազմում են կատարողական բաղադրիչն այդ վարքի հոգեկան կազմավորման մեջ [27]:

Ըստ հեղինակի, վարքի դիդիչները դրանք մարդու վերաբերմունքն է, հարաբերությունն իրականության այն տարբեր կողմերի նկատմամբ, որոնցում նա ներառված է, որն էլ դրսևորվում է նրա պահանջմունքների, հետաքրքրությունների և հակումների ձևով [27]: Կատարողական բաղադրիչը նրա ընդունակություններն են, անձի այն հատկությունները, որոնք հանդիսանում են նրանց կողմից գործունեության տարբեր տեսակների հաջող կատարման պայմաններ: Միաժամանակ նա նշում է, որ «ընդունակությունները անձի ցանկացած անհատական–հոգեբանական առանձնահատկությունները չեն, այլ միայն նրանք, որոնցից կախված է ինչ–որ գործունեության կամ շատ գործունեությունների կատարման արդյունավետությունը»:

Անձի էության դրսևորման համար մեծ նշանակություն ունեն բոլոր երեք կողմերը. իմացական, հուզական, վարքային, ինչպես նաև նրանց փոխկապվածությունը [27]:

Գործունեության գլխավոր տեսակները, ընդգծում է Ա. Բոդալյովը, որոնցում մարդիկ հանդես են գալիս այլ մարդկանց իմացության սուբյեկտներ, հանդիսանում են շփումը և աշխատանքը [26]: Շփման գործընթացը հանդիսանում է մարդկանց փոխազդեցության այնպիսի տեսակ, որում նրանք հանդես են գալիս մեկը մյուսի նկատմամբ միաժամանակ և՛ որպես օբյեկտ, և՛ որպես սուբյեկտ [26]: Շփման ընթացքում մարդիկ հասկանում են իրար, բայց նաև ծագում են կոնֆլիկտներ և բարոյական հակասություններ, առաջանում է ընկերոջ վարքը կանխատեսելու անընդունակություն:

Համաձայն Ա. Բոդալյովի սոցիալական ընկալման տեսության՝ մարդու կողմից մարդու ընկալումը մի մարդու կողմից մյուսի անմիջական ակնառու-պատկերային արտացոլումն է: Ինչպես և մյուս հոգեկան գործընթացներն, այն ունի իմացական և հուզա-կամային

կողմեր [28]: Մարդու կողմից մարդու ընկալումը մարդկանց ցանկացած համատեղ գործունեության ընթացքի պարտադիր կողմն է: Անհատի կողմից կոնկրետ անձի մասին ձևավորված հասկացությունն, ըստ հեղինակի, նրա մտածողության ձևն է նրա մասին, որոնցում ընդհանրացված ֆիքսվում են տվյալ մարդու հատկանիշները՝ նրան բնութագրելով որպես աշխատանքի, իմացության և շփման սուբյեկտ[28]:

Անվանի իրավաբան-քրեաբան Ա.Բ. Սախարովը հանցագործության սուբյեկտի խնդիրը սերտորեն կապում է հանցավորության և նրա պատճառների հետ, քանի որ հանցավորության սուբյեկտը հանցավոր ոտնձգություն կատարող անձն է [87]:

Ըստ Սախարովի՝ մարդկային գործունեությունն ամբողջությամբ որոշվում է մարդու պահանջմունքներով, նրա ցանկություններով և ձգտումներով:

Մարդու գործունեությունը պայմանավորված է ոչ միայն իր անձնական պահանջմունքներով, այլև հասարակական հետաքրքրություններով, որոնք անհատի համար հանդես են գալիս որպես իր գործունեության ինքնուրույն նպատակներ և սահմանափակում են անհատական ցանկությունները և ձգտումները [87]: Հասարակության և անձնական հետաքրքրության մեջ հնարավոր են տարաձայնություններ, որոնք ընդունակ են առաջացնել հակասություններ, կոնֆլիկտներ անհատի և հասարակության միջև:

«Հանցագործությունը,-նշում է անվանի քրեաբանը,-նման կոնֆլիկտ է, որն առաջացնում է հակասություն նրանց միջև, ինչին անհատը տալիս է նախապատվություն որպես իր համար նշանակալից, և ինչը ճանաչվում է հանրորեն անհրաժեշտ և որպես այդպիսին ամրագրվում է իրավունքի համապատասխան նորմերով» [87, էջ 175]: Ա. Սախարովը շեշտում է, որ միայն խորը արմատացած հակահասարակական հայացքներով և դիրքորոշումներով սուբյեկտն ավելի արագ և հեշտորոշում կընդունի բավարարել իր մոտծագած անօրինական ցանկությունները և պահանջմունքները՝ հաշվի չառնելով այլ անձանց հետաքրքրությունները: Այդպիսի

անձինք ամենաչնչին արտաքին պայմանների աղդեցության տակ հակված են դրսևորել հակահասարակական վարք և հակառակը՝ անձինք, որոնց անհատական գիտակցությունը ձեռք չի բերել հակահասարակական ուղղվածություն, ընդունակ են զսպել իրենց մոտառաջացած հակահասարակական դրդումները՝ իրենց արարքները ենթարկելով հասարակության պահանջներին [87]:

Ա.Բ. Սախարովն այսպիսով մոտենում է արարքի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններին: Նա գրում է. «Հանցագործությունը որպես մարդկային գործունեության գիտացական կամային գործողություն, որպես մարդկային արարք, որում դրսևորվում է անհատի հակազդումն արտաքին միջավայրի կոնկրետ պայմանների նկատմամբ, չի կարող մեկուսացված լինել մարդկանց հոգեկանից, տվյալ սուբյեկտի մտավոր, հուզական, կամային ոլորտից» [87, էջ 188]:

Քրեաբանության մեջ մեծ ճանաչում ունեցող Վ.Ն. Կուդրյավցևը համարում է, որ հանցավոր վարքի գենեզիսում գլխավոր դեր են խաղում անձնավորության բարոյական ձևավորման բնույթը և հետևանքները: Անձի ոչ՛ կենսաբանական որակները, ոչ՛ արտաքին միջավայրի կարճաժամկետ և պատահական ազդեցությունն, այլ անհատի ողջ կյանքի ուղին է որոշում նրա արարքների ճնշող մեծամասնության բովանդակությունը [58]: Համաձայն հեղինակի՝ անձնավորության սոցիալական և հոգեբանական որակները, նրա աշխարհայացքը, քաղաքական, բարոյական և այլ հայացքները, հնարքները և սովորույթները, բնավորության և վարքի առանձնահատկությունները ձևավորվում են մարդու ողջ կյանքի ընթացքում, շրջակա միջավայրի հետ նրա փոխազդեցության արդյունքում [58]: Հեղինակը գտնում է, որ անձի բարոյական զարգացման թերությունները հանգեցնում է հակահասարակական հայացքների, իսկ հետո նաև հանցագործության կատարմանը:

Անձի բարոյական զարգացումը հայտնի քրեաբանը դիտարկում է որպես հանցավորության կանխարգելման կարևոր միջոց և կարծում, որ պետք է համապատասխանի ռեալ իրականությանը, որում այդ մարդն ապրում և զարգանում է իր առաջադիմական միտումներով: Ծեղումը այս կամ այն կողմ (իրականության դրական կամ բացասական կողմերի

թերագնահատումը կամ գերագնահատումը) տանում է սոցիալական արժեքների, հասարակության մեջ իր տեղի, հետաքրքրությունների, նպատակների և դրանց հասնելու թույլատրելի միջոցների մասին մարդու պատկերացումների խեղաթյուրմանը [58]:

«Անձի անբարենպաստ բարոյական զարգացումը,-շարունակում է Վ. Կուդրյավցևը,-հիմնական դեր է խաղում նրա հետագա հանցավոր վարքում: Սակայն այդ չի դրսևորվում հենց այնպես, այլ կապված է կոնկրետ կյանքի իրադրության հետ» [59, էջ 96-97]:

Յուրաքանչյուր կյանքի իրադրություն ունի օբյեկտիվ բովանդակություն (այն որոշվում է իրականության մեջ տեղի ունեցող իրադարձություններով) և սուբյեկտիվ նշանակություն (այն կախված է նրանից, թե ինչքանով է տվյալ իրադրությունը պայմանավորված անձի հետաքրքրություններով, կյանքի պլաններով և նպատակներով) [60]:

Իրադրության օբյեկտիվ և սուբյեկտիվ բովանդակությունը կարող է առանձնանալ: Այդ դեպքում մարդը գործում է իրադրության մասին իր պատկերացումներին համապատասխան, դրա սուբյեկտիվ նշանակությամբ: Անձի վարքը լիովին համապատասխանում է այն սուբյեկտիվ նշանակությանը, որը նատալիս է այդ իրադրությանն աշխարհայացքի, սոցիալական կողմնորոշման առանձնահատկությունների, հայացքների, հետաքրքրությունների սահմանափակվածության պատճառով [60]:

Ըստ Վ.Կուդրյավցևի տեսակետի՝ կամային ակտի, հետևաբար, նաև հանցագործության աղբյուր է հանդիսանում կոնկրետ կյանքի իրադրության և անձնավորության որակների միջև փոխազդեցությունը:

Կուդրյավցևն առանձնացնում է հանցավոր վարքի հետևյալ պատճառները. որոշակի անձանց հակահասարակական հայացքները, այդ հայացքները ձևավորող արտաքին հանգամանքները, կյանքի տարբեր իրադրությունները, որոնք անձնավորության որակների հետփոխազդելով առաջացնում են հանցավոր գործողություններ [58, էջ 183]:

Ճանաչված քրեահոգեբան և քրեաբան Յու. Մ. Անտոնյանը [9,11] համարում է, որ մարդը ոչ թե ծնվում, այլ դառնում է հանցագործ իր

անձի անբարենպաստ բարոյա-հոգեբանական ձևավորման ընթացքում: Այստեղ գլխավոր քրեածին պահ է հանդիսանում երեխայի հուզական, հոգեբանական օտարացումը ծնողներից: Օտարացվածությամբ պայմանավորվում է հետագայում երեխայի մտնելն այդպիսի օտարացված կամ հակահասարակական ուղղվածության անձանց ոչ ձևական խմբերի մեջ, որոնք օտարվել են հասարակությունից, նրա արժեքներից, դեզադապտացվել կամ բարոյալքվել են [9, էջ 7]: Այդ խմբերում անչափահասը բավական հեշտ է յուրացնում հակահասարակական նորմերը և պատկերացումները, որոնք հետո ներառվում են նրա հանցավոր վարքը պայմանավորող սուբյեկտիվ գործոնների համակարգի մեջ:

Յու. Անտոնյանն ընդգծում է, որ եթե երեխայի զգացմունքային շփումները ծնողների հետ կան, բայց վերջիններս կատարում են իրավախախտումներ և անբարոյական արարքներ, քրեածին վարակը կարող է տեղի ունենալ անմիջականորեն ընտանիքում [9, էջ 36]: Փոքր, ոչ պաշտոնական հանցավոր խմբերում շարունակվում է անձի անցանկալի բարոյա-հոգեբանական ձևավորումը, իսկ շատ դեպքերում այն այստեղ ավարտվում է: Ըստ հեղինակ՝ հանցագործի անձին հատուկ են մի շարք տարբերակիչ հոգեբանական և բարոյական գծեր:

Հանցավոր վարքի պատճառ միշտ հանդես են գալիս անձը, նրա տարբերակիչ առանձնահատկությունները: Որպես այդպիսի վարքի պատճառներ չեն կարող հանդես գալ բարեհաջող կամ սադրանքի ենթարկող կոնկրետ իրադրությունները, որոնք ընդունակ են կատարել միայն պայմանների դեր: Իրադրության քրեածին դերը հնարավոր չէ բացել դրա և մարդու միջև հոգեբանական կապերից, դրա ըմբռնումից և սուբյեկտիվ գնահատականից դուրս [9, էջ 76]: Հանցագործի անձի և նրան շրջապատող պայմանների միջև հոգեբանական կապերից դուրս, ըստ քրեաբանի, անհնար է բացատրել նրագործողությունները:

Հանցագործի անձը նրանում սոցիալապես նշանակալից նեգատիվ որակների ամբողջություն է, որը կազմավորվում է այլ մարդկանց հետ բազմաթիվ և համակարգային փոխհարաբերությունների ընթացքում:

Յու. Անտոնյանը և իր աշխատակիցները համարում են, որ հանցավոր վարքը որոշվում է առաջատար դրդապատճառներով կամ մոտիվներով, որոնք ձևավորվում են մարդու զարգացման վաղ փուլերում: Շատ հանցագործությունների մոտիվներ կրում են անգիտակցական բնույթ [9, էջ 140]: Առանց մոտիվների իմացության հասկանալ անձը և նրա արարքը անհնար է: Պետք է հաշվի առնել նաև, որ մոտիվացիոն կոմպլեքսի մեջ ակտիվորեն ներառված են սուբյեկտի բնութագրական առանձնահատկությունները: Իսկական մոտիվների, ինչպես նաև մարդու այլ հոգեբանական առանձնահատկությունների բացահայտումն անհնարին է առանց հոգեբանական մոտեցումների և մեթոդիկաների կիրառման:

Հանցագործի հոգեբանական առանձնահատկությունները, նրա կենսակերպը և շփումը, հանցագործության կատարումը հիմք են տալիս եզրակացնելու, որ նրանցից շատերը հանդիսանում են օտարացված անձինք: Դա արտահայտվում է այլ մարդկանց հետ թույլ կապերով, հասարակության մեջ ընդունված նորմերի չընդունմամբ:

Հանցավոր վարքի և նրա մոտիվացիայի վրա նշանակալից ազդեցություն են ունենում հոգեկան անոմալիաները, որոնք մի կողմից դժվարացնում են սուբյեկտի կողմից բարոյական և իրավական նորմերի յուրացումը, իսկ մյուս կողմից էականորեն խոչընդոտում են կյանքի իրադրությունների ադեկվատը մբռնմանը և գնահատականին, որոնք արտացոլվում են նրանց լուծման միջոցների վրա: Իրենք իրենց հոգեկան անոմալիաները չեն հանդիսանում հանցագործության մոտիվներ:

Յու.Մ. Անտոնյանը, Վ.Ն. Կուդրյավցևը, Վ.Ե. Էմինովը համարում են, որ հանցավոր վարքում արտացոլված և գենետիկորեն պայմանավորված են հակումները և նախատրամադրվածությունը, խառնվածքը, բնավորությունը և այլն: Արտաքին պայմաններն ուղղակի չեն առաջացնում հանցավոր վարք: Նրանք պայմանավորում են ներքին հոգևոր աշխարհը, որոնք, իրենց հերթին, դառնում են ինքնուրույն և ակտիվ գործոն՝ միջնորդավորելով նրա վրա սոցիալական միջավայրի հետագա ազդեցությունը: Մարդը «ընտրում» և յուրացնում է դրանցից նրանք, որոնք մեծ մասամբ համապատասխանում են իր հոգեբանական բնույթին [13, էջ 12-14]:

Հեղինակները կարծում են, որ յուրաքանչյուր անհատ որպես անձնավորություն ոչ միայն գոյություն ունեցող հարաբերությունների, այլև սեփական զարգացման և ինքնագիտակցության արդյունք է: Միևնույն հասարակական իրավիճակն իր օբյեկտիվ հատկանիշներով, որը տարբեր ձևով է ընկալվում և գնահատվում անձի կողմից, նրան դրդում է տարբեր գործողությունների կատարմանը: Մարդու հարաբերությունների համակարգն իրականության տարբեր սոցիալական արժեքների և կողմերի, նորմերի և ինստիտուտների, ինքն իր և իր պարտականությունների, տարբեր խմբերի, հանրությունների նկատմամբ վերաբերմունքներում, հետևաբար, կախված են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին, անձնային հանգամանքներից [13, էջ 107]: Հենց այդ պատճառով է, նշում են նրանք, որ անթույլատրելի է հանցագործի անձի սոցիոլոգիզացիան և պսիխոլոգիզացիան:

Յու. Անտոնյանի, Վ. Կուդրյավցևի և Վ. Էմինովի կողմից կատարված հետազոտությունները թույլ են տվել նրանց գալ այն եզրահանգմանը, որ հանցագործները բնութագրվում են արտահայտված կայուն հոգեբանական առանձնահատկություններով, որոնք նրանց տարբերում են բնակչության հիմնական զանգվածից [13]: Այս առանձնահատկություններից գլխավորները վերաբերում են հետևյալ հոգեբանական և բնութագրական գծերին. իմպուլսիվություն, իր արարքների հետևանքների վատ կանխատեսում, արհամարհական վերաբերմունք սոցիալական և իրավական նորմերի նկատմամբ, ռիգիդություն, կարծրություն, կասկածամտություն, հիշաչարություն, բարձր զգացմունքայնություն միջանձնային հարաբերություններում, մեկուսացվածություն, իր և շրջապատող աշխարհի միջև տարածություն պահպանելու և իր մեջ ընկղմվելու միտում [13]: Միաժամանակ այս գծերը նրանք բնութագրական են համարում գողություն, բռնարարք, ավազակային հարձակում, բռնաբարություն, սպանություն կատարող անձանց համար, և քիչ տիպիկ շահադիտական հանցագործություն կատարող անձանց համար: Հեղինակները պնդում են, որ անձի էության մեջ և նրա հարաբերություններում միանշանակ մեծ նշանակություն ունեն

բոլորերեք՝ իմացական, հուզական, վարքային կողմերը, ինչպես նաև նրանց փոխկապվածությունը:

Այսպիսով, ամփոփելով վերը նշված տեսությունները և հայեցակարգերը և բարձր գնահատելով դրանց արժեքը հակահասարակական վարքի հոգեբանական կողմի ուսումնասիրության մեջ՝ նշենք, որ առանձին վերցրած դրանք բոլորը մեծ հնարավորություն են տալիս ներթափանցելու մարդու վարքի, այդ թվում՝ հակահասարակական վարքի դրսևորմանը նախորդող այնպիսի հոգեբանական, անձնային գործոնների մեջ, ինչպիսիք են անձի պահանջմունքները, ցանկությունները, ձգտումները, հետաքրքրությունները, դիրքորոշումները, դրդապատճառները, զգացմունքները, համոզմունքները, վերաբերմունքը շրջապատի նկատմամբ, անձի հուզա-կամային ոլորտները և այլն:

## 1.2. Հակահասարակական վարքի սուբյեկտիվ կողմի հիմնախնդիրը հոգեբանության մեջ

Հակահասարակական վարքի պատմությունը սկսվում է հնագույն ժամանակներից: Դեռևս հնագույն ժամանակներից հանցավորությունը, նրա պատճառականությունը, հանցագործի անձի խնդիրը, հանցավորությունից պաշտպանվելու և այն կանխելու ու հաղթահարելու անհրաժեշտությունը զբաղեցրել է փիլիսոփաների, իրավաբանների և գիտության մյուս ճյուղերի ներկայացուցիչների ուշադրությունը: Աստիճանաբար հասարակության և գիտության զարգացման հետ մեկտեղ հանցավորությունն առանձնացավ և դարձավ գիտական առանձին վերլուծության առարկա: Խոշոր մտածողները ձևավորեցին հանցավորության սոցիալական բնույթի մասին գաղափարը: Հանցավորության և նրա պատճառների սոցիալական պայմանականության տեսության առաջատար դերը ենթադրում է նաև անձնային մոտեցման ուսումնասիրությունը, որը կապված է այսպես կոչված հանցավորության ներքին պատճառների հետ (արարքի մոտիվացիա, դրանց վրա անձի առանձնահատկությունների՝

բնածին, ձեռքբերովի և այլ ազդեցության մեխանիզմները): Բայց հանցավորության այդ կողմն անխզելիորեն կապված է ինչպես սոցիալական, այնպես էլ հոգեբանա-քրեաբանական պատճառականության հետ: Սկսած մարդկության ձևավորման պահից խոսվում է հանցագործության մասին: Պատմությունը ցույց է տալիս, որ մարդիկ մինչ օրս շարունակում են տարբեր տեսակի հանցանքներ կատարել: Պետք է նշենք, որ տարբեր ժամանակաշրջաններում հանցանքի և պատժի մասին հասարակության պատկերացումները տարբեր են եղել:

Հանցավորության և հասարակության սոցիալական պայմանների միջև եղած կապը բացահայտելու առաջին փորձերը կարող ենք գտնել հնագույն մտածողների աշխատություններում: Հին աշխարհում պատկերացումները ունեին առասպելական հիմքեր, որն արտացոլվում էր հասարակական երևույթները պարզ հավատքի մեթոդով բացատրելու մեջ: Քանի որ անտիկ քաղաքակրթությունը հիմնվել է ստրկության վրա, ստրուկների շահագործումը թույլ է տվել հույներին և հռոմեացիների իրենց նվիրել փիլիսոփայությանը, արվեստին և քաղաքականությանը: Ծագելով մարդկանց ազատների և ստրուկների բաժանման պայմաններում՝ անտիկ միտքը ձևավորվել և զարգացել է որպես ազատների գաղափարախոսություն: Ազատությունը, իհարկե, եղել է ոչ համընդհանուր, այլ սահմանափակ. ստրուկները եղել են ազատություններից դուրս [32, 75]:

Հույն փիլիսոփա Դեմոկրիտը զուգահեռ է անցկացնում հանցավորության պատճառների և ֆիզիկական, մտավոր արատների հետևանքով բարերարության դրդումների բացակայության միջև: Նա ցույց է տալիս դաստիարակության դերը հանցավոր ոտնձգությունների կանխարգելման գործում և գտնում, որ սխալ վարքն առավել ճիշտ վարքի չիմացության արդյունք է: Ըստ Դեմոկրիտի՝ պատժի սպառնալիքը չնայած մարդու վրա զսպող ազդեցություն է թողում, բայց ոչ միշտ է նրան ետ պահում թաքուն մեղսագործությունից [29]:

Անտիսֆենը, Դիոգենը և Կինիկյան փիլիսոփայական դպրոցի մյուս ներկայացուցիչների (մ.թ.ա 5–4-րդ դար) հայացքները խիստ

այժմեական են. հանցավորության կատարումը նրանք կապում էին խեղաթյուրված պահանջմունքների հետ, հատկապես ագահության, այլասերության, եսասիրական պատվախնդրության հետ՝ որպես դաստիարակության թերություն [29]:

Հույն փիլիսոփա Պլատոնը, խորհելով հանցավորության մասին, դրա գլխավոր աղբյուրը համարում էր հարուստների և աղքատների միջև հակասությունը: Պլատոնն առաջիններից էր, ով խոսեց հանցավորության սոցիալական բնույթի մասին՝ օրենսդրին կարգադրելով օրենք հաստատել և սպառնալ պատիժով վատ արարքները կանխելու համար: Նա գրել է զայրույթի, խանդի, հաճույքի ձգտման, մոլորության, չիմացության մասին: Պլատոնը առաքինությունը կապում էր ոչ թե վատ ժառանգականության, այլև վատդաստիարակության հետ [29]:

Հանցավորության սոցիալական, և ոչ միայն անձնային մոտիվացիոն բնույթը հիմնավորել է Արիստոտելը [29]: Հանցավորությունը, ըստ նրա, պայմանավորված է հասարակության մեջ առկա անհավասարությամբ ու անարդարություններով: Այդ բոլորը ծնում են բարքերի խեղաթյուրում, որը հանգեցնում է սոցիալական շեղումների:

Արիստոտելի աշխատություններում կարելի է հանդիպել հանցավորության և պատժի բնույթի խորը ըմբռնմանը: Ամենամեծ հանցագործություններն, ընդգծել է նա, կատարվում են հարստության ձգտումից և ագահությունից, և ոչ թե անհրաժեշտ առարկաների պակասությունից: Հեղինակը բացառում էր հանցագործի բնածին հակումները և այդ պատճառով հանցավորության վրա ազդելու գլխավոր միջոցները համարում էր սոցիալական միջամտությունը՝ արդարացի պետական կառույցը, օրենքների կայունությունը, օրենքների գերակայությունը պաշտոնատար անձանց վրա: Արիստոտելն իր աշխատություններում մեծ նշանակություն էր տալիս օրենքի առաջ բոլորի հավասարությանը: Նա համոզված էր, որ հանցագործներն այդպիսին են դառնում իրենց կամքով, բայց նրա հոգին պետք է իշխի մարմնի վրա, իսկ բանականությունը՝ բնազդների: Սակայն Արիստոտելը

նշում էր նաև հանցագործության այնպիսի պատճառների մասին, որոնք արմատացել են արտաքին պայմաններում [29, 37]:

Հետագայում հռոմեացի իրավաբաններն ու մտածողները հիմնավորեցին, որ մարդկանց վարքը կարելի է կարգավորել բանականության և արդարության միջոցով:

Հռոմեացի իրավաբան Ցիցերոնը զարգացրեց մարդկանց վարքը իրավական նորմերով կարգավորելու գաղափարը:

Ցիցերոնը հանցագործության գլխավոր աղբյուր էր համարում անբանական և ժլատ կրքերն արտաքին հաճույքների նկատմամբ, ինչպես նաև անպատիժ մնալու հույսը [32]: Ցիցերոնին է պատկանում այն հանճարեղ միտքը, որ մարդկային բոլոր չարիքների, որոնց կազմում հատկապես հանցավորության, հիմքում նախևառաջ ընկած է անպատժելիությունը: Սակայն ինչպես նշում էր Ցիցերոնը, պատիժը պետք է համապատասխանի ոչ միայն պատճառված վնասին, այլև արարքի սուբյեկտիվ կողմին [37]:

Հռոմեացի փիլիսոփա, քաղաքական գործիչ Սենեկան զարգացնում էր բոլոր մարդկանց հոգեկան ազատության գաղափարը՝ անկախ նրանց հասարակական դիրքից: Ըստ նրա՝ ստրկության օբյեկտ կարող է լինել միայն մարմնայինը և զգացմունքայինը, բայց ոչ մարդու հոգևոր և բանական հատվածը: «Նա, ով մտածում է, որ ստրկությունը տարածվում է ողջ անձնավորության վրա,-գրում է նա,-մոլորության մեջ է ընկնում. նրա ամենալավ մասն ազատ է ստրկությունից: Միայն մարմինն է ենթարկված և պատկանում ղեկավարին, հոգին ինքն է իր ղեկավարը» [75]: Նա, ինչպես և Ցիցերոնը, նախևառաջ ուշադրություն է դարձնում ոչ թե պատճառված վնասին, այլ հանցագործություն կատարած անձի բնութագրին, նրա կամքի բովանդակությանը:

Միջնադարում եկեղեցին ի դեմս իր քահանաների և միապետների ունեցել է մենաշնորհ գիտության և կրթության վրա, քանի որ եկեղեցին պետականության ձևերից մեկն է հանդիսացել: Այդ պատճառով բոլոր գիտական ուսումնասիրությունները նախաձեռնվել են հանուն կրոնական նպատակների և պրակտիկ նշանակություն չեն ունեցել: Հետևաբար միջնադարում իշխում էր

հանցագործի անձի աստվածաբանական մոդելը՝ կապված մարդու չար կամքի կամ սատանայի կողմից նրահոգին իշխելու հետ[32]:

Վերածննդի դարաշրջանը տարբերվում է իր հումանիստական բնույթով, որը լայն իմաստով նշանակում էր ձգտում մարդկության նկատմամբ, մարդու համար արժանի կյանքի պայմանների ստեղծում, իսկ նեղ իմաստով՝ հետաքրքրություն անտիկ գրականության, արվեստի ուսումնասիրման և տարածման նկատմամբ [32]:

Հանցագործության մասին հետաքրքիր գաղափարներ ունի նաև Թոմաս Մորը (1478–1539): «Ուտոպիա» աշխատությունում հեղինակը հանցավորությունը կապում է մարդկանց աղքատության հետ: Հանցավորության դեմ պայքարի հաջողությունն, ըստ նրա, ոչ թե խիստ պատիժն է, այլ հասարակության մեջ արդար կարգերի հաստատումը: Նանշում է, որ եթե հանցագործությունն առաջ բերող պատճառները մնում են անփոփոխ, անփոփոխ են մնում նաև այդ պատճառներով բերվող հետևանքները: Թ. Մորը կողմնակից էր հանցագործների նկատմամբ մարդասիրական վերաբերմունք ցուցաբերելուն [37]:

Օրենքների և դրանց կիրառման հանցածին ազդեցության հնարավորության խնդիրը արտահայտված է Ֆ. Բեկոնի գաղափարներում (1561–1626): Նա արդարությունը դիտել է որպես իրավական կարգավորման հիմնական որակներից մեկը: Այս պահանջի խախտումն անխուսափելիորեն հանգեցնում է հանցագործության: Այդ պատճառով էլ նա բռնության տեսակները դասակարգել է օրենքով քողարկված չարամտության և օրենքի դաժանության [29]:

18-րդ դարը պատմության մեջ մտավ որպես Լուսավորության դարաշրջան: Պատմական և փիլիսոփայական գիտությունը Լուսավորությունը բնութագրում են որպես ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու դարի ազդեցիկ համամշակութային երևույթ, անսահման հավատ մարդու բանականության նկատմամբ, հասարակությունը բանական իմացության վրա վերակառուցելու հնարավորություն [29]:

Թ. Հոբսը (1588–1679) գտնում էր, որ «բոլորի պատերազմը ընդդեմ բոլորի» որպես մարդկանց բնական վիճակի արդյունք, պայմանավորված է մարդկային երեք հիմնական որակներով՝

մրցակցության, անվստահության և փառքի նկատմամբ սիրով: Այն կարող է դադարել միայն իշխանության նկատմամբ ուժեղ վախով: Այդ դեպքում օրենքը մարդկանց ուղղում է բարության և երաշխավորում է նրանց անվտանգությունն ու հանգստությունը: Թ. Հոբսը իր գլխավոր աշխատությանը տվել է «Լեվիաֆան» (1651) անվանումը՝ պետությունը և նրա օրենքները համեմատելով համընդհանուր վախառաջացնող բիբլիական հրեշի հետ[29]:

Հոլլանդացի իրավաբան, սոցիոլոգ Հյուգո Գրոցին կարևորում էր հանցագործության դրդապատճառների, հանցարարքի սուբյեկտիվ կողմի վրա[37]:

Հանցավորության մասին գիտության զարգացման և կայացման գործընթացում առաջացել են շատ տեսություններ և դպրոցներ, որոնք տարբեր ձևով են բացատրել հանցավորության բնույթը և աղբյուրը և առաջարկել են այն կանխարգելելու տարբեր միջոցներ և եղանակներ: Համառոտակի անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Այսպես օրինակ, Վ. Ֆոկսը [98] առաջարկում է հակահասարակական վարք ուսումնասիրող քրեական դպրոցների հետևյալ դասակարգումը.

Դասական դպրոց. այստեղ հանցագործության լրջության գնահատականը տրվում է իրավաբանական տեսանկյունից:

Պոզիտիվիստական դպրոց, որի ներկայացուցիչները հանցագործությունը պայմանավորում են բազմաթիվ գործոններով, որտեղ իրավաբանական մոտեցումն ամբողջությամբ մերժվում է:

Ամերիկական դպրոցում մշակվում են հանցավորության պատճառների սոցիոլոգիական տեսությունները:

Սոցիալական պաշտպանության դպրոցին հարողները գտնում են, որ հանցագործության առաջացման պատճառ են բազմաթիվ սոցիալական գործոններ և գործող օրենսդրության պայմաններում այդ բոլոր գործոնները պետք է ուշադրության արժանան: Այս դպրոցը պոզիտիվիստական հայացքները լրացնում է իրավաբանական մոտեցմամբ:

Ներկայումս առավել ընդունված է հակահասարակական վարքի հետազոտման ժամանակաշրջանը բաժանել երեք դարաշրջանի՝ 1. Դասական, որը տևել է 18–րդ դարի կսերից մինչև 19–րդ դարի վերջը, 2.

Պոզիտիվիստական (19–րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի 20–ական թթ.) և 3. ժամանակակից կամ պլյուրալիստական (20-րդ դարի 30– ական թթ. մինչև մեր օրերը) [29]:

Ծ.Մոնտեսքյոն իր «Պարսկական նամակներ» (1721) և «Օրենքների հոգու մասին» (1748) աշխատություններում ելնում էր վարքի սոցիալական պայմանավորվածությունից: Նրա կարծիքով, մարդը ենթարկված է մոլորությունների և կրքերի, դա նշանակում է, որ ընդունակ է խախտել բնության և հասարակության օրենքները [29]:

Քրեական աշխարհահայացքի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործել քրեական իրավունքի դասական դպրոցը, որը ծագել է 18–րդ դարում: Հիմնվելով Մոնտեսքյոյի և այլ լուսավորիչների գաղափարների վրա՝ Չեզարե Բեկարիան ստեղծեց իր ժամանակի համար նոր տեսություն: Մեծ նշանակություն է ունեցել նրա «Հանցագործություն և պատիժ» նշանակալից աշխատանքը, որում նա հիմնավորում է հանցագործության դեմ պայքարելու ոչ այնքան պատժի միջոցներն, այլև բարքերի, կրթության բարելավումը: Նա ձևակերպել է քրեական իրավունքի դասական դպրոցի սկզբունքները, որոնցից շատերն ունեին քրեբանական բովանդակություն և արդիական հնչեղություն: Նախև առաջ պետք է նշել օրենքի նախականխող կամ կանխարգելող գործառույթը: Ըստ Չ. Բեկարիայի՝ օրենքները պետք է լինեն պարզ, հասկանալի, որպեսզի ազգության ողջ ուժը կենտրոնացված լինի նրանց պաշտպանությանը: Չեզարե Բեկարիան հերքում էր հանցագործության կրոնական պատճառականության մեկնաբանությունը և պնդում էր, որ հանցավորությունը մարդկանց կողմից վարքի կայուն կանոնները յուրացնելու անընդունակության արդյունք է: Հեղինակն այդ կանոնները յուրացնելու համար կարևորում է պատիժը [29]:

Հակահասարակական վարքի հետազոտության մեջ իր դերն է ունեցել կենսաբանական և սոցիոլոգիական պոզիտիվիզմը:

Կենսաբանական պոզիտիվիզմը քրեաբանության մեջ դրսևորվել է բազմաթիվ տեսություններում, որոնց միջև կարելի է նշել անտրոպոլոգիական տեսությունը, վտանգավոր վիճակի տեսությունը, սահմանադրական նախատրամադրվածության

տեսությունը, գենա–քրոմոսոմային տեսությունը: Համաձայն այդ տեսությունների՝ հանցավոր վարքի աղբյուրները գտնվում են մարդկանց հատուկ առանձնահատկություններում, որոնք նախատրամադրված են նորմայից շեղվելու: Այդ պատճառով հանցագործը ճանաչվում է որպես անլիարժեք (վնասակար) մարդ [37]:

20-րդ դարում կենսաբանական պոզիտիվիզմին քրեաբանության մեջ փոխարինելու եկավ սոցիոլոգիական պոզիտիվիզմը: Այդ պահից սկսած քրեաբանության զարգացման վրա մեծ ազդեցություն գործեց Է. Դյուրկհեյմի սոցիոլոգիական ուսմունքը. հանցավորությունը և նրա պատճառները մեկնաբանվել են սոցիալական ասպեկտում: Այդ փուլի առավել հայտնի տեսություններ են հանդիսանում սոցիալական ապակազմավորման տեսությունը (Դյուրկհեյմ), անոմիայի տեսությունը (Մերտոն), դիֆերենցիալ կապերի տեսությունը (Սաթերլենդ):

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած նկատվեց հանցավորության բնույթի կենսաբանական և սոցիոլոգիական միակողմանի բացատրության միտում: Քրեաբանության մեջ առաջացան մի քանի տեսություններ, որոնցում հանցավորության հիմնախնդիրը սկսեցին բացատրել երկու ուղղությունների միավորման հիման վրա: Ի հայտ եկավ այսպես կոչված ժամանակակից քրեաբանությունը, որին բնութագրում են այնպիսի հայտնի տեսություններ, ինչպիսին է ինտերակցիոնիզմը, մշակույթների կոնֆլիկտը, ստիգմատիզացիան, կարգավորման տեսությունը [37]:

Կրիմինոլոգիայում պոզիտիվիզմի շրջանի առաջին ներկայացուցիչը համարվում է իտալացի հոգեբույժ Չեզարե Լոմբրոզոն, որին երբեմն անվանել են «Կրիմինոլոգիայի հայր»: Նա ձևավորեց հանցագործների ուսումնասիրման հիմքերը՝ օգտագործելով կենսաբանական գիտելիքները և էվոլյուցիոն տեսությունները [66]:

Աշխատելով բանտում, նա ուսումնասիրել է ինչպես դատապարտյալների, այնպես էլ ոչ հանցագործների ֆիզիոլոգիական հատկանիշները՝ մեծ ուշադրություն դարձնելով ուղեղի կառուցվածքին: Նրա հետազոտությունների արդյունքը դարձավ «Հանցավոր մարդ» անվանմամբ գիրքը, որում նա հասարակության

դատին ներկայացրեց բնածին հանցագործի տեսությունը: Տեսության գլխավոր միտքը կայանում էր նրանում, որ հանցագործները իրենցից ներկայացնում են որոշակի ռեգրես մարդու զարգացման մեջ, օրինապահ քաղաքացիներից տարբերվում են հոգեպես և ֆիզիկապես [66]:

1913թ. անգլիացի քրեաբան Գորինգը ստուգեց Լոմբրոզոյի ուսումնասիրությունները՝ համեմատելով դատապարտյալներին Քեմբրիջի (1000 մարդ), Օքսֆորդի և Աբերդինի (959 մարդ) ուսանողների, զինծառայողների և քոլեջների (118 մարդ) ուսուցիչների հետ: Պարզվեց, որ ոչ մի տարբերություն չկանրանց և հանցագործների միջև: Նմանատիպ ուսումնասիրություններ և միևնույն արդյունքով իրականացրել է Վ. Խիլին 1915թ.-ին [55]:

Համաձայն քրոմոսոմային տեսության՝ հանցագործության պատճառը մարդու քրոմոսոմային համակարգում նկատվող շեղումն է: Տղամարդկանց մոտ նորմալ համակարգը XY համակարգն է, իսկ կանանց մոտ XX–ը: Հանցանք կատարած անձանց մոտ հայտնաբերվել է Y քրոմոսոմի ավելացում՝ XYY: Քանի որ Y–ը տղամարդու քրոմոսոմ է, ենթադրվում է, որ XYY քրոմոսոմային բանաձևով անձանց մոտ կան տղամարդու լրացուցիչ բնութագրիչներ (բարձր ագրեսիվություն, սեքսուալություն և այլն), այլ կերպ ասած՝ վարկած ծագեց այն մասին, որ այդ տիպի մարդիկ բնածին հանցագործներ են [55]:

Պոզիտիվիստական ուղղության շրջանակներում սկսեց զարգանալ հոգեբանական մոտեցումը: Այս ուղղության ներկայացուցիչները փորձեցին փնտրել հանցավոր վարքի նկատմամբ հոգեֆիզիոլոգիական նախատրամադրվածություն: Նրանց կարծիքով, դրդապատճառների ուսումնասիրությունը տալիս է հանցագործության պատճառների իրական բանալին: 20-րդ դարում Զ. Ֆրոյդի աշխատանքների ազդեցության տակ քրեաբանները հոգեբանական մեթոդների օգնությամբ ներթափանցեցին հանցագործի բնազդների և դրդապատճառների մեջ՝ հասնելով նրա ենթագիտակցությանը: Ենթագիտակցականում ընկած կոնֆլիկտները համարվեցին կատարված հանցագործությունների իրական պատճառները [37]:

Սոցիալական ապակազմավորման տեսությունը ձևակերպել է Էմիլ Դյուրկհեյմը: «Սոցիոլոգիայի մեթոդ» [39] գրքում նա հիմնավորեց թեզիս այն մասին, որ հանցավորությունը ոչ միայն նորմալ սոցիալական երևույթ է ցանկացած հասարակության համար և ավելին, հանդիսանում է նրա անհրաժեշտ և օգտակար տարր, այլ նաև որ հանցագործն ամենևին էլ հակասոցիալական էակ չէ: Իր մեկ այլ, «Ինքնասպանություն» աշխատանքում նա հիմնավորեց այն գաղափարը, որ հասարակության ապակազմակերպման վիճակի հիմքում ընկած է անոմիան [40]: Հանցավորությունը դիտելով որպես շեղվող վարքի տարատեսակ՝ Դյուրկհեյմն այն անվանեց հասարակության նորմալ գործոն, քանի որ այդպիսի վարքից խուսափել հնարավոր չէ [40]: Նորմալ է այն իմաստով, որ հասարակությունն առանց հանցագործության կլճանա: Հանցավորությունն այդ կերպ ներառվել է սոցիալական կազմակերպության հիմնական պայմանների թվում: Եթե հանցագործից վերցնեն հակահասարակական արարք կատարելու հնարավորությունը, ապա ինչպես կարող է իրեն դրսևորել տաղանդը, որի մտքերը և արարքները նույնպես պետք է ճանաչել նորմայից շեղում [40]: Այն հասարակության մեջ, որտեղ կա սոցիալական համախմբվածություն և մարդկային համերաշխություն, հանցավորությունը գտնվում է ցածր մակարդակի վրա: Բայց չափից ավելի տեխնիկական պրոգրեսի և անձնական հաջողության էկոնոմիզացիայի ազդեցության տակ սկսում են թուլանալ հիմնովին, հիմնարար բարոյական զգացմունքները, որոնց հիման վրա էլ ձևավորվում են հասարակությունը միավորող նորմերը [40]: Վերջիններս կորցնում են իրենց նշանակությունը՝ որպես մարդկային կրքերը զսպող սահմաններ, առաջանում է խառնաշփոթ և սոցիալական քաոս: Այդ կերպ, պետությունը, խոչընդոտելով հասարակական կյանքի չափից ավելի էկոնոմիզացիային, պետք է ձգտի պահպանել անհատական և կոլեկտիվ բարոյականության վրա հիմնված սոցիալական համախմբվածությունը,:

Դյուրկհեյմը կարծում էր, որ պատկերացումներն այն մասին, թե ինչպես պետք է իրենց պահեն, ինչն է առավել արժեքավոր և կարևոր կյանքում, ինչ է պետք ցանկանալ և ինչի ձգտել և այլն,

գոյություն ունեն օբյեկտիվորեն և հասարակության մեջ, որոնք էլ ազդում են մարդկանց վարքի վրա[40]:

Ըստ Դյուրկհեյմի, ինքնասպանության և հանցագործության հիմնական պատճառը մարդկանց միջև «սոցիալական համախմբվածության» առկայությունն ու բացակայությունն է: Որքան բարձր է սոցիալական համախմբվածության մակարդակն, այնքան ցածր է ինքնասպանությունների և հանցագործությունների տոկոսը, և հակառակը, որքան ցածր է սոցիալական համախմբվածությունն, այնքան բարձր է ինձնասպանությունների և հանցագործությունների տոկոսը [40]:

Հանցագործության սոցիալական պատճառների բացատրության համար մեծ նշանակություն ունի այն բացասական հասարակական երևույթի առկայությունը կամ բացակայությունը, որը Դյուրկհեյմը կոչում է «անոմիա» տերմինով. (թարգմանաբար՝ «աննորմատիվություն»):

Անոմիայի վիճակը Դյուրկհեյմը կապում է սոցիալական ապակազմավորվածության հետ: Այդ ապակազմավորումը կարող է առաջանալ ճգնաժամի կամ նույնիսկ բարեհաջող պայմաններում, երբ հասարակությունը ժամանակավոր ընդունակ չէ ազդել մարդու վրա, կամ խախտվում է «սոցիալական կարգավորումը» (ոչ ոք հստակ չգիտի իր ձգտումների, ցանկությունների սահմանները), ինչն էլ ուժեղացնում է վարքի աննորմատիվությունը (անոմիան):

Դյուրկհեյմի կողմից ձևակերպված «անոմիա» հասկացությունը զարգացրեց ամերիկացի սոցիոլոգ Ռ. Մերտոնը: Նրա տեսության հիմքը կազմում են երկու հիմնական հասկացություններ. «անոմիա» և հասարակության «սոցիալական կառուցվածք»: Ընդ որում առաջինը հանդիսանում է որպես երկրորդ հասկացության սահմաններում տեղի ունեցող գործընթացների հետևանք:

«Սոցիալական կառուցվածքի» հասկացությունն, ըստ Մերտոնի, «սոցիալական» չէ, այլ «սոցիալ–հոգեբանական», մաքուր հոգեբանական կատեգորիա: Այդ սոցիալական կառուցվածքը ձևավորվում է երկու փուլով. 1. առավել էական նպատակներից, որոնք իրենց առջև դնում են հասարակության սոցիալական խմբերը,

և 2. միջոցներից, որոնք կիրառվում են դրված նպատակներին հասնելու համար [102]:

Մերտոնն առաջ է քաշում իր հիմնական թեզիսն այն մասին, որ նպատակների և միջոցների՝ որպես սոցիալական կառուցվածքի ֆազաների միջև հավասարակշռության խախտումը հիմք է հանդիսանում անոմիայի վիճակի ծագման համար [102]:

Այսպիսով, եթե Դյուրկհեյմն անոմիան բնութագրում էր որպես «սոցիալական կարգավորման բացակայություն», ապա Մերտոնի համար անոմիան «մշակույթների կառուցվածքային տարաձայնություն» է, այսինքն՝ նպատակների միջև անհամապատասխանությունը, որոնք ամերիկյան մշակույթը դնում է անհատների առջև և այդ նպատակներին հասնելու արդյունավետ միջոցների առկայությունը [102]:

Ամերիկացի քրեաբան Տ. Սելլինը զարգացնում է իր՝ այսպես կոչված «սոցիալ–մշակութային տեսությունը» կամ հանցավոր վարքի տեսությունը: Նա հետևում է այն դրույթին, համաձայն որի մարդը ծնվում է որոշակի մշակույթի գոյության պայմաններում: Նա աշխարհ է գալիս կենսաբանորեն հարմարված, որպեսզի ստանա և յուրացնի գիտելիքներ իր և այլոց հետ իր հարաբերությունների մասին: Սելլինն ընդգծում է, որ անձնավորությունը հիմնավորվում է կենսաբանական ֆունդամենտի վրա, որը մեծ դեր է խաղում իր ձևավորման մեջ [98]:

Մշակույթների կոնֆլիկտն ընկած է Տ. Սելլինի կողմից առաջարկված հանցավորության բացատրության հիմքում: Սելլինը համարում է, որ երբ մշակութային արժեքները ձևավորվում են տարբեր միջավայրերում, կարող է ծագել մշակույթների կոնֆլիկտ, որը հաճախ զարգանում և դրսևորվում է հանցավոր վարքում [98]:

Դիֆերենցիալ կապերի տեսությունն առաջարկվել է ամերիկացի քրեաբան Էդվին Սաթերլենդի կողմից, այդ մասին շարադրելով իր՝ «Կրիմինոլոգիայի սկզբունքներ» գրքում (1939): Այն ստացել է նաև իր երկրորդ անվանումը՝ «վատ միջավայր» տեսություն: Դա հանցավոր վարքի վերաբերյալ առաջին նշանակալից սոցիոլոգիական տեսությունն էր, որը ձեռք բերեց շատ կողմնակիցներ և առաջ բերեց լուրջ գիտական քննարկումներ, ինչը

հնարավորություն տվեց մոտենալ անհատների հանցավոր վարքի պատճառների բացատրությանը [98]:

Դիֆերենցիալ կապերի տեսությունը համարվում է առաջին սոցիոլոգիական տեսությունը, որի ուշադրության կենտրոնում կանգնած են սոցիալական հարաբերությունների հաճախականության, ինտենսիվության և նշանակության հարցերը, այլ ոչ անձի առանձնահատկությունները: Համաձայն այս տեսության՝ հանցավոր վարք սովորում են նրանցից, ում հետ կապ ունեն: «Վատ միջավայրը» հանդիսանում է դելինկվենտ վարքի խթան կամ ստիմուլ [98]: Փաստորեն սահանցավոր վարքի տեսություն է, որի հիմքում ընկած են ուսուցման սկզբունքները կամ տեսությունը:

Դիֆերենցացված կամ տարբերակված կապերի տեսությունը ելնում է հետևյալ դրույթներից.

1. Հանցավոր վարքագիծ սովորում են:

2. Հանցավոր վարքագծի ձևավորումը տեղի է ունենում խմբերում, որտեղ հարաբերություններն ունեն անմիջական, անձնային բնույթ:

3. Հնարավորությունը, որ անհատը կընտրի պարբերական հանցավոր վարք, պայմանավորված է նրանով, թե ինչքան հաճախ և անմիջական են նրա շփումներն այդպիսի վարքի ձևերի հետ:

4. Անձը դելինկվենտ է դառնում նրա մոտ օրենքի խախտմանը նպաստող գնահատականների տիրապետման պայմաններում:

5. Հանցավոր վարքի գործընթացն իր մեջ ներառում է բոլոր այն մեխանիզմները, որոնք գործում են ուսուցման ցանկացած այլ գործընթացում [98]:

Սուբկուլտուրայի տեսության համաձայն՝ մարդու հանցավորությունը զարգանում է խմբում, որի անդամներն ունեն կայուն արժեքային համակարգ, և որոնք տարբերվում են հասարակության մեջ ընդունված արժեքային համակարգից: Այդ կերպ, անձնավորությունը զարգանում է իր շրջապատի արժեքների և նորմերի համապատասխան: Սուբկուլտուրայի տեսությունն օգտագործում է երկու հիմնական մոտեցում. և՛ դիֆերենցիալ կապը, և՛ անոմիան: Կոենը հետաքրքրվելով դելինկվենտության հիմնախնդրով՝ գրում է հայտնի աշխատություն

սուբկուլտուրաներում դելինկվենտ վարքի զարգացման մասին: Նրան հետաքրքրում էին ոչ այնքան պատճառները, թե ինչու է անձը դառնում իրավախախտ, որքան անհատի ընդհանուր պատկերացումների, ընդհանուր զգացմունքների զարգացումը խմբի նկատմամբ: Դելինկվենտ սուբկուլտուրան հաճախ զարգանում է հասարակության սոցիալ –տնտեսական ցածր շերտերում [98]:

Ստիգմատիզացիայի տեսությունը հիմնված է այն վարկածի վրա, որ անհատը ձևավորվում է որպես հանցագործ, քանի որ հասարակությունը նրան «հանձնարարում է» այդպիսի դեր: Ամերիկացի գիտնական Ֆ. Տաննենբաումը «Հանցավորություն և հասարակություն» (1938) աշխատանքում փորձել է ապացուցել, որ հասարակության ոչ ճիշտ հակազդումը շեղվող վարքի նկատմամբ հենց այն գործոնն է, որը պայմանավորում է այդպիսի վարքը: Ըստ էության խոսքը գնում է հասարակության կողմից մարդու քրեականացման մասին: Տաննենբաումի դիրքորոշումը կայանում է նրանում, որ եթե անչափահասին սկսում են բացասական գնահատել, ապա նա աստիճանաբար սպառում է ցանկացած մարդուն հատուկ դրական որակները [98]:

Հանրորեն շատ վտանգավոր արարքներ անչափահասների կողմից կատարվում են որպես չարաճճիություն: Տաննենբաումի հիմնադրույթն ընկած է ստիգմատիզացիայի տեսության հիմքում: Համաձայն այս տեսության՝ սոցիալական հսկողությունն առաջացնում է հանցագործություն. հանցագործության դեմ պայքարը, իրավախախտումը կանխելու փորձերը իրականում ստեղծում են հանցագործություն: [98]:

Ստիգմատիզացիայի տեսության զարգացումը շարունակվեց ամերիկյան քրեաբաններ Տ. Սելլինի և Գ. Բեկկերի աշխատանքներում: Ըստ Գ. Բեկկերի, շատ դեպքերում սոցիալական նորմերի առաջնային խախտումը կրում է պատահական բնույթ: Հետո իրավախախտման շարժիչ ուժ է դառնում գործողությունների և դրանց արդյունքների հետ կապված հաճույքը [102]: Բանտարկությունն ամրապնդում է մարդու հանցագործի կարգավիճակը: Հանցավոր կարիերայի գագաթնակետը հանդիսանում է

մարդու մուտքը հանցագործների խումբ, որում մաքսիմալ իրականացվում են նրակրիմինալ հնարավորությունները [102]:

Ու.Կ. Ռեկլեսսի կողմից առաջարկված կառավարման տեսությունը ելնում է արտաքին և ներքին հսկող համակարգերի գոյության փաստից [97]: Այս տեսության հիմքում ընկած են արտաքին և ներքին իմպուլսների մասին պատկերացումները, որոնք դրդում են կամ դելինկվենտ, կամ օրինապահ վարքի: Եթե ներքին և արտաքին իմպուլսները դրդում են դելինկվենտ վարքի, ապա արդյունքը կլինի դելինկվենտ վարք: Ներքին կառավարման համար անհրաժեշտ է ինքնագիտակցություն, ինքնակառավարում, ուժեղ «Ես», լավ զարգացած սուպերէգո, ֆրուստրացիա ապրելու բարձր ընդունակություն, պատասխանատվության բարձր զգացում, նպատակաուղղվածություն [97]: Արտաքին կառավարումն իրենից ներկայացնում է բարդ մեխանիզմ, որը գործում է անհատի սոցիալական միջավայրում և նրան պահում է սոցիալական նորմերի սահմաններում:

Կլարկը և Կորնիշը փորձեցին միավորել հանցավորության մոտեցումները որոշումների ընդունման տեսության դիրքից: Նրանք առաջ քաշեցին երեք հիմնական ենթադրություններ. [22]

1. Հանցագործներն իրենց համար շահույթ են փնտրում՝ որոշում ընդունելով, որոնք որոշ չափով ռացիոնալ են համարվում:

2. Պետք է բացատրել ոչ թե հանցագործներին, այլ հանցագործությունը, և այդ դեպքում պետք է կենտրոնանալ հանցագործության և իրադրության յուրահատկության վրա:

3. Հանցագործության դեպքը տարբերում է հանցագործության մեջ ներառված լինելուց: Իրադրությունը հանցավոր արարք է, որի կատարման օգտին որոշակի վայրում, որոշակի ժամանակ ընտրություն է կատարվել, և այդ պայմանները որոշում են տարբերությունները մոտիվներում, եղանակներում և շահագրգիռ անձանց միջև: Ներառվածությունը հանդիսանում է ժամանակի տարբեր պահերին ընդունված որոշումների արդյունք:

Խոգանը և Ջոնսը առաջարկեցին հանցավոր վարքի սոցիալ-վերլուծական տեսությունը: Նրանց տեսանկյունից անձի կարևորագույն կառույցներ են հանդիսանում [22].

1. Ես հիմնադրույթը կամ նույնությունը, այսինքն անհատի պատկերացումն իր մասին, որն առաջանում է «ծնող–երեխա» փոխհարաբերության ժամանակ, և նրա պատկերացումն այն մասին, թե ինչպիսին կուզենար երևալ ուրիշների աչքերում:

2. Ինքնաներկայացում կամ դեր խաղալու տակտիկա, որը կիրառվում է «Ես» կերպարի մարմնավորման համար:

3. Անհատի ռեֆերենտ խումբը, որը հանդիսանում է ինտերնալիզացված պատկերացում նշանակալից մարդկանց սպասումների մասին:

4. Ընկալունակության և մտահասության միջանձնային հնարները, որոնք վերաբերում են ուրիշների սպասումները ճանաչելու ունակությանը և դերի կատարման միջոցով դրանք «Ես» կերպարին կապելուն: Այս կառույցների համար հիմք են հանդիսանում համընդհանուր մարդկային պահանջմունքները ուշադրության և հավանության արժանացնելը, կարգավիճակը և կանխամտածվածությունը:

Մարդու վարքի հոգեբանական տեսությունները հիմնական ուշադրություն են դարձնում անձնավորությանը: Հոգեբանները մշակել են դեվիանտվարքի բացատրությունը:

Շեղվող (դեվիանտ) վարքը դա անձի կայուն վարքն է, որը շեղված է առավել կարևոր սոցիալական նորմերից, իրական վնաս է պատճառում հասարակությանը կամ հենց իրեն՝ անձին, ինչպես նաև ուղեկցվում է նրա սոցիալական դեզադապտացիայով [47]: Տարբերում են շեղվող վարքի հետևյալ խմբերը. հակահասարակական (դելինկվենտ) վարք, ասոցիալ (անբարոյական) վարք, աուտոդեստրուկտիվ (ինքնաքայքայիչ) վարք:

Հակահասարակական (դելինկվենտ) վարքը դա իրավական նորմերին հակասող վարք է, որը սպառնում է հասարակական կարգին և շրջապատող մարդկանց բարեկեցությանը [47]:

Հակահասարակական վարքի հոգեբանական կողմի ուսումնասիությունը միայն մեզ հնարավորություն կտա բացահատել այն խորքային արմատները, որոնք ընկած են այդ վարքի հիմքում:

Մարդու վարքը մեկնաբանվում է տարբեր հոգեբանական տեսությունների կողմից, որոնցից ոչ մեկը միանշանակորեն ճիշտ կամ սխալ չէ, և որոնցից բոլորը կարող են նպաստել ամբողջացնելու վարքի ըմբռնումը:

Ինչո՞ւ են մարդիկ նույն իրադրության մեջ իրենց տարբեր ձևով պահում և ինչո՞ւ է անհատի վարքը կայուն մնում տարբեր իրադրություններում: Այս հարցերի պատասխանները տրվում են հումանիստական, բիհևիորիստական և գծային տեսություններում:

Հումանիստական տեսություններն անձնավորության վրա կենտրոնացած տեսություններ են, որոնք ընդգծում են մարդկային էակի ստեղծագործական կամ ինքնաբուխ ներուժը [54]:

Հումանիստական հոգեբանության ներկայացուցիչ Ա.Մասլոուն իր տեսությունը հիմնեց առողջ, ստեղծագործող մարդկանց բնութագրերի վրա, ովքեր օգտագործում են իրենց ողջ տաղանդը, ընդունակությունները [54]: Համաձայն Մասլոուի՝ առողջ մարդիկ պայքարում են հանուն առաջընթացի և հասնում ինքնակատարելագործման: Նրանք զարգացնում են սեփական ներուժն ամբողջությամբ, մյուսների հետ մրցելու փոխարեն, յուրաքանչյուրը պայքարում է դառնալ ամենալավ «Ես»-ը, որ կարող է լինել: Յուրաքանչյուր անձնավորության մեջ կան իմպուլսներ իր ներուժի իրացման նկատմամբ, բայց որովհետև մարդու բնազդները կենդանիների համեմատ թույլ են, անձնավորության իմպուլսները կարող են խեղաթյուրվել հասարակության, սովորության կամ հանցավոր ներգործության կողմից [54]: Մասլոուն պահանջմունքների երկու խումբ է առանձնացնում. հիմնական պահանջմունքներ (ֆիզիոլոգիական և հոգեբանական) և մետապահանջմունքներ (արդարություն, բարիություն, գեղեցկություն, կարգուկանոն): Ի տարբերություն մետապահանջմունքների, հիմնական պահանջմունքները հիերարխիկ ձևով կազմակերպված են, այսինքն՝ որոշները նախորդում են մեկը մյուսին: Մետապահանջմունքները կարող են փոխարինել մեկը մյուսին՝ կախված հանգամանքներից [54]: Դրանք իրական են, և երբ դրանք չեն հանդիպում, մետախտահարումները կամ

մետապաթոլոգիաները, ինչպիսիք են օտարացումը, տառապանքը և ցինիզմը, կարող են զարգանալ:

Հումանիստական հոգեբանության մեկ այլ ներկայացուցիչ Կ. Ռոջերսը Ֆրոյդի պես իր տեսությունը հիմնել է հուզականորեն անհանգիստ մարդկանց հետ աշխատելիս: Ռոջերսը շատ էր տպավորված անհատի բնածին միտումներով, որոնք ուղղված են զարգացմանը, հասունացմանը, դրական փոփոխմանը: Ըստ նրա՝ մարդու օրգանիզմի դրդող ուժ է հանդիսանում կատարելագործման միտումը, ինքն է ընտրում զարգանալ, թե անկում ապրել: Նրա տեսության կենտրոնական հասկացությունը «Ես»-ն է: «Ես»–ի ըմբռնումն ազդում է աշխարհի ըմբռնման և վարքի վրա [54]: Սակայն «Ես» հասկացությունը չի արտացոլում իրականությունը միանշանակորեն: Համաձայն այս տեսության՝ առողջ է այն անձնավորությունը, ում «Ես» հայեցակարգը համապատասխանում է զգացմունքներին, մտքին և փորձերին, վարքին, հակառակ դեպքում առաջանում է անհանգստություն:

Ռոջերսն իր տեսության մեջ առաջ է քաշում իդեալական «Ես» հակացությունը: Դա այն «Ես»–ն է, որը մենք ուզում ենք լինել: Ինչքան մոտ է իդեալական «Ես»–ը իրական «Ես»–ին, այնքան անձնավորությունը առողջ և երջանիկ է դառնում: Իդեալական «Ես»–ի և իրական «Ես»–ի միջև տարաձայնությունը առաջացնում է դժբախտ և անբավարարված անձ: Այսպիսով, անհամապատասխանության երկու տեսակներ կարող են զարգանալ. մեկը «Ես»–ի և իրական փորձերի միջև, մյուսը՝ «Ես»–ի և իդեալական «Ես»–ի միջև [54]: Ռոջերսը «Ես»–ի զարգացման համար կարևորում էր ոչ պայմանական դրական հայացքը: Այս դեպքում նրանք արժեքավորված են զգում ծնողների և մյուսների կողմից, նույնիսկ եթե նրանց զգացմունքները, դիրքորոշումները և վարքը իդեալականին չեն համապատասխանում: Եթե ծնողներն առաջարկում են միայն պայմանական դրական հայացք, երեխայի ես–ը կարող է խեղաթյուրվել: Այսպիսով, Ռոջերսը «Ես»–ի ոչ նորմալ զարգացման պատճառ է համարում անհամապատասխանությունները և դաստիարակության պայմանական դրական հայացքի ընտրությունը, որն էլ կարող է հակահասարակական վարքի հիմք հանդիսանալ [54]:

Ամփոփելով հումանիստական տեսությունը՝ նշենք, որ այն չի ապահովում վարքի, այդ թվում՝ հակահասարակական վարքի պատճառների վերլուծությունը: Իհարկե անձնավորության ես հասկացությունը կարող է վարքի դետերմինանատ հանդիսանալ: Բայց թե ինչպես է «ես» հայեցակարգն ազդում վարքի վրա, ինչն է պայմանավորում «ես» հայեցակարգը, սաչի պարզաբանվում:

Բիհևիորիստական վարքագիտական հոգեբանությունը [97] գիտություն է, որն ուսումնասիրում է մարդու վարքը, այսինքն՝ նրա արարքներն ու բառերն, ինչպես կյանքի ընթացքում ձեռքբերված, այնպես էլ բնածին: Բիհևիորիստական հոգեբանության հիմնադրումը կապում են այնպիսի անունների հետ, ինչպիսիք են Է. Թորնդայկը, Ջ. Ուոտսոնը, Բ. Սքիները:

Անձնավորությունը բիհևիորիզմի տեսանկյունից (Ջ. Ուոթսոն) իրենից ներկայացնում է բարդ օրգանիզմ, որն անընդմեջ հարմարվում է իրեն շրջապատող միջավայրին: Այդ հարմարման գործընթացն էլ կազմում է անձնավորության վարքը, որը դրսևորվում է բնածին և ձեռքբերված «հնարքների», «սովորությների», բնազդների և տարբեր հակազդումների օգնությամբ:

Առանձնացնում են ընդհանուր գործոններ, որոնք կարմիր թելով անցնում են մարդկային ողջ գործունեության միջոցով: Յուրաքանչյուր հարմարման ակտում միշտ կա հակազդում կամ գործողություն և գրգռիչ կամ իրադրություն, որոնք առաջ են բերում այդ հակազդումը: Իրադրությունն իրենից ներկայացնում է գրգռիչների բարդ խումբ:

Ջ. Ուոթսոնն ողջ մարդկային գործունեությունը բաժանում է ժառանգական հակազդումների (հուզական և բնազդային) և ձեռքբերված հակազդումների (սովորություններ): Վարքի հիմնական, բնածին ձևը համարում են բնազդը: «Հույզը ողջ օրգանիզմի թաքուն գործունեությունն է, իսկ բնազդն իրենից ներկայացնում է տեսանելի, կոնկրետ և սահմանափակ գործողություն» [97, էջ 225]: Ողջ բնազդային գործունեության գլխավոր դերը, ըստ Ուոթսոնի, կայանում է նրանում, որ այն ուսուցման գործընթացի ելակետ է հանդիսանում: Հեղինակը դա

բացատրում է նրանով, որ եթե առարկան չի առաջացնում ոչ՛ դրական, ոչ՛ բացասական հակազդում, ապա դրա նկատմամբ հնարավոր չէ ձևավորել ոչ մի սովորություն: «Մարդկային ողջ գործունեությունը,-պնդում է Ուոթսոնը,-հիմնված է սովորույթների վրա: Բնազդների մեջ հակազդումների կազմը և կարգը ժառանգված է, իսկ սովորության մեջ և՛ մեկը, և՛ մյուսը ձեռք է բերված տվյալ մարդու կյանքի ընթացքում» [97, էջ 259]:

Թե ինչպես են օրգանիզմները սովորում, չկա ոչ մի պարզ պատասխան այդ հարցին, բայց մենք կարող ենք սկսել մեր քննարկումը կենտրոնանալով ասոցիատիվ ուսուցման վրա: Երկու իրադրությունների միջև նոր ասոցիացիա կամ կապ ստեղծելը ուսուցման հիմնական ձևն է: Գոյություն ունի ասոցիատիվ ուսուցման երկու ձև. դասական պայմանականությունը և օպերանտ պայմանականությունը: Դասական պայմանականության (Պավլով) մեջ օրգանիզմը սովորում է, որ մեկ իրադրությանը հետևում է մյուսը: Օպերանտպայմանականության (Սքիներ) մեջ օրգանիզմը սովորում է, որ տված պատասխանին հետևում է հատուկ հանգամանք:

Բ.Ֆ. Սքիներն առաջ քաշեց վարքի տեսություն՝ հիմնված ամրապնդման սկզբունքի վրա [54]: Այս տեսությունը նկարագրում է դրա հետևանքների՝ պարգևատրության և պատժի ազդեցությունը վարքի վրա: Նա պնդում է, որ վարքի պատճառներն անհատի համար արտաքին են: Սքիները ժխտում էր վարքի ներքին բացատրությունները: Այդ պատճառով էլ նրա տեսությունը կոչվում է ռադիկալ բիհևիորիզմ [54]:

Բ.Ֆ. Սքիները «ուսուցումը» չէր համարում էկվիվալենտ «օպերատիվ պայմանականությանը»: «Ուսուցում» հասկացության օգտագործումը մեծ մասամբ ենթադրում է վարքի ձևավորում, այն ժամանակ, երբ «օպերատիվ պայմանականություն» հասկացության օգտագործումը ենթադրում է վարքի և՛ ձևավորում, և՛ ամրապնդում [54]:

Մարդիկ հարմարվում, ադապտացվում են,-ընդգծում է Սքիները: Նրանք սովորում են հարմարվել իրենց շրջապատին: Մարդիկ ավելի քան ցածրակարգ կենդանիները, որոնք արձագանքում են միջավայրին բնազդներով, ընդունակ են սովորել արձագանքել

տարբեր կերպ՝ կախված նրանից, թե ինչը արդյունավետ կլինի տվյալ իրադրության մեջ: Ըստ հեղինակի՝ հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ վարքը որոշվում է միջավայրային հետևանքներով, որոնք կախված են վարքից: Սքիները օպերանտ պայմանականությունը նկարագրում էր որպես վարքի ընտրություն նրա հետևանքների միջոցով [54]: Վարքային ընտրությունը տեղի է ունենում ձգտողաբար և չի պահանջում գենետիկական մեխանիզմների մասնակցություն: Ըստ էության դա փորձից սովորելու ընդունակություն է:

Սքիների կարծիքով գոյություն ունի հակազդման հաճախականությունը բարձրացնելու երկու միջոց. դրական ամրապնդում և բացասական ամրապնդում: Հակազդման հաճախականությունն իջեցնելու երկու ուղի գոյություն ունի. պատիժ և մարում [54]: Այլ կերպ ասած, մարդը հարմարվում է հաճախ անելով այն, ինչը բարձրացնում է բարենպաստ արդյունքները (դրական ամրապնդում) կամ իջեցնում է ոչ բարենպաստ արդյունքները (բացասական ամրապնդում): Եվ մարդը հազվադեպ է անում այն, ինչը բերում է անբարենպաստ հետևանքների (պատիժ) կամ թույլ չի տալիս հասնել բարենպաստ արդյունքների (մարում):

Վարքը, որը հարմարվողական է հանդիսանում տվյալ միջավայրում, ամրապնդվում է: Ամրապնդումը համապատասխանում է նրան, ինչը մենք անվանում ենք պարգևատրում: Որոշ ամրակայումներ բնածին են, դրանք կոչվում են առաջնային ամրապնդումներ: Մյուսները, օրինակ՝ գովասանքը, արդյունավետ են դառնում միայն նրանից հետո, երբ յուրացվում է դրանց արժեքը [54]: Այդ յուրացված պարգևատրությունները կոչվում են երկրորդական ամրապնդումներ: Դրական ամրապնդում է համարվում այն գրգիռը, որը ցանկալի է դարձնում վարքը: Բացասական ամրապնդում է հանդիսանում, որը վարքն անցանկալի է դարձնում:

Նեգատիվ ամրապնդումը հաճախ ուղեկցվում է պատժով: Պատիժը առաջ է բերում տագնապ և վախ, որոնք պահպանվում են նույնիսկ այն ժամանակ, երբ դադարեցված է անցանկալի վարքը: Այդ հույզերը հաճախ տարածվում են մյուս իրադրությունների վրա:

Գծային տեսությունները [54] մարդու էությանը անհիմն պահանջներ ներկայացնելու փոխարեն պնդում են, որ մարդու վարքը կարող է կազմակերպվել տևական բնութագիրների համաձայն, որոնք կոչվում են գծեր: Գծային տեսության ներկայացուցիչ Գորդոն Օլլպորտի ուսումնասիրության հիմնական ուշադրության առարկան դարձան անձնավորության գծերը: Անձնավորության մեջ գլխավորը նա համարում էր «Ես»-ը: Անձնավորության անընդհատության հիմնադրույթը ժամանակի մեջ և իրադրություններում կենտրոնական տեղ է զբաղեցնում անձնավորության տեսության մեջ [54]:

Անձնավորությունն անհատի ներսում այնպիսի հոգեֆիզիկական համակարգերի դինամիկ կառույց է, որով որոշում են նրա համար բնութագրական վարքը և մտածողությունը, որոնք սահմանում են նրա հարմարումը շրջապատող միջավայրին:

Ըստ Օլլպորտի՝ գծերի ամբողջությունը ապահովում են մարդու վարքի կայունությունը, նրա ճանաչելիությունը, կանխատեսելիությունը: Տարբեր ստիմուլներ առաջացնում են միանման պատասխան հակազդումներ [54]: Անձնավորության գծերը չեն գտնվում անշարժ վիճակում: Իրադրությունները, որոնցում անձնավորությունը ամենից հաճախ է հայտնվում, որպես կանոն, նրանք են, որտեղ նա ակտիվորեն ձգտում է ընդգրկվել [54]:

Խառնվածքը առաջնային գենետիկական նյութն է, որից կառուցվում է անձնավորությունը: Բնավորությունը ավանդական հասկացություն է և զուգորդվում է արժեքների համակարգի հետ, որոնց հետ համապատասխան գնահատվում են անձնավորության արարքները: Օլլպորտի ձևակերպմամբ, բնավորությունը գնահատված անձնավորությունն է, իսկ անձնավորությունը՝ չգնահատված բնավորությունն է [54]:

Հոգեվերլուծական տեսության հիմնադիր Զիգմունդ Ֆրոյդը 20–րդ դարի ինտելեկտուալ դեմքերից է: Չնայած իր թերություններին որպես գիտական տեսության, անձնավորության մասին հոգեվերլուծական մոտեցումը մնում է անձնավորության ամենաբազմակողմանի և ազդեցիկ այն տեսությունը, որն երբևէ ստեղծվել է: Դրա ազդեցությունը տարածվել է հոգեբանությունից

այն կողմ. սոցիալական գիտությունների, մարդկության, արվեստի և հասարակության վրա: Ըստ այդ տեսության, մարդու ակտիվության հիմնական շարժիչ ուժերը երկուսն են. սեռական կամ կյանքի բնազդը (էրոս) և մահվան բնազդը (թանատոս): Առաջինով պայմանավորված է մարդու ստեղծագործական ակտիվությունը, երկրորդով՝ նրա ագրեսիվությունը [5]: Ըստ նրա սեռական և ագրեսիվ դրդապատճառները անձնավորության ամենակարևոր բնազդային դետերմինանտներն են կյանքի ընթացքում:

Մշակույթը, քաղաքականության զարգացումը ենթադրում են մարդկանց բնազդներից հեռացնելու անվերջ աշխատանք: Բայց երբ մշակույթը չափից ավելի ոչնչացնում է բնազդները, դրանք դուրս են գալիս, ինչպես Ջինը շշից և ոչնչացնում նրան [5]: Ֆրոյդը գտնում էր, որ անգիտակցականը մարդկային հոգևոր ճորտության պատճառը և հիմքն է:

Հեղինակը մարդու հոգեկանը բաժանելով 3 մակարդակների՝ «Գեր-Ես», «Այն», «Ես», նշում էր, որ այս երեքը փոխազդում են վարքը կառավարելու համար: Քանի որ մարդը ապրում է հասարակության մեջ, նա չի կարող ազատվել «Գեր-Ես»-ի ազդեցությունից, և քանի որ նա կենդանի է, նա չի կարող ազատվել բնազդների ուժից: Ելքը այդ ուժերի գոյության և ազդեցության իմաստավորման մեջ է և նրանց միջև համաձայնություն հաստատելը: Նա մարդուց պահանջում էր անընդհատ աշխատանք «Այն»–ը «Ես»–ի վերածելու մեջ: Նա համոզված էր, որ միակ հնարավոր և նորմալ ճանապարհը մարդկության համար ապրել, անընդհատ քո մեջ ամրապնդելով ինքնագիտակցական «Ես»-ը, ազատվելով անգիտակցականի ճնշումից [5]:

Ալֆրեդ Ադլերի [69, 70] անհատական հոգեբանությունը հնարավորություն է տալիս հասկանալ շեղվող վարքի մի շարք հոգեբանական պատճառներ: Ադլերի տեսության հիմնական հանգույցն այն է, որ անձի ձգտումը գերազանցության երբեք չի մարում: Ալֆրեդն անհատականության զարգացման հիմնական գործոն է համարում կյանքի նպատակը: Համաձայն հեղինակի՝ մարդու մոտիվացիայի հիմքը ձգտումն է գնալ անլիարժեքության զգացումից դեպի կատարելության: Ընդհանուր տեսքով դա մյուսների նկատմամբ գերազանցության հասնելու նպատակն է:

Գերազանցության հասնելու նպատակը ծագում է կյանքի առաջին տարիներին որպես հակազդում անլիարժեքության զգացման կամ բարդույթի նկատմամբ, որն իր հերթին առաջ է գալիս սեփական թուլությունը զգալուց [69]: Թուլությունն ապրվում է որպես անլիարժեքության զգացում: Անլիարժեքության զգացումը կամ բարդույթը առաջանում է, երբ «Ես»–ի և «Ես իդալ»-ի միջև կա անհամապատասխանություն [70]: Անլիարժեքության զգացման է բերում նաև անհամապատասխանությունն իր և աշխարհի մասին պատկերացումների միջև: Ըստ Ադլերի՝ ապրել նշանակում է զգալ անլիարժեքություն [70]: Այդ զգացումն, ըստ Ադլերի, առաջին անգամ ծագում է 4–5 տարեկանում: Դա ուժեղացնում են 2 հիմնական գործոններ. առաջին. դրանք բնածին թերություններն են (առողջության թուլություն, ֆիզիկական թերություններ, չափից փոքր հասակը): Երկրորդ՝ դաստիարակությունն է ընտանիքում (երեխայի նկատմամբ ոչ բավարար սերը): Համաձայն Ադլերի հիմնադրույթի՝ մարդուն որոշում է ոչ թե ժառանգականությունն, այլ միջավայրը: Մարդիկ գնում են դեպի այն նպատակները, որոնք նրանք են ընտրում, այն նպատակները, որոնք նրանց տեղ կտան այս աշխարհում, կապահովեն նրանց անվտանգությունը և կպահպանեն ինքնահարգանքը [69]:

Կ. Հորնին վերանայեց հոգեվերլուծական տեսությունը, որպեսզի առանձնացնի միջանձնային գործոնները: Նա համարում էր, որ անգիտակցականն անձի ամենակարող դետերմինանտն է: Սակայն նա հերքում էր Ֆրոյդի այն դրույթը, որ անգիտակցականը կազմված է լիբիդոյի արտահայտմանը վերաբերող կոնֆլիկտներից [54]: Համաձայն Հորնիի, անձնավորության շարժիչ ուժ են հանդիսանում ոչ թե սեռական կոնֆլիկտներն, այլ ամենակարևոր կոնֆլիկտները հիմնվում են չլուծված միջանձնային պրոբլեմների վրա: Նա համաձայնվում է Ֆրոյդի այն մտքի հետ, որ հիմնարար կամ ֆունդամենտալ կոնֆլիկտները սկիզբ են առնում վաղ մանկության տարիներին, և այդ կոնֆլիկտները սևեռվում են ծնողների և երեխաների փոխհարաբերությունների վրա:

Կարող է իդեալական համարվել, երբ երեխան գտնվում իր ծնողների սիրո, ուշադրության և պաշտպանության ներքո: Երբ

երեխան անօգնական է, առաջանում է հիմնային տագնապայնություն [54]: Արհամարանքը և մերժումը երեխային դարձնում են չար, որը Հորնին անվանում է հիմնային թշնամություն: Սակայն երեխան չի կարող արտահայտել իր ճնշված թշնամությունը, ինչը բարձրացնում է տագնապը [54]: Մի կողմից երեխան ծնողների կարիքն ունի և ուզում է մոտենալ նրանց, մյուս կողմից նրանց ատում է և ուզում է նրանց պատժել: Այս կոնֆլիկտը հաճախ նևրոզի պատճառ է դառնում [54]:

Դ.Մ. Զինովևը [46] նշում է, որ տագնապը հանդիսանում է օտարացման հուզական ախտանիշ: Տագնապն ըստ էության իրականացնում է ցավի ֆունկցիա մարդու կենցաղի հոգեբանական մակարդակում: Տագնապայնությունը հանդիսանում է օտարացման իրական ախտանիշ [46]:

Լ.Ս. Վիգոտսկին [33] մարդու վարքը դիտում է որպես հոգեկան զարգացման երկու տարբեր գործընթացների արդյունք. մի կողմից տեսակների էվոլյուցիայի գործընթաց, որը բերում է մարդ տեսակի առաջացմանը, մյուս կողմից որպես պատմական զարգացման գործընթաց, որի միջոցով նախամարդը դարձավ քաղաքակիրթ [33]: Համաձայն Լ.Վիգոտսկու կուլտուր-պատմական և հոգեկան բարձրագույն ֆունկցիաների տեսության՝ երեխայի հոգեկանի զարգացման բարձրագույն ֆունկցիաների զարգացման ողջ բարդությունը կայանում է նրանում, որ այս երկու ձևերն օնտոգենեզում կազմում են մեկ, բայց բարդ գործընթաց [33]:

Վարքի զարգացման երեք աստիճաններն ընդգրկում են վարքի բոլոր գլխավոր ձևերը. առաջին աստիճանը կազմավորում է բնազդը: Նրա վրա է ձևավորվում երկրորդ աստիճանը՝ սովորությունների կամ պայմանական ռեֆլեքսի աստիճանը, այսինքն՝ սովորած, անձնական փորձում ձեռքբերված պայմանական հակազդումները [33]: Ավելի բարձր մակարդակում կառուցվում է երրորդ աստիճանը, որը նոր պայմանների և պատկերացումների նկատմամբ կատարում է հարմարման գործընթաց:

Քրեահոգեբան Կ. Բարտոլը նշում է, որ ներքին միտումների զարգացման մեջ կարևոր դեր են խաղում սոցիալական միջավայրը և հասակակիցների խմբերը, սակայն մարդը ավտոմատ կերպով չի

պատճենահանում շրջապատողների վարքագծային մասերը [20]: Նա հավաքում և մշակում է լրատվություն այլ մարդկանց գործողությունների և հակազդումների մասին և դրանց հիման վրա ձևավորում են վարքի իր սեփական չափանիշները [20]: Այս ամբողջ կենտրոնացված լրատվությունից ձևավորվում են անձնական էտալոններ կամ չափանիշներ, որոնց օգնությամբ մարդիկ չափում և գնահատում են իրենց սեփական վարքը:

Կ. Բարտոլը համոզված է, որ մեր համոզմունքները, արժեքներն, ինքնազգացողությունն ու մտքերը մեր վարքի գլխավոր որոշիչները կամ դետերմինանտներն են [20]: Մարդկանց մեծ մասը ձգտում է ապրել համաձայն ներքին ստանդարտների և փոխազդել՝ այլ մարդկանց հետ համապատասխան մարդկային բնույթը տեսնելով: Եթե մեր ընկերները և նրանք, ովքեր մեզ համար նմանակման օրինակ են հանդիսանում, մարդու գոյության պայմաններն ու կյանքն ըմբռնում են այս կամ այն կերպ, մենք կարող ենք նմանապես գործել [20]: Եթե դաժանությունը, անուշադիր վերաբերմունքը շրջապատի նկատմամբ և եսասիրական դիրքորոշումները հանդես են գալիս որպես նորմա, դա կարող է արտացոլում գտնել նաև մարդկանց նկատմամբ մեր մոտեցման, ինչպես նաև հանցավոր վարքի մեր ըմբռնման մեջ [20]: Երիտասարդությունն այն տարիքային շրջանն է, երբ մենք սկսում ենք ձևավորել կյանքի մասին մեր հիմնական պատկերացումները: Շատ դեպքերում դելինկվենտությունը համարվում է արժեքների արտահայտություն, որոնք անչափահասն շատ հաճախ ըմբռնել է կամ ստիպված է եղել հետևել [20]:

Ռուսաստանում առաջին անգամ հանցավորությունը սկսվել է ուսումնասիրվել քրեական իրավունքի սոցիոլոգիական դպրոցի սահմաններում: Առաջին քրեագետը, որ կոչ արեց ուսումնասիրել հանցագործության պատճառները, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Դուխովսկին էր: Նա հանցագործության գլխավոր պատճառը համարում էր հասարակական կարգը «հասարակության վատ տնտեսական կառույցը, վատ դաստիարակությունը և մի շարք այլ պայմաններ» [55, էջ 122]:

Սոցիոլոգիական դպրոցը ուսումնասիրեց հանցագործությունը ոչ միայն որպես իրավաբանական, այլև որպես սոցիալական երևույթ:

Այս ուղղության ներկայացուցիչները ուսումնասիրում են սոցիալական միջավայրի և հանցագործության միջև գոյություն ունեցող փոխկապվածությունը:

Ի հակադրություն դրան, Դրիլը մեծ ուշադրություն դարձրեց հանցագործության անհատական գործոններին [54]: Ըստ նրա հանցավորության աղբյուրները երկուսն են՝ անձնական և սոցիալական, ընդ որում երկրորդով որոշվում է առաջինը: Դրիլը գրում էր, որ մարդու վարքը և արարքներն երկու գործոնների հավասար գործող ուժն է, որը պայմանավորվում է ինչպես հոգեֆիզիկական բնույթի առանձնահատկություններով, այնպես էլ այն արտաքին ազդեցությունների առանձնահատկություններով, որոնց նաեւ թարկվել է [54]:

Վ.Ն. Կուդրյավցևը նշում է, որ վարքի յուրաքանչյուր դրսևորում, այդ թվում՝ հակահասարակական, հանցավոր, ենթարկվում է պատճառականության օրենքին, ունի պատճառական բացատրություն: Ըստ նրա հակահասարակական վարքը ծագում է երեք պատճառական կապերի փոխազդեցության արդյունքում, որոնք արտացոլում են անցյալը, ներկան, ապագան: Անցյալը որոշել է տվյալ մարդու ողջ փորձը, նրա անձի առանձնահատկությունները, ներկան իրադրությունն է, որում նա գտնվում է հանցագործություն կատարելուց առաջ [59]: Ապագան հանդես է գալիս իր արարքի և դրա հետևանքների մտավոր մոդելի ձևով: Ապագան այստեղ ենթադրելի է, երևակայական: Հանցավոր վարքն առավել լայն հասկացություն է, քան հանցագործությունը: Հանցագործությունը դամեղավորությամբ կատարված հանրորեն վտանգավոր արարք է, որն արգելվում է քրեական օրենքով՝ պատժի սպառնալիքով [59]:

Հանցավոր վարքը տարածության և ժամանակի մեջ ծավալվող գործընթաց է, որն իր մեջ ընդգրկում է հանցակազմի արտաքին, օբյեկտիվ գործողություններն, ինչպես նաև դրանց նախորդող ներքին հոգեբանական երևույթները, որոնք պայմանավորում են հանցագործության կատարումը [60]:

Հոգեբանության մեջ մարդու սոցիալական (որի կազմում ասոցիալ, հակահասարակական և այլն) վարքը բնութագրվում կամ մեկնաբանվում է որպես կենսաբանական որոշակի հիմքեր ունեցող,

բայց իր բնույթով սոցիալապես պայմանավորված, լեզվով և այլ նշանա–իմաստային համակարգերով միջնորդավորված գործունեություն: Վերջիններիս տիպիկ դրսևորման ձևերից մեկն աշխատանքն է, իսկ հիմնական ատրիբուտը, և կամ անքակտելի հատկանիշը շփումը, հաղորդակցությունն է: Անվանի հոգեբաններ Ա.Վ. Պետրովսկին [76] և Մ.Գ. Յարոշևսկին □103□ համարում են, որ մարդու վարքի հոգեբանական յուրատիպությունը կախված է խմբերի հետ նրա փոխհարաբերությունների բնույթից, խմբային նորմերից, կողմնորոշումների արժեհամակարգից, դերային հրահանգներից կամ կարգադրություններից և այլն [103]:

Սոցիալական վարքի շեղումներ ուսումնասիրող բազմաթիվ քրեաբաններ (Ս. Արզումանյան [18], Վ. Վասիլև [30], Վ. Կուդրյավցև [58], Վ. Իգոշև [48,49] և ուրիշներ) հատկապես առանձնացնում են սոցիալապես ոչ ադապտիվ վարքը, որն առավելապես դրսևորվում է անձի կողմից սեփական հնարավորությունների գերագնահատումից, բարձր և չարդարացված հավակնություններից, վերբալ (խոսքային) և իրավական պլանների ձախողումից, կենսապլանների իրականացմանը հսկելու ժամանակ քննադատության թուլացումից և այլն [18]: Այս հանգամանքները բացասաբար են ազդում միջանձնային հարաբերությունների, հետևաբար և մարդու վարքի վրա, որն իր հերթին իր բացասական ներգործությունն է ունենում նրա հասարակական և անհատական գիտակցության վրա՝ ներառելով անձի իրավական գիտելիքներն ու կուլտուրան, իրավունքի և իրավակատարողական գործունեության նկատմամբ վերաբերմունքը և այլն [18]:

Հոգեբանական առումով վարքը մարդու փոխներգործությունն է շրջապատող միջավայրի հետ, որը միջնորդավորված է նրա սոցիալական արտաքին և հոգեկան ակտիվությամբ: Ինչպես մարդու վարքն, այնպես էլ միջավայրի հետ նրա ներգործությունը բարդ, բազմաբնույթ և բազմաշերտ է [18]: Այսպիսի ներգործության ընթացքում մարդը սոցիալականացվում է, ձեռք բերում բարոյական, իրավական և համակեցության նորմեր, սոցիալական, արժեքային կողմնորոշումներ, քաղաքացիական և հասարակական գիտակցություն, ինչպես նաև համամարդկային արժեքներ [58]:

Փոխներգործությունը տվյալ իմաստով արտահայտում է և՛ անձի այդ ոլորտների ձևավորման ընթացքը, և՛ դրա արդյունքը արդեն կոնկրետ վարքի տեսքով: Այդպիսի սահմանումը գրեթե նույն հոգեբանական մեխանիզմներով արտացոլում է և մարդու հակահասարակական ակտիվությունը, որը միջնորդավորված է արտաքին կամ ֆիզիկական-շարժողական գործողություններով: Վերջիններիս միջոցով նա իրականացնում է հանցարարքը, ինչպես նաև ներքին հոգեկան ակտիվությամբ, որը թե՛ քրեաբանները, և թե՛ քրեահոգեբանները որակում են որպես հանցագործության հոգեբանական կամ սուբյեկտիվ կողմ [58]: Հանցավոր կամ հակահասարակական վարքը հաճախ նույնացվում է քրեական հանցագործության, քրեական հանցարարքի (քրեորեն հետապնդելի արարքի) հետ և դառնում առավելապես քրեաբանության հետազոտության առարկա, որպես շեղվող վարքի տարատեսակներից մեկը:

Քրեաբանությունը հաշվի է առնում երկու կարևոր հանգամանք.

ա) այլ գիտություններից վերցրած գիտելիքների կազմում առաջնային տեղը հատկացնում է հոգեբանական հետազոտությունների տվյալներին,

բ) առանձին մարդու հանցավոր վարքի մեկնաբանությունը բխեցնում է նրա սխալ դաստիարակության հետևանքների և այն անբարենպաստ իրադրության զուգակցումից, որի մեջ նա հայտնվել է արարքը կատարելուց առաջ կամ դրա կատարման ընթացքում [48]: Այնուհանդերձ, մինչև օրս բավարար չափով սահմանազատված չեն քրեագիտության և հոգեբանական գիտության գործառույթները և գործնական ասելիքները թե՛ հանցավորության դեմ պայքարում, և թե՛ հանցագործների ուղղման և վերադաստիարակության հարցերում:

Նշված հանգամանքը ակնհայտորեն դժվարեցնում է հանցավորության կանխարգելման աշխատանքները, քանի որ հստակ չեն կանոնակարգված իրավապահ, քրեակատարողական, օրինապահ և կրթադաստիարակչական համակարգերի ասելիքները, կոնկրետ ֆունկցիաները և իրավասությունները [48]: Հստակ չեն նաև իրավապահ և կրթադաստիարակչական համակարգերի ջանքերի և

կոնկրետ միջոցառումների և հետազոտությունների համատեղումը, որովհետև անհրաժեշտ մակարդակով մշակված չեն հանցավորության դեմ պայքարի ընդհանուր մարտավարությունը. սոցիալական պրոֆիլակտիկայի (որի կազմում և վաղ հոգեբանական, սոցիալ-հոգեբանական պրոֆիլակտիկայի) ծրագիրը, սկզբունքները, մեթոդներն ու մոտեցումները, դրա իրականացման եղանակները, միջոցները և այլն:

Իրավասությունների չհստակեցված լինելը, դրանց անորոշությունը հաճախ հանգեցնում է նրան, որ աղավաղվում են հանցավոր վարքի կամ արարքի բովանդակությունը և կառուցվածքը, հստակ չեն տարբերակվում դրա բաղադրատարրերը կամ դրանք սխալ են մեկնաբանվում: Օրինակ, իրավացի է քրեահոգեբան Յու.Փ. Չուֆարովսկու այն պնդումը, որ մեղքը, դրդապատճառը և նպատակը մտնում են անձի հանցավոր գործողության (կամ հանցարարքի) կառուցվածքի մեջ [100]: Հանցավոր վարքի կառուցվածքի ներքո նա հասկանում է հանցավոր վարքի այդ ձևերի ներքին (հոգեբանական) կազմավորումը և դրա բաղկացուցիչ մասերի փոխադարձ կապը: Նա գտնում է, որ դրույթը հատկապես անհրաժեշտ է ընդգծել, քանի որ մեղքը, դրդապատճառը և նպատակը հաճախ դիտարկվում, քննարկվում են առանձին, որպես ինքնուրույն երևույթներ, հանցավոր վարքի կառուցվածքից դուրս, որի բաղադրատարրերն են իրենք համարվում: Այսպես, օրինակ, մի շարք իրավաբանների և քրեահոգեբանների (Բ.Ա. Վիկտորով [31], Ա.Վ.Նաումով [74]) կողմից նշված կատեգորիաները դիտարկվում են միայն օրենքի նորմում դրանց արտահայտվածության տեսանկյունից, այսինքն՝ առավելապես տրվում է դրանց քրեաբանական բնութագիրը:

Բազմաթիվ քրեահոգեբանների (Վ. Վասիլև [30], Յու. Չուֆարովսկի [101], Ս. Արզումանյան [18], Ի. Իգոշև [48,49], Մ. Ենիկեև [43] և ուրիշներ) կարծիքով նշված հոգեբանական գործոնները բնութագրելիս պետք է հիմք ընդունել այն որոշիչ, վճռորոշ դրույթը, որ հանցագործության նպատակը, դրդապատճառը և մեղքը պետք է դիտարկել որպես հանցավոր վարքի կառուցվածքային բաղադրատարրեր: Նման մոտեցումն, ըստ Չուֆարովսկու, հնարավորություն է ընձեռնում հոգեբանական այդ փաստերը

վերլուծել որպես հանցագործի գործունեության բաղկացուցիչ տարրեր, պարզել մեղքի, դրդապատճառի և նպատակի տեղն ու դերը տարբեր ձևի հանցավոր վարքի կառուցվածքում, ինչպես նաև այն գործառույթներն, որոնք իրականացվում են հանցագործության նախապատրաստման և կատարման շրջանում:

Հանցավորության, հանցագործի և հանցավոր վարքի հոգեբանությամբ զբաղվող մասնագետները, ինչպես նաև իրավաբանության և հոգեբանության սահմանագծում հետազոտություններ կատարող իրավաբանները հավաստում են, որ.

ա) հանցագործության կատարմանը մասնակցում են հանցարարքի սուբյեկտի հոգեկան բոլոր կառույցները,

բ) հանցավոր կամ հակահասարակական վարքի հոգեբանական էությունը հանգեցվում է նրան, որպեսզի դրա արդյունքում սուբյեկտը ակտիվորեն ձգտի հասնել իր նպատակին, բավարարի իր անօրինական պահանջմունքը, գիտակցի իր վարքի դրդապատճառը (այն, թե հանուն ինչի է կատարում հանցավոր արարքը),

գ) հանցագործության սուբյեկտի բոլոր գործողությունները գիտակցված, հետևաբար և դրդապատճառավորված են, որոնք էլ ուղղված են առաջադրված նպատակի իրականացմանը [48,49]: Այսինքն՝ հակահասարակական վարքի պատճառականության մեջ սուբյեկտիվ կամ հոգեբանական վերը նշված գործոնները էական նշանակություն ունեն ինչպես այդ վարքի բնույթն ու բովանդակությունը, քրեաբանական և հոգեբանական մեխանիզմները հասկանալու, այնպես էլ դրա դեմ պայքար ծավալելու, կանխարգելելու համար: Նման վարքի հոգեբանական կողմը միշտ էլ եղել է իրավաբանների հետաքրքրության առարկան, քանի որ այն իրականացնում է կոնկրետ անձը իր որոշակի անձնային և վարքագծային որակների ու հատկանիշների (դրդապատճառների, դիրքորոշումների, կողմնորոշումների և այլն) շնորհիվ: Դրանից ելնելով էլ անվանի քրեաբան Վ.Ն.Կուդրյավցևը [59] հատկանշում է, որ հակահասարակական վարքի սուբյեկտիվ տարրն ունի երկակի կարևոր նշանակություն: Նախ, այդ բաղադրատարրը միջնորդավորում է հասարակական կյանքի օբյեկտիվ պայմանների և վարքի միջև կապն, առանց որի ոչ մի հակաիրավական վարք հնարավոր չէ, այնուհետև

այդ սուբյեկտիվ էլեմենտը կարող է գործել և առանց նախորդող օբյեկտիվ բազայի, քանի որ հասարակական գիտակցությունը հարաբերականորեն ինքնուրույն է [59]: Ահա թե ինչու,- շեշտում է Վ.Կուդրյավցևը,-կան բոլոր հիմքերը դիտարկելու այդ սուբյեկտիվ էլեմենտը որպես իրավախախտումների յուրատիպ պատճառ:

Հակահասարակական արարքի (կամ հանցագործության) օրենսդրական հասկացությունը ամրագրված է քրեական օրենսգրքում՝ որպես հանրորեն վտանգավոր արարք, որն ոտնձգություն է պետական և հասարակական կարգի, տնտեսության, սեփականության, անձի, իրավակարգի նկատմամբ: Այս օրենսդրական հասկացությունը բխում է հակահասարակական վարքի կամային բնույթից: Ինչպես հավաստում է Վ.Կուդրյավցևը, երբ խոսք է գնում իրավախախտման հոգեբանության մասին, ապա դա նշանակում է, որ միայն խոսքը մարդկային վարքի մի տեսակի՝ կամային վարքի մասին է: Այսինքն անձի կամային ոլորտը գերակայում է մյուս ոլորտներին (որը նույնպես հանցագործության սուբյեկտիվ գործոն է), քանի որ գիտակցված հանցավոր գործողությունը միշտ էլ կամային է [57]:

Հակահասարակական արարքի սուբյեկտիվ վճռորոշ բաղադրիչներից մեկը հակահասարակական (կամ հանցածին) դիրքորոշումը հատկանշվում է ճանաչված հոգեքրեաբաններ Կ.Ե.Իգոշևի [48,49], Վ.Լ. Վասիլևի [30], Ս.Ջ. Արզումանյանի [18] կողմից:

Հակաօրինական գործունեությունը հոգեբանական վերլուծության ենթարկելիս Իգոշևը մեծ կարևորություն է տալիս հանցածին դիրքորոշումներին: Դա հատկապես պայմանավորված է նրանով,-նշում է հեղինակը,-որ հանցածին դիրքորոշումը կանխորոշում և կարգավորում է սուբյեկտի վարքը, քանզի նա արտահայտում է վերաբերմունքների, հարաբերությունների ընտրողականությունը և գործունյա անձի ակտիվությունը, որը ձգտում է հասնել իր առջև դրված նպատակին [48]:

Հակահասարակական վարքը դիտարկելով որպես քրեական հոգեբանության հետազոտության խնդիրներից մեկը, Վ.Լ. Վասիլևն ընդգծում է, որ վերջինս ուսումնասիրում է այն հոգեկան օրինաչափությունները, որոնք կապված են հանցավոր դիրքորոշման

ձևավորման, հանցավոր կանխամտածվածության կազմավորման, հանցագործության նախապատրաստման և կատարման, ինչպես նաև վարքի հանցավոր կարծրատիպերի ստեղծման հետ[30]:

Հանցավոր վարքի հիմքում ընկած օրինաչափություններից մեկը հոգեբանական օտարացումն է, որ խիստ կարևորվում է հոգեբաններ Ս.Լ. Ռուբիշտեյնի [85, 86], Յու. Անտոնյանի [9], Ս. Արզումանյանի [18] և այլոց կողմից:

Ըստ հոգեբանների, քրեաբանների և իրավաբան-քրեաբանների՝ անձի հակահասարակական վարքի հիմքում հաճախ ընկած է ոչ միայն կոնկրետ հանցարարքի դրդապատճառը՝ «հանցագործության մոտիվը» և նպատակը, այլ նրա հանցավոր գործունեության մոտիվացիան [9, 18, 59]: Վերջինս հանդես է գալիս որպես անձի ներքին մղում, որն առաջացնում է սոցիալական ակտիվություն և որոշում է դրա ուղղվածությունը: Մոտիվացիայի կազմում, բնականաբար, ընդգրկվում են հանցագործության մոտիվը կամ դրդապատճառը, անձի անօրինական պահանջմունքները և հանցածին վարքի դինամիկան արտացոլող այնպիսի գործոններ, ինչպիսիք են հույզերի դրսևորումները, սուբյեկտիվ ապրումները, ցանկությունները, ձգտումները դիրքորոշումներն ու վերաբերմունքը շրջապատի նկատմամբ և այլն: [18]:

Ըստ Վ. Կուդրյավցևի՝ [61] հանցավոր վարքի ուսումնասիրության կարևոր կողմ է հանդիսանում նրա «մեխանիզմի» վերլուծությունը: Հանցավոր մեխանիզմի ուսումնասիրության մեջ հատուկ տեղ են զբաղեցնում սուբյեկտիվ բնույթի հարցերը՝ կապված հետաքրքրությունների, պահանջմունքների, մարդկանց վարքի դրդապատճառների, նրանց նպատակների և ձգտումների հետ: Եվ դա հասկանալի է, որ օբյեկտիվ հասարակական գործընթացները գործում են ոչ թե մեխանիկորեն, այլ մարդկանց գիտակցության և վարքի միջոցով: Հեղինակը հանցավորության պատճառների վերլուծության մեջ կարևորում է իրավախախտի վարքի սուբյեկտիվ կամ անձնային բաղադրիչի բացահայտումը, անձնավորության առանձնահատկությունների ուսումնասիրությունը [61]:

Անձնավորությունն, ըստ Վ. Կուդրյավցևի, հանդես գալով իր ողջ սոցիալական, բարոյական և հոգեբանական որակների և հատկանիշների միասնության մեջ, ձևավորվում է մարդու կյանքի և գործունեության ընթացքում [61]: Փոխազդելով այլ մարդկանց հետ՝ մարդը յուրացնում է վարքի նորմեր, բարոյական և իրավական հասկացություններ, սոցիալական և մշակութային արժեքներ, ձեռք է բերում նոր պահանջմունքներ, հետաքրքրություններ և ձգտումներ [61]: Դրա հետ մեկտեղ նա նշում է, որ անձն ամենևին էլ սոցիալական ազդեցության պասիվ օբյեկտ չէ, մարդն ինքն է ձևավորում իր կյանքի պայմանները, հետևաբար և իր սեփական անձը [61]:

Անձի անբարենպաստ զարգացման ընթացքում բախում է առաջանում անձի որակների և շրջապատի պահանջների միջև: Դրանց կազմում ընդգրկվում են անձնավորության այնպիսի որակներ և հատկություններ, ինչպիսիք են պահանջմունքները և հետաքրքրությունները, բարոյականության նորմերը և իրավունքի մասին պատկերացումները, վարքի սովորութային ձևերը (ստերեոտիպեր) և դրանց գնահատականը սուբյեկտի կողմից (ինչպես նաև սեփական անձի ինքնագնահատականը):

Այնուհետև անվանի քրեաբանն առանձնացնում է անձի բարոյական զարգացման հիմնական աղբյուրները. առաջին հերթին անձն է իր փոփոխվող բոլոր որակներով, երկրորդ՝ փոքր սոցիալական խմբերը՝ ընտանիք, դպրոց, երրորդ՝ հասարակությունը ամբողջությամբ [61]: Անձի անբարենպաստ ձևավորման դեպքում նրա բարոյական արժեքները, իրավական պատկերացումները, պահանջմունքների համակարգը և հիմնական հետաքրքրությունները մտնում են հակասության մեջ համապատասխան հասարակական հետաքրքրությունների, պատկերացումների և արժեքների հետ: Անձնավորությունը ձեռք է բերում հակահասարակական կողմնորոշում [61]: Դա արտահայտվում է պահանջմունքների, դրդապատճառների, բարոյականության և մարդու այլ սոցիալական արժեքների խաթարման մեջ:

Իրավախախտ անձի բացասական առանձնահատկությունները բացատրելիս Վ. Կուդրյավցևը գլխավոր պատճառը տեսնում է

նրանում, որ անձնավորությունը ձևավորվում է ոչ միայն ողջ հասարակության ազդեցության տակ, այլև այն փոքր սոցիալական խմբերում, որտեղ նա գտնվում է [61]:

Յու.Մ. Անտոնյանը [9] գրում է «Անձնավորության հոգեբանական օտարացման ուսումնասիրությունը թույլ է տալիս հասկանալ շատ հանցագործությունների անձնային, ներքին պատճառները»: Հոր անբարոյական վարքագիծը ոչ միշտ է նպաստում իրավախախտ անձնավորության ձևավորմանը: Այստեղից նա հակված է մտածելու, որ վճռական դերը դրանում խաղում է ոչ թե ընտանիքի կազմը կամ նրա առավելությունները, ոչ թե հարաբերությունները ծնողների միջև կամ նրանց սոցիալական հեղինակությունը, այլ նրանց հուզական վերաբերմունքը երեխայի նկատմամբ, նրա ընդունումը կամ մերժումը [9]: Հեղինակը ենթադրում է, որ հանցավոր վարքի գենեզիսի բացատրության հիմքում ընկած է այն գաղափարը, որ այն պայմանավորվում է անբարենպաստ ազդեցություններով, որոնք ազդել են անձի վրա մանկության ժամանակ [9]: Ընտանիքի կողմից քրեածին ազդեցությունն անձի վրա արտահայտվում է հակահասարակական որակների տարերային կամ նպատակաուղղված ձևավորման մեջ: Շատ դեպքերում ընտանիքի քրեածին ազդեցությունը կապված է նրա կողմից սոցիալականացման գործառույթի չկատարման հետ:

Ա.Մ. Յակովլևը [102] գրում է. «Մարդու վարքը նրա կողմից շրջապատող սոցիալական միջավայրում եղած հնարավորություններից վարքի որոշակի տեսակի ընտրության արդյունք է» [102, էջ 77]: Այդպիսի ընտրության ընթացքի վրա ազդում է ոչ միայն օբյեկտիվ հնարավորությունների առկայությունը և բովանդակությունը, այլև նրանց գնահատականը, «ինքնագնահատականը», ինչպես նաև նրա սուբյեկտիվ գնահատականը կոնկրետ իրադրության նկատմամբ [102]: Հետևաբար, նշում է նա, այդ փոխազդեցության ընթացը ուղիղ չի գալիս հասարակությունից դեպի անհատ, այլ պայմանավորվում է ձեռքբերված անհատական փորձով: Մարդը սոցիալական միջավայրի կողմից ազդեցության պասիվ օբյեկտ չի: Հենց ինքը՝ սոցիալական միջավայրը նրա ձեռքերի և ուղեղի արդյունք է: Անձը հանցագործություն է

կատարում, երբ խախտվում է նրա նորմալ փոխազդեցությունը սոցիալական միջավայրի հետ: Ա. Յակովլևի կարծիքով, մարդու վարքը երկու հիմնական փոփոխականների՝ սոցիալական միջավայրի և անձնավորության ֆունկցիա է: Անձնավորությունը և միջավայրը իրենց հերթին գտնվում են միմյանց հետ ֆունկցիոնալ փոխկապվածության մեջ [102]: «Անձնավորություն–սոցիալական միջավայր» համակարգի կայունությունը դրսևորվում է հասարակության, սոցիալական պահանջների հետ մարդու վարքի ձևերի համապատասխանության մեջ: Այդ հավասարակշռության խախտումը դրսևորվում է հակահասարակական վարքի ձևով:

Ըստ Ս.Ա. Տարարուխինի՝ [91] վարքի սոցիալական նշանակությունը որոշվում է անձի ուղղվածությամբ, արժեքային կողմնորոշմամբ, սոցիալական դիրքորոշմամբ և հիմնական գործունեության դրդապատճառներով:

Անձի սոցիալական որակների և վարքի փոխպայմանավորվածության մասին հայտնի քրեաբանի կողմից ուսումնասիրված ընդհանուր տեսական դրույթները թույլ են տալիս առավել առարկայական մոտեցում ցուցաբերել հանցագործության կոնկրետ պատճառների հիմնախնդրին որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների բարդ փոխազդեցության արդյունք:

Ըստ հանցավոր վարքի մասին Ս. Տարարուխինի տեսության՝ անձնավորության սոցիալական որակների այլափոխումը, որը կարող է հանգեցնել հանցավոր վարքի, տեղի է ունենում աստիճանաբար: Անձի վարքը պայմանավորված է սոցիալական միջավայրով, սակայն միջավայրը չի կարող ազդել պարզ պրոյեկցիայով: Որպեսզի օբյեկտիվ պատճառները սկսեն գործել, դրանք պետք է ոչ միայն անցնեն անձնավորության գիտակցության միջով, այլև պետք է առաջացնեն հանցագործության որոշակի դրդապատճառներ [91]:

Ըստ իրավաբանական հոգեբան Կ.Ե. Իգոշևի՝ մարդկային գործունեության յուրաքանչյուր դրսևորում, այդ թվում հանցավոր՝ անհատի հասարակական կապն է այլ մարդկանց հետ [49]: Այդ կապն իրականացվում է վարքի միջոցով: Վարքի այս կամ այն ձևն անձի և նրա գործունեության արտահայտությունն է: Հանցավոր

գործունեությունն արտահայտում է հանցագործի կապը շրջապատողների հետ, ինչպես նաև այն պատմական պայմանների հետ, որոնք առաջացրել են հանցագործությունը և նպաստում են դրա պահպանմանը [49]: Ըստ Իգոշևի՝ հանցագործությունը հանցագործության դրդապատճառների արտահայտման և դրանց օբյեկտիվացման ձև է: Անձնավորության բացասական գծերը դրսևորվում են հանցագործության մոտիվներում և օբյեկտիվացվում են հանցավոր գործունեության մեջ միայն այն ժամանակ, երբ դրա համար կան որոշակի արտաքին պայմաններ [49]: Իգոշևը նշում է, որ հանցագործության մոտիվը իր կոնկրետ ձևակերպումը, հոգեբանական ձևը և իրավաբանական նշանակությունը ստանում է այն ժամանակ, երբ կապվում է հանցագործ անձի կենսագործունեության կոնկրետ պայմանների, իրադրությունների հետ: Իրադրությունն, ըստ հեղինակի, ֆոնի դեր է խաղում, որի վրա ձևավորվում է հանցավոր գործունեությունը:

Ճանաչված քրեահոգեբան Վ.Վ. Ռոմանովը հանցագործության հոգեբանական առանձնահատկությունները վերլուծելիս հենվում է այնպիսի հիմնարար հոգեբանական հասկացությունների վրա, ինչպիսիք են գործունեությունը, վարքը, գործողությունը, գործունեության մոտիվները և նպատակները: Նա գրում է. «Հանցավոր վարքը վերլուծելով հոգեբանական տեսանկյունից, պետք է տեսնել ոչ միայն հանցագործությունն, այլ նաև հանցագործություն կատարելու որոշումը պայմանավորող, դրա կատարումն ուղղորդող և հսկող ներքին, հոգեկան գործընթացները և վիճակները» [84, էջ 96]:

Հայտնի իրավաբանական հոգեբան Մ.Ի. Ենիկեևի կարծիքով հանցավոր վարքը միայն անմիջական ներգործող գործոնների ուղիղ հետևանք չէ: Մարդու վարքում արտաքին հանգամանքների համակարգը երկատվում է նրա մեջ ձևավորված ներքին պայմանների համակարգի միջոցով [43]: Դրանց են վերաբերում արժեքային կողմնորոշումների համակարգը, վարքի ընդհանրացված միջոցները, ինքնակառավարման հոգեդինամիկ առանձնահատկությունները: Վարքի ընդհանրացված ձևերը կազմավորվում են միջավայրի պայմանների ազդեցության տակ [43]: Հոգեդինամիկ

առանձնահատկությունները կենսաբանական գործոնների արդյունք են: Մյուս գործոնները կազմավորվում են վարքի հոգեկան կարգավորման անձնային համակարգում: Այսպիսով, Մ. Ենիկեևը մարդկային վարքի պատճառականության հիմնախնդիրները դիտում է որպես սոցիալական–հոգեբանական–կենսաբանական համալիր:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ որոշակի կապ կա «հուզական դեպրիվացիայի և ագրեսիայի միջև [83]: Այսպես օրինակ, հաստատված է, որ եթե երեխայի մոտ ձևավորվել են նեգատիվ հարաբերություններ ծնողներից մեկի կամ երկուսի հետ, եթե դրական ինքնագնահատական զարգացնելու միտումը և «Ես» հայեցակարգն աջակցություն չեն ստանում ծնողների գնահատականներում, կամ եթե երեխան չի զգում ծնողական աջակցություն և պաշտպանվածություն, ապա դելինկվենտ վարքի հավանականությունը մեծանում է, վատանում են հարաբերությունները հասակակիցների հետ, ծնողների նկատմամբ ձևավորվում է ագրեսիվություն [83]:

Ինչպես նշում է Ե.Պ. Իլյինը [50] «Ագրեսիա» և «ագրեսիվություն» հասկացությունները հոմանիշներ չեն. եթե ագրեսիան դա որոշակի գործողություն է, ապա ագրեսիվությունն անձի հատկություն է:

Վ.Ֆ. Պիրաժկովը նշում է հանցագործի անձի հետևյալ առանձնահատկությունները. անհատական իրավագիտակցության թերությունները որպես նրա ոչ բավարար սոցիալիզացիայի արդյունք, անձնավորության պահանջմունքնային ոլորտի ախտահարություն կամ հանցագործի անձի պահանջմունքների աներդաշնակություն, անձնային դիրքորոշումների թերությունները, հոգեկան զարգացման թերությունները [77]:

Պիրաժկովը, շեշտելով հանցագործության սուբյեկտիվ կողմը, դրա կազմում ընդգրկում է դրդապատճառները կամ հանցավոր մոտիվները, որոնք դրդում են մարդուն խախտել քրեական արգելքը: Ընդ որում, ըստ հեղինակի, մոտիվը կատարում է երեք փոխկապված ֆունկցիա. դրդում է գործունեության, ուղղում է նրան և քրեական գործունեությանը տալիս է անձնային իմաստ [78]:

Մոտիվները լինում են ուղղակի (երբ հանցագործը ցանկանում է որոշակի հետևանքներ առաջացնել) և անուղղակի (երբ չի ցանկանում ինչ–որ հետևանքներ առացացնել, սակայն դրանք առաջացել են, ցանկացել է ինչ–որ մեկին վախեցնել, բայց ավարտվել է անձի մահով): Հանցագործությունը կարող է կատարվել հանցավոր անվստահությունից և հանցավոր անփութությունից, ինչպես նաև աֆֆեկտի վիճակում, երբ գիտակցության նեղացման արդյունքում կորում է ինքնակառավարումը:

Ըստ Ս.Վ. Պոզնիշևի՝ հանցագործությունը երկու արմատունի. մեկն ընկած է հանցագործի անձի մեջ և բխում է նրա կառույցի առանձնահատկություններից, մյուսը բաղկացած է տվյալ անձի համար արտաքին փաստերից, որն իր ազդեցությամբ նրան մղում է հացավոր ճանապարհի [79]:

Համաձայն Պոզնիշևի՝ գոյություն ունի հանցագործների երկու տեսակ. առաջինը քիչ, թե շատ նախատրամադրված է հանցավոր գործունեության հայտնի տեսակների նկատմամբ: Երկրորդ տիպն ազատ է այդ նախատրամադրվածությունից, բայց տարբերվում է այնպիսի թույլ բարոյական արգելակներով, որի դեպքում մարդու մոտ չկա բավականին ուժեղ հակում հանցագործությունից խուսափելու, որի պատճառով, ընկնելով ծանր արտաքին հանգամանքների ազդեցության տակ ակտիվություն չի դրսևորում դուրս գալու իրադրությունից ոչ հանցավոր ճանապարհով [79]: Առաջին տիպի հանցագործները, եթե նույնիսկ կատարում են հանցագործություն ծանր արտաքին հանգամանքների պայմաններում, ապա հիմնականում արարքը կատարում են ոչ այդ հետևանքների ազդեցությամբ [79]:

Այստեղ գլխավոր դերը պատկանում է հանցագործության նկատմամբ նրանց նախատրամադրվածությանը: Երկրորդ տիպի հանցագործների մոտ հանցագործությունների գենեզիսում գերակայող դերը պատկանում է արտաքին գործոններին: Առաջին տիպը նա անվանում է էնդոգեն հանցագործ, իսկ երկրորդը՝ էկզոգեն հանցագործ [79]: Միաժամանակ նա վճռական կերպով մերժում է «պատահական» և «սովորութային» հանցագործների գաղափարը:

«Ոչ ոք չի դառնում հանցագործ պատահական,- ասում է Ս. Պոզնիշևը,- միշտ կան մի շարք հանգամանքներ, որոնք հասցրել են մարդուն իր կողմից կատարված արարքին» [79, էջ 88]: Հեղինակը անհրաժեշտ է գտնում հաստատել հետևյալ հանգամանքները հանցագործին էկզոգեն ճանաչելու համար.

1. Սուբյեկտի կյանքում այդ հանցագործությանը նախորդել է հայտնի արտաքին իրադարձություն, որը իրեն կամ հարազատներից ինչ–որ մեկին դրել է ծանր դրության մեջ նրանով, որ պատճառել կամ սպառնացել է պատճառել տառապանք:

2. Հանցավոր իրադարձությունը և հանցագործի կողմից ստեղծված իրադրությունը անձի վրա ուժեղ տպավորություն են գործել:

3. Անձը չունի հակում հանցավոր գործողությունների նկատմամբ:

4. Անձի մեջ թերզարգացած են այն բաղադրիչներն, որոնք անհրաժեշտ են, որպեսզի հաղթահարեն անբարեհաջող արտաքին հանգամանքներով առաջ եկած տպավորությունը և մեծ դժվարությամբ փնտրեն ոչ հանցավոր ելք ստեղծված ծանր իրավիճակից [79]:

Էկզոգեն հանցագործը հանցագործություն է կատարում ոչ թե նրա համար, որ իր լավ պայմաններին ավելացնի հանցագործության գործընթացից կամ նրա հետևանքներից ստացած նոր հաճույք, այլ որպեսզի ամբողջությամբ կամ մասնակիորեն ազատվի իրեն տանջող կամ սպառնացող տառապանքներից [79]:

Հանցագործին էնդոգեն ճանաչելու համար, պետք է հաստատել.

1. Նրա մոտ այնպիսի հայացքների առկայությունը, որն արդարացնում է տվյալ հանցագործության կատարումը:

2. Հակվածություն նն այդպիսի գործողությունների նկատմամբ:

3. Սուբյեկտի կողմից հանցագործության կատարումը ոչ թե անբարենպաստ արտաքին իրադարձությունների, այլ նրա մոտ բարձր հակվածության արդյունքում [79]:

Եթե նույնիսկ հանցագործը գործում է երբեմն ծանր արտաքին պայմանների դեպքում, ապա դա անում է ոչ վերջիններիս արդյունքնում: Արտաքին պայմանները կարծես արթնացնում են նրա

մոտ չարթնացած նախատրամադրվածությունը, նրան դրսևորվելու հող են տալիս [79]:

Պատմությունը ցույց է տալիս, որ տարբեր ժամակաշրջաններում փոխվել են հանցագործության և այն կանխելու մասին պատկերացումները: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի գաղափարախոսություն իր արտացոլումն է գտել այդ ժամանակաշրջանի մտածողների մտքերում:

Ամփոփելով խնդրո առարկայի շուրջ ուսումնասիրությունները և անվանի քրեաբանների և իրավաբանական հոգեբանների հայեցակարգերը կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Հակահասարակական վարքը որպես անձի, սեփականության, իրավակարգի, հասարակության և պետության նկատմամբ կատարված ոտնձգություն կամ անօրինական գործողություն հետաքրքրության առարկա է եղել դեռևս հին ժամանակներից: Դրա շուրջ գրվել են մենագրություններ, ստեղծվել են տեսություններ (հատկապես քրեաբանական), առաջադրվել հայեցակարգեր: Այսինքն քննարկվող խնդիրն այնքան հին է, որքան մարդկային հասարակության էվոլյուցիան:
2. Հակահասարակական վարքը որպես հետազոտության առարկա քննարկվում է երկու գիտությունների՝ իրավաբանության (հատկապես քրեաբանության) և հոգեբանության (առավելապես իրավաբանական) սահմանագծում: Այդպիսի վարքի հիմքում ընկած օբյեկտիվ պատճառները քրեաբանության ուսումնասիրության հիմնախնդիր են հանդիսանում, իսկ սուբյեկտիվ կամ հոգեբանական պատճառները՝ իրավաբանական հոգեբանության ուսումնասիրության առարկա:
3. Հակահասարակական վարքի սուբյեկտիվ պատճառների հետազոտումը էական նշանակություն ունի ինչպես հանցավորության դրդապատճառները բացահայտելու, հանցարարքը որակավորելու և համարժեք պատիժ սահմանելու, այնպես էլ անձի քրեականացման գործընթացը

նախազգուշացնելու և հանցագործի ուղղման և վերադաստիարակության աշխատանքներն արդյունավետ կազմավորելու համար:

# ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ
# ՀԱԿԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԷՄՊԻՐԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

## 2.1. Հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոնների ընդհանուր հոգեբանական բնութագիրը

Հանցավոր կամ հակահասարակական վարքը հաճախնույնացվում է քրեական հանցագործության, հանցարարքի (քրեորեն հետապնդելի արարքի) հետ և դառնում առավելապես քրեաբանության հետազոտության առարկա, որպես շեղվող վարքի տարատեսակներից մեկը:

Բազմաթիվ քրեաբաններ (Ա. Սախարով [87], Ա. Նաումով [74], Վ. Կուդրյավցև [58], Ի. Կարպեց [53], Ս. Պոզնիշև [79] և ուրիշներ) հանցագործություն են համարվում մեղավորությամբ կատարված, հանրության համար վտանգավոր այն արարքը, որն արգելված է քրեական օրենսգրքով: Հակահասարակական արարքը բնութագրվում է որպես հակաօրինական կամ հակահրավական արարք «գործողություն կամ անգործություն», որը քրեական օրենսգրքով հետապնդելի է: Այստեղ հանցագործության սուբյեկտիվ գործոնները բավականին աղոտեն ներկայացված, ինչը դժվարեցնում է դրադեմ պայքարը: Այդ հատկանիշներն են. հանրային վտանգավորությունը, հակաօրինականությունը, մեղավորությունը (մեղքի ձևերը- կանխամտածությունը, դիտավորությունն և անզգուշությունն): Ինչպես տեսնում ենք շատ թույլ է արտահայտված հանցարարքի սուբյեկտիվ կամ հոգեբանական կողմը:

Հակահասարակական արարքի՝ քրեական օրենսգրքով սահմանված հատկանիշների համակցությունը կոչվում է հանցակազմ: Որպեսզի հանրորեն վտանգավոր արարք կատարած անձը քրեական պատասխանատվության ենթարկվի, անհրաժեշտ է հավաստել, որ նրա արարքում առկա են քրեական օրենքով նախատեսված հանցագործության հանցակազմի հատկանիշները: Քրեական օրենսգրքում ներկայացված որևէ հանցագործության հատկանիշների ամբողջությունը ձևավորում է տվյալ

հանցագործության հանցակազմը: Յուրաքանչյուր կոնկրետ հանցակազմ բնութագրում է հանցագործության որոշակի տեսակը չորս տարրերով. օբյեկտ, այսինքն՝ այն հասարակական հարաբերություններն, որոնց դեմ ուղղված է հանցագործությունը, օբյեկտիվ կողմ՝ հանցավոր արարքի արտաքին դրսևորումը, սուբյեկտիվ կողմ՝ արարքի ներքին, հոգեբանական էությունը, սուբյեկտ՝ անձը, ով կատարել է հանցանք և ենթակա է քրեական պատասխանատվության [87]:

Հանցագործության սուբյեկտիվ կողմի կարևոր բնութագիր է անձի հոգեվիճակը հանցագործություն կատարելու պահին: Սուբյեկտիվ կողմի հատկանիշներն են մեղքը, դրդապատճառը, նպատակը, հույզերը: Իրավաբանների մեկնաբանությամբ վերջին չորս գործոններով սահմանափակվում է հանցագործության հոգեբանական կողմը, որը հնարավորություն չի տալիս հանցագործության սուբյեկտի կամ հանցագործ անձի բարոյական անկումը լայն հոգեբանա–քրեաբանական վերլուծության ենթարկել: Անհրաժեշտություն է առաջանում ընդլայնել հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոնների կազմը՝ այն համալրելով այնպիսի էական բաղադրիչներով, ինչպիսիք են հանցածին դիրքորոշումը, խաթարված սոցիալական գիտակցությունը և դրա երկատվածությունը, այլափոխված անձնային որակները, խաթարված հուզա–կամային ոլորտը և այլն [18]: Այսինքն՝ անձի այն կառույցներն, որոնք ակտիվ մասնակցություն են ունենում նրա կողմից հակահասարակական վարք ու գործունեություն ծավալելու ընթացքում:

Մեղքը անձի վերաբերմունքն է իր արարքի նկատմամբ: Մեղքի հոգեբանական կառուցվածքային տարրերն են հանդիսանում գիտակցությունը և կամքը: Մարդն իր արարքների համար կարող է պատասխանատվություն կրել միայն այն դեպքում, երբ գործել է ազատ կամքով: Դրա համար էլ մեղքի կարևոր նախադրյալն է մեղսունակությունը: Մեղավոր կարող է ճանաչվել միայն այն անձը, որն ընդունակ է գիտակցել իր արարքների փաստական հանգամանքներն ու սոցիալական նշանակությունը և ղեկավարել դրանք [3]:

Մեղքը հավաստելու համար անհրաժեշտ է հավաստել ոչ միայն այն, որ մարդը գիտակցվել է իր արարքների փաստական հանգամանքներն, այլև այն, որ նա գիտակցել է արարքների սոցիալական էությունը (հանրային վտանգավորությունը), ինչպես նաև նախատեսել է (կամ կարող էր նախատեսել) դրանց հետևանքները [3]:

Այն, ինչ իրավաբանները անվանում են հանցագործության սուբյեկտիվ կողմ – դրդապատճառ, մեղք, նպատակ, հույզեր-իրավագիտության մեջ միավորվում է համալիր հասկացության մեջ, որը կոչվում է հանցավոր դիտավորություն: Վերջինը մինչև հանցավոր գործողություն կատարելը մնում է արտաքնապես չօբյեկտիվացված, այլ դեռևս որպես ներքին հոգեկան կազմավորում: Այդ պատճառով սուբյեկտը, ինչպես պնդում է Մ.Ենիկեևը, պատասխանատվություն է կրում ոչ թե այդ դիտավորության համար, այլ հանցագործություն կատարելու կամ հանցագործությանը ակտիվ պատրաստվելու համար [43]: Սակայն արդեն դիտավորության ծագումը հանդես է գալիս որպես հացագործությանը պատրաստվելու հոգեբանական ակտ: Այստեղից Մ. Ենիկեևի և այլ իրավաբանների պնդումները, որ հանցավոր արարքի կառուցվածքում էական է դիտավորության ծագումը և ձևավորումը [43]:

Տվյալ ուսումնասիրությունը հիմնականում անցկացվել է Ս.Ջ. Արզումանյանի կողմից մշակված հանցագործի անձի, հանցավոր վարքի կազմավորման մասին հոգեբանա-քրեաբանական տեսության շրջանակներում: Համաձայն այդ տեսության՝ հանցավոր վարքի կառուցվածքում նրա հոգեբանական կամ սուբյեկտիվ կողմը գերակշռում է այլ կառուցվածքային բաղկացուցիչների նկատմամբ, այսինքն՝այդ կողմը կանխորոշում է հանցավոր արարքի կատարումը: Իսկ հանցավոր վարքի սուբյեկտիվ կողմի կառուցվածքում վճռորոշ գործոն են հանդիսանում անձի քրեածին, հակահասարակական դիրքորոշումները, որոնք ընկած են դրդապատճառների և անօրինական ակտիվության հիմքում: Քրեական վարքի կառուցվածքում, օբյեկտիվ գործոնների հետ մեկտեղ, Ս. Արզումանյանն առանձնացնում է վարքի հետևյալ սոցիալական և

բարոյական ոչ ադապտիվ դիրքորոշումները. բացասական հուզական, նեգատիվ, նախաքրեածին, քրեածին, հանցածին կամ քրեական դիրքորոշումները [18]:

Հանցավոր դիտավորության կարևոր բաղկացուցիչ է հանդիսանում հանցագործության դրդապատճառը [1]: Հանցագործության շարժառիթը հանցանք կատարելու որոշակի պահանջմունքներով պայմանավորված ներքին մղումն է: Քրեաբանների և քրեահոգեբանների մեծամասնությունը շարժառիթը դիտարկում են նաև որպես նպատակին հասնելու ցանկություն:

Ըստ հոգեբանների, քրեաբանների և իրավաբան-քրեաբանների անձի հակահասարակական վարքի հիմքում հաճախ ընկած է ոչ միայն կոնկրետ հանցարարքի դրդապատճառը՝ «հանցագործության մոտիվը» և նպատակը, այլ նրա հանցավոր գործունեության մոտիվացիան [1]:

Դրդապատճառի տակ հոգեբանները հասկանում են անձի դրդումն այս կամ այն ակտիվության տեսակին՝ կապված որոշակի պահանջմունքի բավարարման հետ, իսկ մոտիվացիայի տակ՝ դրդումների ողջ ամբողջությունը. մոտիվներ, պահանջմունքներ, հետաքրքրություններ, ձգտումներ, նպատակներ, հակումներ, դիրքորոշումներ, իդեալներ և այլն, ինչը լայն առումով նախատեսում է վարքի պատճառականությունն ընդհանրապես [83]:

Վարքի դրդապատճառների դերում հաճախհանդես են գալիս անձի պահանջմունքները, հետաքրքրությունները, հայացքները, համոզմունքները, ցանկությունները, հակումները, սովորությունները, ապրումները, ապրվող զգացմունքները, հույզերը, հոգեկան վիճակները, դիրքորոշումները, աշխարհայացքը, արժեքային կողմնորոշումները, իրավագիտակցությունը [1]: Առանձնացվում են գիտակցված (հետաքրքրություններ, համոզմունքներ, ձգտումներ) և չգիտակցված դրդատպատճառներ (հակումներ, մղումներ):

Մոտիվները հոգեբանական երևույթ են, բայց նրանք կարող են ձևավորվել միայն մարդու կողմից բազմաթիվ հարաբերությունների մեջ մտնելու, հասարակական կապերի մեջ նրա ներառնվածության դեպքում [1]:

Դրդապատճառը ընկած է վարքի հիմքում: Այն ներթափանցում է նրա ողջ բովանդակության մեջ և դրսևորվում է նրա բոլոր փուլերում՝ վարքը միավորելով անձի հետ [1]: Դրդապատճառը հանցագործության ներքին անմիջական պատճառն է, որն արտացոլում է անձնային վերաբերմունքն այն բանի նկատմամբ, ինչին ուղղված են հանցավոր գործողությունները [1]: Դրդապատճառը մարմնավորում է օբյեկտիվի (սոցիալական միջավայր) և սուբյեկտիվի (անձնային որակների) միասնությունը, որոնցում միավորվում և բեկվում են օբյեկետիվ հանգամանքները:

Մոտիվները, Յու. Անտոնյանի, Վ.Կուդրյավցևի և այլոց պնդմամբ, իրենք չեն կարող լինել հանցավոր: Հանցավոր կարող է լինել վարքը, որը կախված է նպատակներին հասնելու միջոցների ընտրությունից, անձի բարոյական ուղղվածությունից, իրավական նորմերի հետնրաընկալումից, նրաընդունումից:

Հանցագործության անգիտակցական դրդապատճառներին իրավաբանները և քրեաբանները հազվադեպ են ուշադրություն դաձնում: Վերջինս հոգեբանական ուսումնասիրության խնդիր է: Նրանք ելնում են հանցագործության գիտակցված դրդապատճառներից: Միջավայրի ըմբռնումը որպես անհատի համար վտանգավոր հաճախ չի գիտակցվում, որովհետև այն չափից ավելի տրավմատիկ է: Միևնույն ժամանակ տագնապային անձի կախվածությունը անբարենպաստ միջավայրից առավել մեծ է, քանի որ այդ անձնավորությունը անընդմեջ կապված է այդ արտաքին պայմաններին: Հանցագործները գրեթե անընդունակ են վեր կանգնել կյանքի իրադրությունից, կողքից ընկալել, ընտրել դրա լուծման համար այլ, ոչ հակաիրավական ճանապարհ:

Հանցագործության դրդապատճառների բացահայտումը բավական բարդ է, հատկապես, եթե դրանք կրում են անգիտակցական բնույթ:

Մարդու հոգեկանում գիտակցության և անգիտակցության անբաժան կապի մասին նշում են շատ հոգեբաններ և փիլիսոփաներ: Անգիտակցականում սկսվող գործընթացները սովորաբար իրենց շարունակությունն են ունենում գիտակցության մեջ, և հակառակը՝

գիտակցված շատ բաներ մեր կողմից դուրս են մղվում անգիտակցական ոլորտ» [34]:

Հանցավոր վարքի մոտիվների ուսումնասիրությունը, նրա խորքային, անձի կողմից չգիտակցված պատճառները հասկանալու փորձը թելադրված են ոչ թե հանցագործին արդարացնելու, պաշտպանելու, այլ հանցագործության շարժիչ ուժերը հասկանալու, բացատրելու ցանկությամբ և պայմանավորված են քաղաքակիրթ արդարադատության պահանջմունքներով [34]:

Անվանի հոգեբան Ա.Ն.Լեոնտևը գտնում է, որ ըստ դրսևորման ձևի դրդապատճառը հոգեկան երևույթ է (անձի ներքին վիճակ), որն այս կամ այն պայմաններում դառնում է որոշակի գործունեության մղիչ ուժ [65]:

Հանցավոր վարքի դրդապատճառը սոցիալական միջավայրի և կյանքի փորձի ազդեցության տակ ձևավորված դրդումն է, որը հանցանքի անմիջական պատճառն է և արտահայտում է անձնական վերաբերմունքն այն բանի նկատմամբ, որին ուղղված է հանցավոր գործունեությունը:

Ըստ ճանաչված իրավաբանական հոգեբան Կ. Իգոշևի [49], հանցագործության դրդապատճառը ստանում է իր կոնկրետ ձևակերպումը, հոգեբանական ձևը և իրավական նշանակությունը՝ կապված հանցագործի անձի կենսագործունեության կոնկրետ պայմանների հետ: Իրադրությունը կարող է խաղալ ֆոնի դեր, որի վրա զարգանում է հանցավոր գործունեությունը: Իրադրությունն իրենից ներկայացնում է անձի վրա կոնկրետ պայմանների և հանգամանքների ազդեցության ամբողջություն, որն անմիջականորեն որոշում է հանցագործություն կատարելու հնարավորության վերածումը իրականության [49]:

Հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոններ ասելով հասկանում ենք հանցավոր վարքի ձևավորմանը և զարգացմանը նպաստող նախադրյալներ, որոնք արմատանալով անձի հոգեկանում նրան դարձնում են առավել ընկալունակ արտաքին անբարենպաստ գործոնների նկատմամբ, այսինքն՝ անձնային այն պատճառներն ու պայմանները, որոնք նախորդում են հանցագործությանը:

Մ. Ենիկեևը հանգամանորեն վերլուծում է հանցավորության սուբյեկտիվ պատճառներն ու պայմանները: Սուբյեկտիվ պատճառներ են համարվում անձի սոցիալական դիրքը, նրա արժեքների և դրդապատճառների համակարգի աստիճանակարգը, հետաքրքրությունները, սոցիալականացման, բարոյագիտակցության և իրավագիտակցության մակարդակը, դիրքորոշումներն ու վարքային կարծրատիպերը [42]: Սուբյեկտիվ պայմանները, Ենիկեևի կարծիքով, անձի ժողովրդագրական, էթնիկական և հոգեդինամիկ առանձնահատկություններն ու հոգեվիճակներն են: Հեղինակը հատկապես կենտրոնանում է այն հարցի վրա, թե ինչով է հանցագործը տարբերվում ուրիշներից, որն է նրա անձի յուրահատկությունը: Նրա մի շարք ուսումնասիրությունները հատկանշում են նախևառաջ հուզա–կամային ոլորտի այլափոխվածությունը: Հանցագործներին բնութագրական է անձնային տագնապայնությունը բարձր մակարդակը, գործողությունների անբավարար հսկողությունը (իմպուլսիվություն), ագրեսիվությունը: Տագնապային անձն իրադրությունների մեծ շրջանակն ըմբռնում է որպես սպառնալիք իր կարգավիճակին և համապատասխանաբար արձագանքում է դրան [42]:

Հանցագործներն առանձնանում են իմպուլսիվության առավել բարձր մակարդակով և ագրեսիվությամբ, ինչը համատեղվում է միջանձնային փոխհարաբերություններում բարձր հուզականությամբ և վիրավորվածությամբ [42]: Վերջինս կոնֆլիկտային իրավիճակներում հանգեցնում է բռնության: Սա վկայում է, որ նրանք վատ են յուրացրել իրավական և բարոյական նորմերը, առավել օտարացված են հասարակությունից և նրա արժեքներից, սոցիալական փոքր խմբերից (ընտանիք, աշխատանքային կոլեկտիվ): Նրանց բնութագրական է նաև սոցիալական վատ հարմարվողականությունը:

Տագնապային անձնավորությունն ամբողջովին այլ կերպ է տեսնում շրջապատող աշխարհը և համապատասխանաբար արձագանքում նրա ազդեցությանը: Նրա առաջատար գիծը հանդիսանում է ինքնահաստատման, ինքնաընդունման, իրեն և իր «Ես»-ի, կյանքում իր տեղի համար պայքարելու անընդհատ ձգտումը [42]:

Ինքնահաստատման միտումը կարող է իրականացվել ուրիշների կարգավիճակի իջեցման, անձի նվաստացման և նույնիսկ ոչնչացման հաշվին: Հենց այդպիսի տագնապային մարդիկ են օժտված ներքին անազատության բարձր մակարդակով և առավել նախատրամադրված են հակահիրավական վարքի դրսևորմանը:

Մարդու վարքի համար առավել էական է ուժեղ կամքի առկայությունը: Համաձայն քրեաբան Ա. Սախարովի՝ ուժեղ կամքը կայանում է ոչ միայն իր ցանկությունները իրականացնելու, այլև նրանցից ոմանք ճնշելու մեջ: Մասնավորապես անվանի քրեաբանը նշում է, որ «Թույլ կամքի դեպքում նույնիսկ բարոյապես դրական սուբյեկտը հայտնվում է իրադրության, արտաքին հանգամանքների ազդեցության տակ, ինչը նպաստում է ոչ պատշաճ արարքի: Ուժեղ կամքի դեպքում ամենը կախված է անհատի բարոյական որակներից, նրա ուղղվածությունից: Բարոյական անձնավորությունը ուժեղ կամքով նույնիսկ ամենաանբարենպաստ պայմաններում գործում է իրավունքի և բարոյականության պահանջներին համապատասխան: Միևնույն ժամանակ կամային, բայց անբարոյական մարդն ընդունակ է առավել վտանգավոր հանցագործության, քանի որ անբարոյական հայացքների և դրդումների կայունությունը պայմանավորում է հակահասարակական վարք ցուցաբերելու հաստատակամությունը և վճռականությունը» [87, էջ 122]:

Դատական հոգեբան Ա.Ռ. Ռատինովի [81] կարծիքով ագրեսիվ վարքը մարդկային ակտիվության ձևերից մեկն է: Ագրեսիայի տակ հաճախ հասկանում են դեստրուկտիվ միջանձնային փոխազդեցություն: Ագրեսիվ վարքի դրսևորում է քրեական ագրեսիան, որն ընկած է անձի նկատմամբ բռնարարքային հանցավոր ոտնձգության հիմքում [81]: Դրա վերլուծությանը նվիրված են մի շարք ուսումնասիրություններ իրավաբանական հոգեբանության բնագավառում: Քրեական ագրեսիայի մեթոդաբանական հիմքերը մշակվել են Ռատինովի կողմից, որն ագրեսիվությունը համարում է անձի հատկություն, և տարբերում է ագեսիվությունն ու ագրեսիան: Ագրեսիվությունը, նրա կարծիքով, կապված է մոտիվացիոն ոլորտի կառուցվածքի և անձի արժեքային համակարգի հետ: Դա անձնային դիրք է, որը կայանում է դեստրուկտիվ միտումների առկայության

մեջ միջանձնային հարաբերությունների ոլորտում, իրենց նպատակները իրականացնելու համար բռնարարքային միջոցներ օգտագործելու և պատրաստականության մեջ [81]: Ագրեսիան հասկացվում է որպես ագրեսիվության դրսևորում դեստրուկտիվ գործողություններում, որոնց նպատակը այս կամ այն անձին վնաս պատճառելն է:

Հակահասարակական արարքի սուբյեկտիվ վճռորոշ բաղադրիչներից է հանդիսանում հակահասարակական (կամ հանցածին) դիրքորոշումը:

Ժամանակակից գիտության մեջ դիրքորոշում հասկացությունը մեկնաբանվում է որպես հոգեֆիզիոլոգիական հոգեվիճակ, որը նախորդում է մարդկանց գործողություններին: Դիրքորոշումն անձի նախատրամադրվածություն է պատասխանելու ներգործություններին՝ ցանկալի կամ անցանկալի ձևով: Դիրքորոշումները արտացոլում են վարքի հավանականությունը, որ մարդիկ կգործեն որոշակի ճանապարհով, բայց դրանք չեն կարող հավասարեցվել վարքի հետ: Դիրքորոշումը բաղկացած է երեք բաղադրիչներից. հուզական, կոգնիտիվ, վարքային կոմպոնենտ, որոնցից յուրաքանչյուրը վերաբերվում է անձնավորության դիրքորոշմանը օբյեկտի նկատմամբ [18]:

Ըստ իրավաբանական հոգեբան Ս.Ջ. Արզումանյանի՝ [18] անձի հուզա-անձնային ոլորտների, նրա բարոյական և իրավական գիտակցության խաթարումն իր արտահայտությունն է գտնում անձնային քրեածին դիրքորոշման մեջ: Քրեածին դիրքորոշումը սահմանվում է որպես անբարենպաստ բարոյա-հոգեբանական ազդեցության տակ ձեռքբերված անձի ներքին պատրաստակամություն անձի անօրինական ակտիվության նկատմամբ: Սոցիալականացման ընթացքում անբարենպաստ ընտանիքներում մեծացող անչափահասների վրա շարունակական բարոյա-հոգեբանական ազդեցության պայմաններում առաջանում են անցանկալի անձնային հատկանիշներ և որակներ, բացասական հուզական և նեգատիվ դիրքորոշումներ, որոնք ամբողջության մեջ կազմավորում են նրանց անօրինական ակտիվության ներքին անձնային պատճառականությունը [18]: Քրեածին դիրքորոշումն

ընկած է անօրինական վարքի մոտիվների հիմքում և ի վիճակի է կառավարել դրանք, ինչպես նաև կարող է գործողության մեջ դնել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի մոտիվներ՝ դրված նպատակը իրականացնելու համար: Վարքի մոտիվները պայմանավորվում են անձի դիրքորոշումներով:

Արժեքային կողմորոշումները հանդիսանում են կարևորագույն բաղադրիչներ անձի կառուցվածքում, որոնք կատարում են վարքի կարգավորիչների գործառույթ և դրսևորվում են մարդկային գործունեության բոլոր ոլորտներում: Անձի արժեքային համակարգը կախված է տարիքային, սեռային և հոգեբանական առանձնահատկություններից, սոցիալական, տնտեսական, քաղաքական, մասնագիտական, ազգային, էթնիկական կարգավիճակից [88]:

Ըստ անվանի իրավաբան Ա.Ա. Գաբուզյանի՝ արժեքային կողմնորոշումները մեծ դեր են խաղում հանցավոր վարքի գենեզիսի մեջ [35]: Դա հիմնավորում է նրանով, որ ցանկացած պահանջմունքները, նույնիսկ գերաճած կարող են բավարարվել օրինաչափ եղանակներով, ցանկացած նպատակի կարելի է հասնել օրինաչափ եղանակներով: Եվ թեպետ խզումը պահանջմունքների և դրանց բավարարման միջև ունի հսկայական քրեածին նշանակություն, սակայն բարոյական ֆիլտրի (արժեքային կողմնորոշումներում) ոլորտի զսպող բաղկացուցիչների դեպքում մարդը կարող է ձեռնպահ մնալ պահանջմունքների բավարարման հանցավոր եղանակից, և հակառակը [35]: Նույնիսկ եթե պահանջմունքների և դրանց բավարարման եղանակիների միջև խզում չլինի, ապա բացասական արժեքա–նորմատիվային համակարգի դեպքում պահանջմունքների բավարարման հանցավոր եղանակը կլինի առավել քան հավանական [35]: Այսպիսով, նշում է նա, անհատի, սոցիալական խմբերի և հասարակության արժեքային համակարգի անհամապատասխանությունը շեղվող վարքի պատճառներից մեկն է:

Հակահասարակական վարքի սուբյեկտիվ բաղադրիչն, ըստ Վ.Կուդրյավցևի [59], ունի երկակի նշանակություն, առաջին հերթին, այն միջնորդավորում է կապը հասարակական կյանքի օբյեկտիվ պայմանների և վարքի միջև: Առանց դրա որևէ հակահրավական վարք

անհնար է: Երկրորդ հերթին, այդ սուբյեկտիվ բաղադրիչը կարող է գործել առանց նախորդող օբյեկտիվ բազայի, քանի որ հասարակական գիտակցությունը հարաբերականորեն ինքնուրույն է:

Հակահասարակական վարքի սուբյեկտիվ կողմի մեջ իր ուրույն տեղն ունի անձի վերաբերմունքը բարոյական և իրավական նորմերի նկատմամբ, որն արտացոլված է անձի բարոյագիտակցության և իրավագիտակցության մեջ [18]: Իրավագիտակցությունը գոյություն ունի անհատական կամ հասարակական ձևով (անձի և խմբի իրավագիտակցություն): Անձի իրավագիտակցությունն առաջնային օղակն է, որից ձևավորվում է հասարակական իրավագիտակցությունը: Բարոյական և իրավական որակների դաստիարակումը իրականացվում է իրավունքի կողմից իրավագիտակցության ձևավորման ճանապարհով:

Վ.Ն. Կուդրյավցևը հակահասարակական վարքի զարգացումը հանգեցնում է հետևյալ երկու օղակներին. խաթարված իրավագիտակցության զարգացմանը, որի հետ կապված սուբյեկտը չի տիրապետում իր իրավաբանական պարտականությունների անհրաժեշտ իմացությանը, երկրորդ՝ արտաքին վարքի, որը և կազմավորում է իրավախախտումը:

Անձի իրավագիտակցությունը ձևավորվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության պայմաններում; Եվ իրավագիտակցության կառուցվածքում պետք է ընդգծել ոչ այնքան իրավունքի իմացությունը, որքան վերաբերմունքը նրա նկատմամբ, այն կիրառելու նկատմամբ պատրաստակամությունը [17]:

Խոսելով հանցավոր վարքի սուբյեկտիվ գործոնների մասին՝ չենք կարող անտեսել անձի հոգեբանական օտարացումը: Յու. Անտոնյանը [9] նշում է, որ պետք է հաշվի առնել, որ վճռորոշ դեր խաղում է ոչ թե ընտանիքի կազմը, ոչ թե անբարենպաստ հարաբերությունները ծնողների միջև, նույնիսկ ոչ նրանց հակահրավական վարքը, այլ նրանց հուզական հարաբերությունը երեխայի նկատմամբ, նրա ընդունումը կամ մերժումը:

Այսպիսով, անձի քրեականացման անձնային, հետևաբար հոգեբանական պայման է հանդիսանում անձի անբարենպաստ զարգացումը՝ ի պատասխան արտաքին աշխարհի հետ երկարատև

անբարենպաստ փոխազդեցության: Անձի անբարենպաստ զարգացում ասելով հասկանում ենք այնպիսի անձնային բնութագրերի ձևավորումը և զարգացումը, որոնք ակտիվ մասնակցություն են ունենում հանցավոր վարք և գործունեություն ծավալելու մեջ: Այդպիսիք են՝ բարձր անձնային տագնապայնությունը, ագրեսիվությունը, հանցածին դիրքորոշումը, հոգեբանական օտարացումը, խաթարված իրավագիտակցությունը, խաթարված արժեքային կողմնորոշումները, հուզա-կամային ոլորտի այլափոխվածությունը և այլն: Թվարկվածներից յուրաքանչյուրը կարող է իր դրսևորումն ունենալ կոնկրետ ֆրուստրացնող իրադրության պայմաններում:

## 2.2. Հետազոտության կազմակերպումն ու մեթոդիկաները

Էմպիրիկ հետազոտություններն իրականացվել են 2007-2016 թվականներին, Երևանի «Վարդաշեն» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում: Հետազոտությանը մասնակցել են 71 դատապարտյալ: Հետազոտվողներին բաժանել ենք ըստ նրանց կողմից կատարված հանցագործությունների տեսակների: Դրանք են՝ կյանքի և առողջության դեմ ուղղված (30-50 տարեկան 28 միջնակարգ կրթություն ունեցող անձիք), սեփականության դեմ ուղղված (23-50 տարեկան 20 միջնակարգ կրթություն ունեցող անձինք) և զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված (20-35 տարեկան 23 միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցող անձինք) հանցագործություններ:

Հետազոտությունը կազմակերպելու համար կիրառել ենք փաստաթղթերի ուսումնասիրության, զրույցի, հարցման, թեստերի մեթոդները:

Հետազոտությունների նպատակն էր՝ որակական և քանակական հետազոտությունների միջոցով պարզել հակահասարակական վարք իրականացնող անձանց այն սուբյեկտիվ գործոնները, որոնք ընդհանուր են տարբեր հանցագործությունների համար, և այն գործոնները, որոնք առավել բնորոշ են որոշակի հանցագործություններին:

Հետազոտություններն իրականացվել են հետևյալ փուլերով. առաջին փուլում ընտրել և դասակարգել ենք հետազոտվողներին ըստ հանցագործությունների տեսակի, ծանոթացել նրանց քրեական գործերին, վերլուծության ենք ենթարկել դրանք, իրականացրել զրույց դատապարտյալների հետ՝ ուղղված իրականացված հանցագործության սուբյեկտիվ գործոնների հետազոտությանը: Մասնավորապես զրույցի հիմնական նպատակն էր ծանոթանալ հետազոտվողի տվյալ հանցագործության վերաբերյալ կարծիքին, պարզել, թե նա ինչում է տեսնում սեփական գոյության իմաստը, ինչպիսի ինքնագնահատական ունի, որոնք են նրա իդեալները և այլն:

Երկրորդ փուլում անց ենք կացրել թեստային հետազոտություններ Սպիլբերգեր–Խանինի «Ռեակտիվ և անձնային տագնապայնության մակարդակի գնահատման սանդղակ», Ջ. Ռոթերի վերահսկման տեղակայման հարցարան, Ե. Ֆոնտալովայի «Արժեքների ակտուալության և հասանելիության», անձնավորության ուսումնասիրության FPI մեթոդիկաներով՝ պարզելու տարբեր բնույթի հանցագործություններ կատարած դատապարտյալների մոտիվացիոն համակարգի, տագնապայնության, ագրեսիվության, արժեքային համակարգի, հուզական և այլ ոլորտների առանձնահատկությունները: Համառոտ ներկայացնենք նշված մթոդիկաների բնութագրերը:

Էմպիրիկ հետազոտության ընթացքում կիրառված թեստային մեթոդները.

Չ.Դ. Սպիլբերգերի – Յու. Լ. Խանինի տագնապայնության ռեակտիվ (իրադրային) և անձնային սանդղակը [41] թույլ է տալիս հետազոտության ենթարկել ինչպես իրադրային, այսինքն տվյալ իրավիճակում սթրեսների ազդեցությամբ ի հայտ եկող տագնապայնությունը, այնպես էլ տագնապայնությունը որպես անձնային բնութագիր:

Արժեքների նշանակության և հասանելիության հարաբերակցության մեթոդիկան (Ե.Ֆոնտալովա) [4] հնարավորություն է տալիս բացահայտել արժեքների աստիճանակարգը, որը ներառում է ներքին անհամաձայնության

արտահայտվածության մակարդակը (ներքին կոնֆլիկտներ և վակուումներ): Անձի դրդապատճառային ոլորտի անհամաձայնություն ասելով հասկանում ենք ցանկալիի (A) և իրականի, հասանելիի (H) միջև անհամաձայնության աստիճանը: Վերջինս համարվում է ընդհանուր ցուցանիշ և նշանակվում է, որտեղ R=(A–H): R-ի նվազագույն արժեքը 0–ն է, իսկ առավելագույնը՝ 72–ը: Նորման գտնվում է 32–37–ի միջակայքում: Անհամաձայնության աստիճանը յուրաքանչյուր արժեքի համար որոշվում է առանձին: Եթե արժեքը գերազանցում է նրա հասանելիությանը, ապա նշանակում է, որ տվյալ մարդու մոտ առկա է ներանձնային կոնֆլիկտ (ՆԿ): Եթե հասանելիությունն է գերազանցում արժեքին, ապախտսվում է ներանձնային վակուումի մասին:

Անձնավորության ուսումնասիրության FPI հարցարանը [2] ստեղծվել է Կեթտելի 16 գործոնային անձնային հարցարանի և MMPI-ի գործնական վերլուծության հիման վրա: Այս թեստի առավելությունը նրանում է, որ չնայած իր բազմագործոն լինելուն, նրա կիրառումն ավելի մատչելի է: Հարցարանը նախատեսված է անձի այն վիճակների և հատկությունների ախտորոշման համար, որոնք առաջնային նշանակություն ունեն սոցիալական ադապտացիայի և վարքագծի կարգավորման համար: Այն ընդգրկում է 12 սանդղակ և 114 հարց: Առաջին հարցը ոչ մի սանդղակի մեջ չի մտնում և ստուգիչ բնույթ ունի: 1–9-րդ սանդղակները հիմնական են, իսկ 10-12–ը ինտեգրացնող: Ներկայացնենք սանդղակների բովանդակությունը.

Սանդղակ 1. (Նևրոտիկություն): Բնութագրում է անձի նևրոտիզացիայի մակարդակը: Բարձր ցուցանիշները համապատասխանում են ասթենիկ տիպի արտահայտված նևրոտիկության համախտանիշին:

Սանդղակ 2. (Ինքնաբերական ագրեսիվություն): Թույլ է տալիս բացահայտել ինտրոտենսիվ տիպի պսիխոպատիզացիան: Բարձր ցուցանիշները վկայում են պսիխոպատիզացիայի բարձր մակարդակի մասին, որը նախադրյալներ է ստեղծում իմպուլսիվ վարքի համար:

Սանդղակ 3. (Դեպրեսիվություն): Թույլ է տալիս ախտորոշել հոգեախտաբանական դեպրեսիվ սինդրոմին բնորոշ նշանները: Բարձր

ցուցանիշները վկայում են հասարակության և իր նկատմամբ հարաբերություններում, վարքագծում և հուզական վիճակներում այդ նշանների առկայության մասին:

Սանդղակ 4. (Գրգռվողականություն): Թույլ է տալիս դատել անձի հուզական կայունության մասին: Բարձր ցուցանիշները վկայում են աֆֆեկտիվ հակազդման հակվածությամբ հուզական անկայունության մասին:

Սանդղակ 5. (Հաղորդասիրություն, մարդամոտություն): Բնութագրում է հասարակական ակտիվության իրական և պոտենցիալ դրսևորումները: Բարձր ցուցանիշները վկայում են շփման արտահայտված պահանջմունքի առկայության և այդ պահանջմունքը բավարարելու մշտական պատրաստակամության մասին:

Սանդղակ 6. (Հավասարակշռվածություն): Արտացոլում է կայունությունը սթրեսի նկատմամբ: Բարձր ցուցանիշները վկայում են սթրեսածին գործոններից լավ պաշտպանվածության մասին, որը հիմնված է լավատեսության, ինքնավստահության և ակտիվության վրա:

Սանդղակ 7. (Ռեակտիվ ագրեսիվություն): Նպատակն է բացահայտել էքստրատենսիվ տիպի պսիխոպատիզացիայի բարձր մակարդակի մասին, որը բնութագրվում է հասարակության նկատմամբ ագրեսիվ հարաբերությամբ և իշխանության արտահայտված ձգտումով:

Սանդղակ 8. (Ամոթխածություն): Արտացոլում է անձի հակվածությունը սովորական կենսական իրավիճակներին սթրեսածին հակազդմանը, որն ընթանում է պասիվ–պաշտպանողական ձևով: Բարձր ցուցանիշները վկայում են տագնապի, անվստահության և կաշկանդվածության մասին, ինչի արդյունքում դժվարություններ են առաջանում՝ կապված սոցիալական շփման հետ:

Սանդղակ 9. (Բացվածություն): Թույլ է տալիս բնութագրել հասարակական միջավայրի հետ հարաբերությունները և ինքնաքննադատության մակարդակը: Բարձր ցուցանիշները վկայում են հասարակական միջավայրի հետ անկեղծության և վստահության մթնոլորտի ստեղծման ձգտումների մասին, որը զուգակցվում է ինքնաքննադատության բարձր մակարդակի հետ:

Սանդղակ 10. (Էքստրավերսիա–ինտրովերսիա): Բարձր ցուցանիշները վկայում են արտահայտված էքստրավերսիայի, իսկ ցածրերը՝ ինտրովերսիայի մասին:

Սանդղակ 11. (Հուզական շարժունություն): Բարձր ցուցանիշները վկայում են հուզական անկայունության մասին, որը դրսևորվում է տրամադրության հաճախակի փոփոխություններում, բարձր գրգռվողականության և անբավարար ինքնակարգավորման մեջ: Ցածր ցուցանիշները բնութագրում են հուզական կայունությունը և ինքնատիրապետման կարողությունը:

Սանդղակ 12. (Առնականություն–կանացիություն): Բարձր ցուցանիշները վկայում են հոգեկան գործունեության ընթացքի տղամարդկային, իսկ ցածրերը՝ կանացի տիպերի մասին:

Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստի □90□ ընտրությունը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. նախ, ըստ Ջ. Ռոթթերի, ինտերնալությունն ու էքստերնալությունն անձի հասունության ցուցանիշ են, որքան բարձր է ինտերնալությունը, այնքան անձն ավելի հասուն է. օրինակ, հետազոտությունները վկայում են, որ սկսած վաղ դեռահասությունից տարեցտարի անձի ինտերնալությունը բարձրանում է: Բացի այդ, այս թեստը վկայում է անձի ինքնաքննադատականության սեփական արարքների համար պատասխանատվության մակարդակի մասին: Ինքնաքննադատականությունը և սեփական արարքների համար պատասխանատվությունը անձի բարոյական զարգացման և հասունության կարևոր ցուցանիշ է և ուղղակիորեն առնչվում է անձի հանցավոր դիքորոշումների ու վարքի հետ: Ըստ մեզ, որքան ավելի ցածր է անձի ինքնաքննադատականությունը, այքան ավելի է անձը հակված հակահասարակական արարքների:

## 2.3. Հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոնների հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը

Ընդհանուր առմամբ հետազոտության են ենթարկվել 71 դատապարտյալ: Հետազոտության ընթացքում նախ ծանոթացել ենք նրանց գործերին (71 դատապարտյալ), ապա, անցկացրել զրույց (ինտերվյու)՝ 21 դատապարտյալի հետ: Հետազոտության հաջորդ փուլում անց ենք կացրել թեստային հետազոտություններ (71 դատապարտյալի հետ), ապա համեմատել և ամփոփել երկու փուլերի հետազոտությունների արդյունքները:

Հետազոտությունների ընթացքում նախ հետազոտվողներին ներկայացվում էր դրանց նպատակը, այն է՝ պարզել, թե ինչ հոգեբանական, սուբյեկտիվ, ոչ հանցագործության հանգամանքներով պայմանավորված գործոններ են նպաստում հանցագործությունների կատարմանը: Հատուկ նշվում էր, որ բուն հանցագործության կամ դատապարտյալի մեղավորության վերաբերյալ հետազոտություններ չեն իրականացվելու, հետազոտվողի անուն ազգանունը չի հրապարակվելու, և որ դատապարտյալը, եթե կամենա, կարող է հրաժարվել ցանկացած հետազոտությունից կամ հարցերին պատասխանելուց:

Զրույցն իրականացնելու համար մշակել ենք ընդհանուր և, յուրաքանչյուր հետազոտվողի գործի հիման վրա, մասնավոր հարցեր: Ընդհանուր հարցերը վերաբերում էին անձի աշխարհայացքին, կյանքի իմաստին, դիրքորոշումներին, հանցագործություն կատարելու վերաբերյալ պատկերացումներին (օրինակ՝ ո՞ր դեպքում կարելի է մարդ սպանել, ի՞նչ կարծիքի եք գողության որպես երևույթի մասին և այլն), ինքնաբնութագրմանը, ինքնավերաբերմունքին և ինքնագնահատականին (ինչպե՞ս կբնութագրեիք ինքներդ ձեզ, կա՞ն բնավորության գծեր, որոնք նպաստել են հանցագործության կատարմանը, համարում ե՞ք ձեզ տագնապային, ագրեսիվ, հարգում ե՞ք ձեզ, ինչի՞ համար ձեզ կգովեիք կամ կքննադատեիք և այլն), հետազոտվողի ընտանիքի, ընկերական շրջապատի, աշխատանքի, դաստիարակության, կենսագրության առավել կարևոր իրադարձություններին և այլն: Յուրաքանչյուր հետազոտվողի հետ զրույցի համար կազմվում էր առանձին հարցարան: Զրույցի սկզբում տրվում էին առավել չեզոք հարցեր, ապա, կոնտակտի հաստատմանը զուգընթաց, ավելի շատ

անկեղծություն պահանջող հարցեր: Ձրույցները ձայնագրվում էին հեռախոսով:

Հետազոտությունների էությունը և տրամաբանությունը հասկանալի դարձնելու համար ներկայացնենք տարբեր տիպի հանցագործությունների համար դատապարտված անձանց հետազոտությունների մի քանի օրինակ:

**Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն կատարած Արմեն Բ.-ի քրեական գործից հատված**

Արմեն Բ.–ն և նրա ընտանիքը իրենց բնակարանը վաճառելուց հետո, վարձով բնակվել են Գևորգ Ա.–ի ընկերուհուն պատկանող տանը: Վարձավճարների ստացման պարտականությունը դրվել է Արմեն Բ.-ի վրա: Բնակարանի վարձը և էլեկտրաէներգիայի ծախսի գումարները՝ ընդհանուր գումարով 500 ԱՄՆ դոլարի չափով չվճարելու կապակցությամբ Գևորգ Ա.–ի և Արմեն Բ.–ի մոր միջև անընդհատ վիճաբանություններ են առաջացել: Խուսափելով վերը նշված վարձավճարները տալուց, Արմեն Բ.-ն և նրա մայրը առանց տեղյակ պահելու Գևորգ Ա.–ին, վերցնելով իրենց իրերը հեռացել են այդ վարձով բնակարանից, իրենց հետ տանելով նաև բնակարանի բանալին: Գևորգ Ա.–ի կողմից սկսվել են նրանց փնտրտուքի գործողությունները և իմանալով նրանց նոր բնակարանի մասին, Գևորգ Ա.–ն երեկոյան քրոջ և վերջինիս ամուսնու հետ գնացել են նրանց նոր վարձով բնակարան, որտեղ պարտքի շուրջ սկսել են վիճաբանել, անվայել խոսքեր ասել մոր հասցեին և քաշքշել նրան և վերջիններս այնտեղից հեռացել են:

Վրդովված լինելով նրանց վերաբերմունքից, Արմեն Բ.–ն նրանց հեռանալուց հետո, մեկ ժամանց տանից նախապես վերցնելով սառը զենք հանդիսացող դանակը՝ սպանելու դիտավորությամբ, գնացել է Գևորգ Ա.–ի բնակարանը, որտեղ բնակվել են Գևորգ Ա.–ն ու իր մայրը՝ Աննա Վ.–ն: Մուտք գործելով նրանց բնակարան, շահադիտական դրդումներով, վարձը չվճարելու պատճառով, առանձին դաժանությամբ դանակի 17 հարվածներ է հասցրել ու սպանել Աննա Վ.–ին, հետո առանձին դաժանությամբ, խոշտանգելով,

դանակի բազմաթիվ թվով 14 հարվածներով սպանության փորձ է կատարել Գևորգ Ա.–ի նկատմամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով չի կարողացել մինչև վերջ հասցնել իր հանցավոր մտադրությունը, Գևորգ Ա.–ի կողմից օգնություն կանչելու պատճառով: Այդ պահին լսելով Գևորգ Ա.–ի գոռոցների ձայնը, Դերենիկ Ա.-ն օգնության է հասել և փորձել է օգնել Գևորգ Ա.–ին, սակայն հենց այդ պահին Արմեն Բ.–ն դուրս է եկել բնակարանից, դանակը ձեռքին և հպվելով Դերենիկ Ա.–ին, դանակով հարվածել է նրա ձախ ուսագոտու շրջանին, պատճառել է թեթև մարմնական վնասվածք, առողջության թեթև քայքայումով և դիմել փախուստի:

**Դատապարտյալ Արմեն Բ.-ի հետազոտությունը զրույցի (ինտերվյուի) մեթոդով**

Զրույցն իրականացվել է հետևյալ հարցերի շուրջ. Ինչպե՞ս կբնութագրեիք Ձեր բնավորությունը: Ձեր բնավորության ո՞ր գծերից եք գոհ և որից դժգոհ: Քանի՞ տոկոսով եք գոհ ձեզանից: Համարու՞մ եք Ձեզ շուտբռնկվող մարդ: Ինչպե՞ս կբնութագրեիք ձեր դաստիարակությունը: Ձեր ամենամոտ ընկերն ինչպե՞ս կբնութագրեր Ձեզ: Համարու՞մ եք Ձեզ խելացի, կամային, հավասարակշռված, ճկուն, շփվող մարդ. քանի՞ տոկոսով: Կարող ե՞ք ներկայացնել Ձեր սկզբունքները մարդկանց հետ հարաբերություններում, ասենք պետք է կամ պետք չի վստահել մարդկանց և այլն: Ո՞րն եք համարում ձեր կյանքի իմաստը: Կա՞ն մարդիկ ում կուզեիք նմանվել: Մանկության շրջանում ի՞նչ մականուն ունեիք: Ի՞նչ եք կարծում, որ դեպքերում կարելի է մարդ սպանել: Եթե հնարավորություն լիներ կյանքը հետ տալ, նույն արարքը կկրկնեի՞ք, թե ոչ և այլն:

Ստորև ներկայացնում ենք **Արմեն Բ.-ի** հետ զրույցից մի հատված:

Հետազոտող – Բարև Ձեզ, ես մի քանի հարցեր ունեմ, որոնք զուտ գիտահետազոտական նպատակներ են հետապնդում: Դրանց

պատասխանները որևէ կապ չունեն Ձեր քրեական գործի հետ, որևէ մեկին չեն ներկայացվելու, այսինքն գաղտնի են լինելու: Հետազոտությունն անոնիմ է իրականացվելու և ներկայացվելու: Ցանկացած հարցի, որը Ձեզ Դուր չի գա, կարո՞ղ եք հրաժարվել պատասխանելուց: Սկսե՞նք մեր զրույցը:

Արմեն Բ. - Սկսենք, ես վախենալու բան չունեմ, ի՞նչ հարց ուզում եք տվեք, ում ուզում եք, պատմեք:

Հետ.- Ինչպե՞ս կբնութագրեիք Ձեզ, Ձեր բնավորությունը:

Արմեն Բ.- Ես թասիբով մարդ եմ, մի քիչ շուտեմ բորբոքվում, բայց ոչ անտեղի: Սիրում եմ ճիշտը ու շատ եմ ջղայնանում, երբ ուզում են վրադ ֆռռալ, գցել, խաբել ...դե ինչ ասեմ:

Հետ. – Ձեզ համարում ե՞ք ագրեսիվ, ջղային:

Արմեն Բ.- Նայած ժամանակ, որ չներվայնացնեն հանգիստեմ:

Հետ. – Ձեր շրջապատում Ձեզ հարգու՞մ են:

Արմեն Բ. - Երևի, չեմ հարցրել. հարգող էլ կաչուզող էլ:

Հետ.- Իսկ կարելի է ասել, որ Դուք ձեզ հարգում եք:

Արմեն Բ. – Բաներ կան, որ ինձնից դժգոհ եմ, բայց ընդհանուր հարգում եմ:

Հետ.- Ի՞նչ նեք համարում Ձեր կյանքի իմաստը:

Արմեն Բ.- Չգիտեմ, ինչ կյանքի իմաստ, ապրում ենք էլ, Աստված ստեղծել է, ապրում ենք:

Հետ.- Ասենք, հանուն ինչի եք ապրում:

Արմեն – Դե հանուն իմ ընտանիքի, հանուն կյանքի:

Հետ.- Դուք մարդ եք սպանել. ընդհանրապես մարդասպանության մասին ի՞նչ կարծիք ունեք:

Արմեն.- Ես աֆեկտի վիճակում եմ եղել, ում էլ էդպես վիրավորեին կսպաներ, եթե իհարկե թասիբ ունենա:

Հետ.- Բայց ընդհանրապես մարդասպանության մասին ինչ կարծիքի եք:

Արմեն Բ.- Եթե մարդը քեզ էնպես է վիրավորել, որ չես կարող ներել. դու կամ քեզ պիտի սպանես կամ իրեն: Մարդուն հո հենց էնպես չեն սպանում, մի բան արել է չէ:

Հետ.- Այսինքն համարում եք, որ կարելի է մարդ սպանել:

Արմեն Բ.- Չէ, էդպես չէ, էն դեպքերում, երբ սարսափելի սխալ բան է արել: Օրենքով էլ չէ գնդակահարություն կա, բան կա:

## Զրույցի մեթոդով հետազոտության արդյունքների վերլուծություն

Հետազոտության ենթարկված տարբեր բնույթի հանցագործություններ կատարած 21 (կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ կատարած՝ 8, սեփականության դեմ ուղղված հանցագործություններ կատարած 7, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն կատարած՝ 6 դատապարտյալ) դատապարտյալի հետ իրականացված զրույցը հստակորեն բացահայտեց երկու կարևոր հանգամանք. նախ, որպես կանոն, հանցագործություն կատարած անձն ունի իր հանցագործությունն արդարացնող, ռացիոնալիզացիայի ենթարկող տեսություն, նրա համար տվյալ հանցագործությունը որոշակի պայմաններում, իրադրություններում սխալ կամ մեղք չի համարվում: Հարցման ենթարկված դատապարտյալներից միայն մեկը (4,76%-ը) միանգամայն բացասական լույսի ներքո ներկայացրեց իր կատարած հանցանքը, մնացած 20-ը (95,2%-ը) այս կամ այն կերպ արդարացնում էին տվյալ հանցագործությունը, ընդհանուր առմամբ համարելով այն բացասական երևույթ, գտնում էին, որ որոշակի իրավիճակներում, ու հատկապես իրենց պարագայում տվյալ հանցագործությունը թույլատրելի է: Ըստ որում, իր տեսակետը հանցագործություն կատարած անձը արդարացնում է ուրիշների վրա. նրա կարծիքով, ցանկացած մարդ նման իրավիճակում էդպես պետք է վարվի: Որպես օրինակ, ներկայացնենք սեփականության դեմ ուղղված հանցագործություն կատարած Հայկ Ս.-ի քրեական գործից և անցկացված զրույցից հատվածներ:

### Հատված Հայկ Ս.-ի քրեական գործից

Հայկ Ս.–ն 2005թ. մարտի 25–ին ժամը 20–30-ի սահմաններում Մաշտոցի պողոտայում նստել է երթուղային տաքսի տուն գնալու

նպատակով: Երկու կանգառ հետո նույն ավտոմեքենան է նստել նաև Վարդան Ա.–ն: Հայկ Ս.–ն վերջինիս մոտնկատել է բջջային հեռախոս և որոշել է այն հափշտակել: Վարդան Ա.–ն հասնելով փողոցների խաչմերուկ իջել է ավտոմեքենայից: Հայկ Ս.–ն իր հանցավոր մտադրությունը իրականացնելու նպատակով իջել է երթուղային տաքսուց և հետևել է Վարդան Ա.–ին: Հայկ Ս.–ն հարձակվել է Վարդան Ա.–ի վրա, բռնել է նրա իրանից և պահանջել է տալ բջջային հեռախոսը: Տուժողը հրել է նրան, որից հետ Հայկ Ս.–ն կանգնել է նրադիմաց, փորձել է հափշտակել հեռախոսը, սակայն չկարողանալով Վարդան Ա.–ի ձեռքը հանել է գրպանից, նրան գցել է գետնին և կյանքի ու առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով, կծելով աջ ձեռքը, պատճառելով մարմնական վնասվածք, բացահայտ հափշտակել է Վարդան Ա.–ի բջջային հեռախոսը և դիմել է փախուստի: Գնացել է տուն, հանել է հեռախոսի քարտը և հեռախոսի հետ պահել է իրենց տանը: Հետագայում հեռախոսի սիմ քարտը նետել է, իսկ հեռախոսը պահել է իրենց տան նկուղում:

**Հայկ Ս.-ի հետ անցկացված զրույցից հատված**

**Հետ-** Հայկ ընդհանրապես ինչ կարծիք ունեք գողության վերաբերյալ:

Հայկ Ս.-Դե բոլորն են գողանում, մեկը շատ, մյուսը քիչ, մինիստրները չե՞ն գողանում, թալանում են, ով ինչ հնարավորություն ունի:

Հետ.- Այսինքն գտնում եք, որ գողությունը նորմալ բան է:

Հայկ.- Չեմ գտնում, որ նորմալ բան է, բայց եթե ապրելու հնարավորություն չունես, ի՞նչ անես: Գործ չկա, բան չկա:

Ինչպես տեսնում ենք զրույցի այս փոքր հատվածից Հայկ Ս-ն միանգամայն արդարացնում է գողությունը որպես հանցագործություն, իր արարքը, քանի որ «բոլորն» են դա անում և, որ ապրելու հնարավորություն չունենալու դեպքում գողությունը միանգամայն արդարացված է:

Մյուս կարևոր բացահայտումը, որ կատարվեց զրույցի մեթոդով իրականացված մեր հետազոտության ընթացքում այն էր, որ

դատապարտյալների բացարձակ մեծամասնությունը 16-ը (76%-ը) որևէ իմաստ չէր տեսնում սեփական գոյության մեջ: Որպես օրինակ ներկայացնենք զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն կատարած Գևորգ Հ. -ի հետ զրույցի համապատասխան հատվածը:

**Գևորգ Հ.-ի քրեական գործից հատված**

Գևորգ Հ.–ն ծառայելով զարամասում որպես երկրորդ հրաձգային գումարտակի առաջին վաշտի երկրորդ դասակի հրամանատար, հանդիսանալով պաշտոնատար անձ, 2005թ. հոկտեմբերից գտնվելով մարտական հերթապահության մեջ և նշանակված լինելով թիվ 117 և 118 մարտական հենակետերի պատասխանատու, դիրքի ավագ, 2005թ. հոկտեմբերի 21–ին ժամը 7.30–ի սահմաններում հայտնաբերելով արթուն հերթապահ, շարքային Արթուր Վ.–ի բացակայությունը, խստապահանջ սպային տպավորություն թողնելու, կարիերիստական նկատառումներով, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանները, խախտելով ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնադրության կանոնագրքի պահանջները, առանց ծառայողական անհրաժեշտ «տագնապ» հրաման է տվել, ապա կացարանի զինաբուրգից վերցրել է նույն դասակի ժամկետային զինծառայող շարքային Հայկ Թ.–ին ամրակայված ինքնաձիգի նույն ինքնաձիգի համար նախատեսված 1 փամփշտուփը, լիցքավորել այն ու գտնվել կացարանում, 4–5 անգամ մեկական կրակոց է արձակել կացարանի մուտքի դռնից դուրս վեր ուղղությամբ, իսկ երբ զինվորները արթնանալով կացարանի մուտքի դռան առջև վերցրել են սաղավարտները, Գևորգ Հ.–ն նրանց արագացնելու նպատակով, ակնհայտ վտանգ է ստեղծել շրջապատում գտնվող զինվորների նկատմամբ, դարձյալ մեկ կրակոց է արձակել նրանցից մի քանի մետր հեռավորությամբ գետնին շարված քարերին: Արձակված գնդակը հանդիպելով կլորավուն քարի՝ անդրադարձ է կատարել և կպել է նույն դասակի ժամկետային զինծառայող շարքային Ստեփան Թ.–ի ձախ այտին և և պատճառել հրազենային վնասվածք: Վերջինս ծանր վիճակում տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ մահացել է:

**Հատված Գևորգ Հ.-ի հետզրույցից**

Հետ.- Գևորգ հանուն ինչի՞ էս ապրում, ի՞նչն ես համարում քո կյանքի իմաստը:

Գևորգ Հ.- Ի՞նչ իմաստէստեղ, ոչ մի իմաստէլ չկա:

Հետ.- Դե գաղութում չէ, դուրս ես գալու չէ, ընդհանրապես քո կյանքի իմաստի մասին է խոսք:

Գևորգ Հ. – Ի՞նչ ասեմ, ապրում ենք էլի, չեմ կարող ասել, թե ինչու...քնելու, զարթնելու, ուտել-խմելու...

Զրույցի ընթացքում 5 դատապարտյալ (23,5%-ը) հստակ նշեցին իրենց կյանքի իմաստը: Նրանցից երեքը որպես իրենց կյանքի իմաստ տեսնում էին «կյանքը վայելելը», ինչը, ըստ Վ. Ֆրանկլի, սխալ դիրքորոշում է կյանքի իմաստի հարցում և ի վերջո նորից հանգեցնելու կյանքի անիմաստության զգացողության: Երկու դատապարտյալ որպես իրենց կյանքն իմաստավորող գործոն նշեցին իրենց ընտանիքը և երեխաները:

**Թեստային հետազոտությունների արդյունքները**

Թեստային հետազոտություններին մասնակցել են 71 դատապարտյալ:

Կիրառվել են Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստը, Ե. Ֆոնտալովայի «Արժեքների ակտուալության և հասանելիության» մեթոդիկան, անձնավորության ուսումնասիրության FPI հարցարանը և Սպիլբերգերի-Յու.Լ. Խանինի ռեակտիվ (իրադրային) և անձնային տագնապայնության սանդղակը:

**Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստի արդյունքները**

Ըստ Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստի արդյունքները ցույց տվեցին, որ դատապարտյալների 24%-ը (17 դատապարտյալ) ինտերնալ են, 76%-ը (54 դատապարտյալ)՝ էքստերնալ: Ըստ որում, որևէ էական տարբերություն չկար

տարբեր բնույթի հանցագործություն կատարած անձանց հետազոտության արդյունքներում, այսինքն էքստերնալությունն բնորոշ է ընդհանրապես հանցավոր հակումներ դրսևորող անձանց:

Նկ. 1

Զ. Ռոթերի վերահսկման տեղակայման թեստի արդյունքները




**Ե. Ֆոնտալովայի «Արժեքների ակտուալության և հասանելիության» մեթոդիկայով իրականացված հետազոտության արդյունքները**

Հետազոտությանը մասնակցել են 71 դատապարտյալ (նույն ընտրանքը ինչ նախորդ հետազոտություններում): Հետազոտությունները ցույց տվեցին, որ դատապարտյալների համար առավել ակտուալ արժեքներն են նյութական բարեհարմարությունը (այս արժեքը բարձր է 63 դատապարտյալի, այսինքն 88%-ի շրջանում) և ազատությունը (այս արժեքը բարձր է 65 դատապարտյալի, այսինքն 91%-ի շրջանում): Միևնույն ժամանակ հենց այս ոլորտներում էլ ակտուալ արժեքների և դրանց հասանելիության միջև խզումը, այսինքն՝ ներքին բախումը ամենամեծերից է (տես նկ. 2), նրանց համար առավել ակտուալ արժեքները նաև ամենաանհասանելի են: Ինչպես և նախորդ գործոնը, այս գործոններն էլ տարբեր բնույթի հանցագործություններ կատարած անձանց (կյանքի և առողջության,

սեփականության, զինվորական) պարագայում նույնն են, այսինքն՝ նյութական բարեհարմարությունը գերարժեք դարձնելն ընդհանրապես բնորոշ է հանցագործներին: Մենք այս հետազոտությամբ բացահայտված մյուս գերարժեքը՝ ազատությունը համարում ենք իրավիճակային՝ պայմանավորված դատապարտյալների կալանավայրում գտնվելով, այդ պատճառով էլ այն չենք համարում հանցագործությանը նպաստող սուբյեկտիվ գործոն:

Նկ.2

Արժեքների նշանակության և հասանելիության հարաբերակցության մեթոդով ստացված արդյունքները




## Տարբեր բնույթի հանցագործություններ կատարած անձանց հետազոտություն FPI հարցարանի միջոցով

Հետազոտություններին մասնակցել է նույն ընտրանքը՝ 71 դատապարտյալ: Այս հետազոտությունները ցույց տվեցին, որ միայն բարձր ռեակտիվ ագրեսիվությունն է բնորոշ բոլոր երեք տիպի հանցագործություն կատարած անձանց, իսկ մյուս բնութագրերի առումով որևէ էական տարբերություններ չարձանագրվեցին (Նկ. 3): Բացառություն էր կազմում

«բացվածություն» բնութագրի ցուցանիշը, որը բարձր էր զինվորական հանցագործություն կատարած անձանց շրջանում, սակայն դա դրական հատկություն է, վկայում է մարդկանց հետ հարաբերություններում անկեղծության և վստահության մթնոլորտի ստեղծման ձգտումների մասին և չի կարող համարվել հանցավոր վարքի համար նպաստավոր գործոն: Ինչ վերաբերում է ռեակտիվ ագրեսիվությանը, ապա դրա բարձր ցուցանիշները վկայում են հասարակության նկատմամբ ագրեսիվ տրամադրվածության և պսիխոպատիզացիայի բարձր մակարդակի մասին:

**Նկ. 3**

FPI հարցարանի միջոցով ստացված միջին ցուցանիշներ




**տագնապայնության սանդղակի արդյունքները**

Հետազոտություններին մասնակցել է նույն ընտրանքը՝ 71 դատապարտյալ: Այս հետազոտությունը ցույց տվեց (Նկ. 4), որ չկան բնութագրեր, որոնք ընդհանուր լինեն տարբեր բնույթի հանցագործություններ կատարած անձանց շրջանում, այսինքն ոչ՛ ռեակտիվ, և ոչ՛ էլ անձնային տագնապայնությունը բնորոշ չի

հակահասարակական արարք թույլ տված անձանց (այս արդյունքը հակասում է որոշ հետազոտությունների արդյունքներին): Միևնույն ժամանակ պարզվել է, որ կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ կատարած անձանց շրջանում բարձր է անձնային տագնապայնություն (այս բնութագիրը դրսևորվում է նրանց 71%–ի մեջ):

**Նկ. 4.**

Չ.Դ. Սպիլբերգերի-Յու.Լ. Խանինի տագնապայնության ռեակտիվ/իրադրային/և անձնային սանդղակի արդյունքները




**Հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրահանգումները**

- Կարելի է առանձնացնել հակահասարակական վարքի (հանցագործության) դրսևորմանը նպաստող սուբյեկտիվ գործոնների հետևյալ խմբերը. ա/ կոգնիտիվ գործոններ (պատկերացումները հանցագործության վերաբերյալ), դիրքորոշումներ, բ/ մոտիվացիոն գործոններ (պահանջմունքներ, դրդապատճառներ, կյանքի իմաստավորվածություն, արժեքներ), գ/ անձի անհատական առանձնահատկություններ (բնավորություն, խառնվածք), հուզական գործոններ (տագնապայնություն, ագրեսիվություն):

- Հակահասարակական վարքին նպաստող սուբյեկտիվ գործոնները կարելի է բաժանել երկու խմբի՝ գործոններ, որոնք ընդհանուր են տարբեր բնույթի հանցագործություններ կատարած անձանց և սուբյեկտիվ գործոններ, որոնք բնորոշ են առանձին հանցագործությունների:
- Տարբեր բնույթի հանցագործություններ կատարած անձանց բնորոշ են հետևյալ ընդհանուր բնութագրերը. կյանքի անիմաստության զգացումը, էքստերնալությունը՝ որպես անձի հասունության, ինքնաքննադատականության և սեփական արարքների համար պատասխանատվության ցածր մակարդակները պայմանավորող գործոն, նյութական բարեհարմարության ընդունումը որպես գերարժեք և բարձր ռեակտիվ ագրեսիվությունը:
- Բարձր անձնային տագնապայնությունը բնորոշ է կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ կատարած անձանց:
- Անձի հակահասարակական գործունեության կամ կոնկրետ արարքի կողմնորոշման հիմքում առկա է պատկերացումների յուրահատուկ համակարգ, տեսություն, որով անձն իր և ուրիշների համար տրամաբանորեն հիմնավորում է, ռացիոնալիզացիայի է ենթարկում, արդարացնում է տվյալ արարքը կամ գործունեությունը: Հենց այդ պատկերացումների համակարգի միջոցով է անձը «հանում» տվյալ հանցագործությունն իրականացնելու բարոյական արգելքը:

# ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ
# ՀԱԿԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

## 3.1. Սուբյեկտիվ գործոնների գենեզիսի հոգեբանական առանձնահատկությունները

Հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոններն ունեն առաջացման, կազմավորման և դրսևորման որոշակի հոգեբանական օրինաչափություններ, զարգացման յուրատիպ շարժընթաց: Վերջինիս հոգեբանա-քրեաբանական բնութագիրը հնարավորություն է տալիս հետևելու անձի հետ կատարվող հոգեբանական (բարոյա-իրավական և այլաբնույթ) փոփոխությունների ընթացքին, ինչն իր հերթին խիստ կարևոր է հանցագործությունների վաղ հոգեբանական կանխարգելման համարժեք միջոցառումները ընտրելու համար [58]:

Սուբյեկտիվ գործոնները ուսումնասիրելիս անհրաժեշտություն է առաջանում բացահայտել դրանց հիմքերը: Մարդը չի ծնվում օրինապահ կամ հանցագործ: Այս կամ այն հանցանքը կատարելու միտումը կամ դիրքորոշումը նրա կողմից յուրացվում է իրեն շրջապատող իրականության ազդեցության տակ, կյանքի կոնկրետ պայմաններում: Նրանից, թե ինչպիսին կլինեն այդ պայմանները, ում և ինչի հետ կբախվի անհատը իր կյանքի ընթացքում, կախված է նրա՝ որպես անձնավորության ձևավորումը:

Անձի սոցիալական և հոգեբանական որակները՝ աշխարհայացքը, քաղաքական, բարոյական և այլ հայացքները, ունակություններն ու սովորությունները, վարքի և բնավորության առանձնահատկությունները, ձևավորվում են մարդու ողջ կյանքի ընթացքում՝ շրջապատող միջավայրի հետ նրա փոխազդեցության արդյունքում: Հենց անձի ձևավորման բարոյական արատներն են

բերում հակահասարակական հայացքների առաջացմանը և ամրապնդմանը, այնուհետև հանցագործության կատարմանը [58]:

Մարդու անձնավորությունը ձևավորվում է գործունեության ընթացքում: Գործունեության շատ տեսակներ մարդու կյանքում զբաղեցնում եմ տարբեր տեղեր. խաղին որոշակի տարիքում փոխարինում է ուսումնական գործունեությունը, այնուհետև՝ աշխատանքայինը: Եվ ամեն գործունեություն համատեղվում է շփման հետ: Իրականում շփումը դա կոմունիկատիվ գործունեություն է, որով մարդը զբաղվում է ողջ կյանքի ընթացքում [44]:

Անձի ձևավորման գործընթացն ընդունված է դիտել որպես սոցիալականացում: Անձի սոցիալականացման ընթացքում յուրացվում են սոցիալական նորմեր և դերեր, դիրքորոշումներ և այլն, որոնք անհրաժեշտ են անձնավորություն դառնալու համար: Առանձնացնում են առաջնային սոցիալիզացիա, կամ երեխայի սոցիալիզացիա, և միջանկյալ, որը նշանակում է անցումը պատանեկությունից հասունության, այսինքն 17-18 մինչև 23-25 տարեկանը [44]:

Անձի ձևավորման մեջ հատկապես կարևոր դեր է խաղում առաջնային սոցիալիզացիան, երբ երեխան դեռ անգիտակցորեն յուրացնում է վարքի ձևերը և օրինակները, մեծերի տիպիկ հակազդումները կյանքի այս կամ այն խնդիրներին [44]: Ինչպես ցույց են տալիս հանցագործների անձին և վարքին վերաբերող հոգեբանական հետազոտությունները, նույնիսկ հասուն մարդը հաճախ վերարտադրում է իր վարքում այն, ինչը տպավորվել է իր հոգեկանում մանկության ժամանակ: Օրինակ՝ նա կարող է ուժի օգնությամբ լուծել կոնֆլիկտն այնպես, ինչպես դա արել են իր ծնողները: Կարելի է ասել, որ հանցավոր վարքը որոշակի իմաստով առաջնային սոցիալականացման հետևանք է, իհարկե այլ ձևերով: Առաջնային, վաղ սոցիալականացման թերությունները ընտանիքում կարող են ունենալ քրեածին նշանակություն առաջին հերթին այն պատճառով, որ երեխան դեռ չի յուրացրել այլ դրական ազդեցություններ, նա ամբողջովին կախված է մեծերից և անօգնական է նրանց առջև: Այդ պատճառով անձի ձևավորումն

ընտանիքում առավել ուշադրության է արժանանում: Ընտանիքն այն պատճառական շղթայի գլխավոր օղակն է, որը բերում է հանցավոր վարքի: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ երբ մարդը վաղ տարիքում յուրացրել է անհրաժեշտ բարոյական կանոններ, նա վստահորեն անցնում է իր կենսուղու բոլոր բարդ խաչմերուկները, ժամանակին կանխազգում է և հեշտ է հաղթահարում ճիշտ ճանապարհից շեղվելու վտանգը: Եվ հակառակը՝ նա, ով մանկության ժամանակ չի ստացել անհրաժեշտ բարոյական դաստիարակության պաշար, ավելի է ենթակա սայթաքումների և սադրանքների:

Սակայն անբարենպաստ և ոչ լրիվ ընտանիքների շուրջ եղած բազմաթիվ ուսումնասիրությունների դեպքում անհասկանալի է դառնում, թե ինչու այդ ընտանիքներից շատ երեխաներ չեն կատարում հակահրավական գործողություններ: Անբարենպաստ ընտանիքների թվին են դասվում նրանք, որոնցում ծնողները կատարում են հակահրավական կամ անբարոյական գործողություններ: Հոր բացակայությունը, օրինակ, կամ նրա անբարոյական վարքագիծը ոչ միշտ է, որ պատճառ է դառնում իրավախախտ անձնավորության ձևավորման համար: Այդ պատճառով պետք է հաշվի առնել, որ վճռորոշ դեր խաղում են ոչ թե ընտանիքի կազմը, ոչ թե հարաբերությունները ծնողների միջև, նույնիսկ ոչ նրանց հակահրավական վարքը, այլ, ինչպես շեշտում են անվանի քրեահոգեբաններ Յու. Անտոնյանը, Վ. Կուդրյավցևը և Վ.Էմինովը, նրանց հուզա-զգացմունքային վերաբերմունքը և հարաբերությունները երեխայի նկատմամբ, նրա ընդունումը կամ մերժումը [13]:

Սակայն երեխայի կյանքի պայմաններն ուղղակիորեն և անմիջականորեն չեն որոշում նրա հոգեկան և բարոյական զարգացումը: Միևնույն պայմաններում կարող են ձևավորվել անձի տարբեր առանձնահատկություններ, կախված նախևառաջ նրանից, թե միջավայրի հետ ինչ փոխհարաբերությունների մեջ է գտնվում մարդը, ինչ կենսաբանական առանձնահատկություններով է օժտված: Միջավայրի ազդեցությունների ըմբռնումը պայմանավորված է նրանով, թե դրանք երեխայի զարգացման վաղ շրջանում ձևավորված ինչ հոգեբանական որակների միջոցով են բեկվում:

Բազմաթիվ ապացույցներ կան, որ ջերմ հուզա-զգացմունքային շփումներով, երեխաների նկատմամբ հարգալից վերաբերմունքով ընտանիքներում ակտիվորեն ձևավորվում են այնպիսի որակներ, ինչպիսիք են կոլեկտիվիզմը, բարեկամությունը, ուշադրությունը, ապրումակցման ընդունակությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնությունը, կոնֆլիկտային իրադրություններ լուծելու ունակությունը և այլն: Այս բոլորը նրանց դարձնում է շփվող՝ ապահովելով բարձր հեղինակություն հասակակիցների խմբում: Հակառակը՝ ինչքան քիչ են ջերմությունը, շոյանքները, հոգատարությունը երեխայի նկատմամբ, այնքան դանդաղ է նրա՝ որպես անձնավորություն ձևավորումը: Նույնիսկ ոչ բավարար ուշադրությունը, ծնողների և երեխաների շփման պակասն ամենատարբեր պատճառներով ոչ հաճախ են նրանց մոտ առաջացնում հուզական ծարավ, բարձր զգացմունքների չզարգացվածություն, անձնավորության ինֆանտիլություն: Որպես դրա հետևանք կարող են լինել ինտելեկտի կամ մտավոր զարգացման հապաղում, հոգեկան առողջության խնդիրներ, վատ առաջադիմություն դպրոցում, անբարոյական և հակահրավական արարքների դրսևորում:

Ծնողներից երեխայի հոգեբանական օտարացումը հանցագործ անձի ձևավորման միակ պատճառը չէ: Հաճախդատեղի է ունենում այլ ճանապարհով, որ երեխայի և անչափահասի մոտ կան անհրաժեշտ հուզական կապեր ծնողների հետ, բայց հենց վերջիններս նրան ցուցադրում են արհամարհական վերաբերմունք բարոյական և իրավական արգելքների նկատմամբ, հենց իրենք են ցուցաբերում հակահրավական վարքի օրինակներ (հարբեցողություն, խուլիգանական գործողությունների կատարում և այլն): Նրանց հետ սերտ կապերի դեպքում անչափահասը համեմատաբար հեշտ է յուրացնում այդ օրինակները [18]:

Քրեածին հետևանք կարող է ունենալ նաև ընտանեկան դաստիարակության այնպիսի թերությունը, երբ ջերմ զգացմունքային հարաբերությունների և նպատակադրված բարոյական դաստիարակության դեպքում շրջապատողները հոգ են տանում միայն երեխայի նյութական պահանջմունքների

բավարարման մասին՝ նրան չսովորեցնելով կյանքի առաջին տարիներից պարզ պարտականությունների կատարմանը, բարոյական նորմերի պահպանմանը [13]: Ըստ էության, այստեղ դրսևորվում է անտարբերություն նրա նկատմամբ:

Չափազանց կարևոր է նշել, որ ծնողների կողմից երեխաների էմոցիոնալ մերժման կամ ծնողական քնքնշանքից և հոգատարությունից զրկման արդյունքում նրա հոգեկանում անգիտակցական մակարդակի վրա ձևավորվում են տագնապայնություն, անհանգստություն, վախ «Ես»-ին, շրջապատում գրված դիրքին սպառնալու վերաբերյալ, անվստահությունը կենցաղում, շրջապատող աշխարհի նկատմամբ թշնամության, ագրեսիվության զգացում: Այս որակներն առաջանում են անհրաժեշտ դաստիարակչական ազդեցությունների պակասից կամ նեգատիվ ազդեցություններից և ամրապնդվում են շփման ընթացքում, դպրոցում, ուսումնական հաստատություններում:

Բոլոր նշված որակները կոչում են տագնապայնություն, որը հասկացվում է որպես չգոյության վախ: Այդ վախը կարող է ունենալ երկու մակարդակ. մահվան վախ (բարձր մակարդակ) և անընդհատ անհանգստություն և անինքնավստահություն (ցածր մակարդակ): Եթե տագնապայնությունը հասնում է մահվան վախի մակարդակի, ապա մարդը սկսում է պաշտպանել իր կենսաբանական կարգավիճակը, իր կենսաբանական գոյությունը: Այստեղից բռնարարքային հանցագործությունների կատարումը որպես պաշտպանություն աշխարհից, որն անձը սուբյեկտիվորեն ըմբռնում է որպես վտանգավոր կամ թշնամական: Եթե տագնապայնությունը պահպանվում է անընդհատ անհանգստության և անվստահության մակարդակի վրա, ապա մարդը կարող է պաշտպանել իր սոցիալական կարգավիճակը, սոցիալական գոյությունը, իր սոցիալական պատկանելությունը շահադիտական և շահադիտա-բռնարարքային հանցագործությունների կատարման ճանապարհով [13]:

Տագնապային անձնավորությունն ամբողջովին այլ կերպ է տեսնում շրջապատող աշխարհը և համապատասխանաբար արձագանքում նրա ազդեցությանը: Նրա առաջատար գիծը հանդիսանում է ինքնահաստատման, ինքնաընդունման, իրեն և իր «Ես»-ի կարևորման,

կյանքում իր տեղի համար պայքարելու անընդհատ ձգտումը [13]: Հաստատման և ինքնահաստատման միտումը կարող է իրականացվել այլ մարդու կարգավիճակի իջեցմամբ, նրա նվաստացմամբ և նույնիսկ ոչնչացմամբ: Հենց այդպիսի տագնապային մարդկանց է բնորոշ ներքին անազատության բարձր աստիճանը և առավել նախատրամադրվածությունը հակահիրավական վարքի նկատմամբ:

Տագնապայնության առկայությունը, սեփական կյանքի անցողիկության և անկայունության անգիտակցական զգացումը, չգոյության վտանգը հանդիսանում են անձի հիմնարար առանձնահատկություններ, որոնցով տարբերվում է հանցագործը ոչ հանցագործից [13]: Հենց այդ առանձնահատկությունները հանդես են գալիս որպես հանցավոր վարքի հիմնական և անմիջական պատճառներ: Այլ խոսքերով, մարդը կատարում է հանցագործություն, որպեսզի չքանդվի նրա պատկերացումն իր, աշխարհում իր տեղի, իր ինքնազգացողության, ինքնագնահատականի մասին, չկորչի իր համար ընդունելի կենսաբանական և սոցիալական կարգավիճակը, կենսապայմանը:

Յու. Անտոնյանը, Վ. Էմինովը, Վ. Կուդրյավցևը նշում են օբյեկտիվ գործոնները, որոնք ձևավորում են անձի բարձր տագնապայնության մակարդակը. հասարակության բևեռացումը կապված նյութական ապահովվածության մակարդակի հետ, սոցիալական հսկողության թուլացումը, այն մարդկանց աճը, որոնք չեն գտնում իրենց տեղը հասարակության մեջ [13]: Ինչպես նշված հեղինակներն, այնպես էլ ուրիշ հետազոտողներն արձանագրում են, որ շատ մարդիկ օժտված են շրջակա աշխարհը բարձր տագնապայնությամբ ըմբռնելու բնածին նախատրամադրվածությամբ, և նրանց մոտ վարքային բռնկման ռիսկը բավականին մեծ է: Սակայն ոչ մի նախատրամադրվածություն ճակատագրական չի բերում հանցագործության: Մահվան վախը, ինչպես նաև անընդհատ անհանգստությունը կարող է հաղթահարվել առավել թույլատրելի և բարոյական միջոցներով, որոնց մեծ մասը մշակել է մարդկությունն իր ողջ պատմության ընթացքում: Դա երեխաներ ծնելն ու դաստիարակելն է, նրանց մասին հոգ տանելը, նրանց ավանդույթներ և բարոյական արժեքներ, հաջող կարիերա

ժառանգելը, գրականություն, արվեստ ստեղծելը, հարստություն կուտակելը և այլն: Այդ պատճառով կարելի է ասել, որ չգոյության վախը հաղթահարելը, այդ թվում՝ մահվան վախը, հանդիսանում է մարդկային վարքի, ստեղծագործական գործունեության հզոր խթան, թեպետ շատ հազվադեպ է գիտակցվում իր այդ որակի մեջ: Ահա ինչու չի կարելի համարել, որ չգոյության վախը կատարում է միայն բացասական ֆունկցիաներ: Դրա բարոյական և իրավական գնահատականն ամբողջությամբ կախված է նրանից, թե ինչ եղանակներով է այն հաղթահարվում:

Տագնապայնության ուսումնասիրության դեպքում առանձնացնում են անձնային տագնապայնություն (ԱՏ) որպես անձի կայուն հատկություն և իրադրային կամ ռեակտիվ տագնապայնություն (ՌՏ) որպես հոգեկանի ժամանակավոր վիճակ՝ ծագող սպառնալիքի նկատմամբ մարդու հակազդման տեսակով: Անձնային տագնապայնությունը, ի տարբերություն իրադրայինի, որոշվում է սուբյեկտի բնավորության, խառնվածքի առանձնահատկություններով և արտացոլում է նրա ներանձնային կոնֆլիկտը: Դատական հոգեբանության հիմնադիրներից Վ. Ռատինովը [81] նկատել է, որ որքան անօգնական է մարդը, այնքան առավել է նա պատկերացնում ծագող վտանգը, այնքան տագնապային է նա իրեն զգում, այնքան լայն է իրադրությունների շրջանակը, որոնք նրա կողմից ընկալվում են որպես սպառնալից և առաջ են բերում տագնապային վիճակ: Անձնային տագնապայնությունը զարգանում է իրադրայինից, հատկապես եթե մարդը հաճախ է ապրում վերջինս:

Հանցավոր վարքի գենեզիսը բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հանցավոր վարքի նկատմամբ անձի պատրաստակամության ծագումը, որի կարևոր բաղադրիչ է հանդիսանում դիրքորոշումը: Վերջինիս բովանդակությունը կազմում է ցանկալի արդյունքը և դրան հասնելու եղանակը /դիրքորոշում-նպատակ-եղանակ/: Դիրքորոշում ասելով հասկանում ենք անցյալի փորձի հիման վրա ձևավորված նախատրամադրվածություն ընկալելու կամ գնահատելու ինչ-որ

օբյեկտ որոշակի կերպ և համապատասխան այդ գնահատականի դրա նկատմամբ գործելու պատրաստակամություն [6]:

Ըստ Ս.Ջ. Արզումանյանի՝ [18] հանցածին դիրքորոշումները հանդիսանում են սոցիալական դիրքորոշումների քրեականացման արդյունք և դիրքորոշումների քրեականացման պրոցեսի նախազգուշական միջոցներից մեկը դրանց կազմավորման և դրսևորման մեխանիզմի բացահայտումն է: Անձի քրեական վարքի կառուցվածքում առկա են ոչ ադեկվատ բարոյական վարքի դիրքորոշումներ, որոնք առաջացել են զարգացման և ձևավորման առավել վաղ փուլերում: Հեղինակը համարում է, որ քրեածին դիրքորոշումների կազմավորման նախադրյալների գենեզիսը սկսվում է շրջապատողների հետ զգացմունքային փոխհարաբերության խախտմամբ, խաթարմամբ:

Ս.Ջ. Արզումանյանը քրեածին դիրքորոշումների հոգեբանական նախադրյալների կազմավորման գործընթացի դինամիկան ներկայացնում է հետևյալ դրույթներում.

1. Բացասական հուզածին իրադարձությունները, անբարենպաստ սոցիալական գործոնները, միանշանակորեն և շարունակական ազդելով երեխայի հոգեկանի վրա՝ նախ և առաջ սկսում են խաթարել երեխայի անձի հուզա-զգացմունքային ոլորտը: Այդ պատճառով առաջին հերթին անհրաժեշտ է խոսել առաջին բացասական հուզական դիրքորոշումների դրսևորման հոգեբանական բնույթի մասին, որոնք ժամանակի հետ ընդունելով որոշակի ձևակերպում, տարբերակվածություն, աստիճանաբար վերածվում են անձի բացասական դիրքորոշումների:
2. Նոր բացասական հուզական դիրքորոշումների կազմավորմանը նպաստում են արդեն գործող հուզական դիրքորոշումները: Արդեն իսկ կազմավորված բացասական էմոցիոնալ և նեգատիվ դիրքորոշումների հիման վրա անձնավորությունը դառնում է ընկալունակ արտաքին անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ: Այդպիսի անձնային ընկալունակությունը ընկած է շեղվող վարքի հիմքում և հանդես է գալիս որպես էական

պայման նրա սոցիալական դիրքորոշումների հետագա քրեականացման համար:

3. Բազմաթիվ և շարունակական ներգործող անբարենպաստ գործոնների առկայությունը փոխում է անձի հոգեբանական բնույթը արմատապես, այլափոխում կամ դեֆորմացնում նրան բարոյապես: Սոցիալական իրադրությունները և հանգամանքները աստիճանաբար սկսում են նրա վրա թողնել տեղային ազդեցություն, այսինքն՝ որոշակի արտաքին ազդեցություն ընդունելու համար անձնավորության մեջ ակտուալացվում են համարժեք անձնային գործոններ, համարժեք դիրքորոշումներ: Մի կողմից, արտաքին անբարենպաստ ազդեցությունը «փնտրում է» իր ընկալունակ սուբյեկտին, իսկ մյուս կողմից՝ սուբյեկտը ըստ բարոյական խաթարվածության աստիճանի ընտրողաբար վերաբերում նրան, «ընտրում է» այն:

Սոցիալականացման և նրա խաթարման նկարագրված պահերն ընդհանրացվում են միկրոմիջավայրի նեգատիվ գործոնների նկատմամբ վերը նշված անձնային ընկալունակության մեջ, որին «հանդիպման» են գալիս անձնավորության ներքին պայմանները՝ դրսևորելով ընկալելու և արձագանքելու ընտրողականություն:

Այդ կերպ, նեգատիվ և քրեածին դիրքորոշումների առավել արտահայտված առաջնային նախադրյալ են հանդիսանում հուզական ոլորտում տեղի ունեցող անբարենպաստ փոփոխությունները: Այդ փոփոխություններն առաջին հերթին արտահայտվում են բացասական հուզական դիրքորոշումներում, որոնք ընկած են նրա այլ անբարենպաստ անձնային և վարքային կողմերի հիմքում. նեգատիվիզմ, եսասիրություն և այլն: Իսկ վերջիններիս հիման վրա կազմավորվում են նեգատիվ դիրքորոշումներ, որոնք կանխարգելիչ միջոցառումների բացակայության դեպքում կարող են քրեականացվել և վերածվել քրեածին դիրքորոշման:

Քրեածին դիրքորոշումը մտնում է որոշակի պատճառա-հետևանքային կապի մեջ անձնավորության գիտակցության և ինքնագիտակցության և, մասնավորապես, նրա բարոյական գիտակցության հետ: Ձևավորվելով և դրսևորվելով

գործունեության մեջ, անձնավորության գիտակցությունը և նրա քրեածին դիրքորոշումը իրենց հերթին սկսում են ազդել նրա վրա՝ ուղղել, կառավարել այն: Քրեածին դիրքորոշում ձեռքբերելով (առավել ևս քրեական) անձնավորությունը խախտում է համակեցության բարոյա-իրավական նորմերն ու սկզբունքները՝ դրանք մասամբ անտեսելով: Դա բերում է խաթարված բարոյական և իրավական գիտակցության և ինքնագիտակցության ձևավորմանը. անձի գիտակցության սոցիալական ախտահարմանը, որն իր զարգացման օբյեկտիվ ելքով հետագայում ձեռք է բերում այնպիսի բովանդակություն և բնութագիր, որը մարդուն ստիպում է խեղաթյուրված արտացոլել և գնահատել օբյեկտիվ իրականությունը, շրջապատող մարդկանց, նրանց վարքը, արարքները և գործունեությունը: Հանցավոր վարքի մասին խոսելիս գործ ունենք անձի գիտակցության սոցիախտահարման հետ: Եթե, օրինակ, գերակշռում է նիհիլիստական վերաբերմունքն իրավունքի և օրենքի նկատմամբ, ապա կարելի է եզրակացնել, որ նման վերաբերմունքը բնորոշ է գրեթե բոլորին: Դրան նպաստում է անվստահությունն օրենքի, իրավունքի, իրավապահ մարմինների նկատմամբ:

Այսպիսով, հանցագործի անձը բնութագրվում է նրանով, որ կատարում է հանցագործություն իրեն հատուկ հոգեբանական առանձնահատկությունների, հակահասարակական հայացքների, բարոյական արժեքների նկատմամբ բացասական վերաբերմունքի, ինչպես նաև իր պահանջմունքները բավարարելու համար հանրորեն վտանգավոր ճանապարհ ընտրելու կամ դրա բացասական հետևանքը կանխելու համար բավարար ակտիվություն չդրսևորելու արդյունքում [13]:

Հանցագործություն կատարած կամ այն կատարելու ներքին պատրաստակամությամբ և համարժեք ներուժով օժտված մարդու անձը հոգեբանական բնույթի որակական տարբերություն ունի հասարակության օրինապահ անձնավորության հոգեբանական բնույթից: Այդ տարբերակող առանձնահատկությունները արտահայտվում են հոգեբանական հատկանիշների (կազմավորումների) ամբողջության առկայության մեջ, որոնք

էական են հանցավոր վարքի դետերմինացիայի մեջ: Այդ ամբողջության համակարգի կորիզ են կազմում հանցավոր նպատակ ընդունելու ներքին հնարավորությունը որոշող հոգեկան հատկանիշները, հատկությունները, որոնց բովանդակությունը անբաժանելիորեն կապված են վարքի հակահասարակական եղանակների հետ: Այդ հատկանիշները արտահայտում են որոշակի պայմաններում անհրաժեշտ արդյունքի հասնելու (որոշակի պահանջմունքի բավարարման կամ պրոբլեմային իրադրությունը լուծելու) համար հանրորեն վտանգավոր եղանակի ընդունման անձնային ընկալունակությունը:

Համաձայն Ա.Ա. Գաբուզյանի՝ [35] հանցավոր վարքի տարբերությունը իրավահնազանդ վարքից կայանում է սուբյեկտի կողմից իր նպատակներին հասնելու միջոցների և եղանակների ընտրության մեջ: Նպատակին հասնելու այս կամ այն միջոցի կամ եղանակի ընտրությունը կախված է մի շարք գործոններից, որոնց ընդհանրացումը թույլ է տալիս պնդել, որ նպատակներին հասնելու եղանակների և միջոցների ընտրությունը կախված է սուբյեկտի հնարավորություններից և իրադրության առանձնահատկություններից [35]: Սուբյեկտի հնարավորությունները կարող են լինել սուբյեկտիվ և օբյեկտիվ: Որպես օբյեկտիվ հնարավորություններ կարող են հանդես գալ, օրինակ, պաշտոնը, սոցիալական, նյութական դրությունը, մասնագիտությունը, զբաղմունքի տեսակը և այլն: Սուբյեկտիվ հնարավորություններ են հանդիսանում ինտելեկտուալ ընդունակությունները և կամային հատկությունները, գիտելիքների մակարդակը, ֆիզիկական և հոգեկան վիճակը, հմտությունները և կարողությունները, կյանքի փորձը, արժեքային կողմնորոշումները, բարոյական դիրքորոշումները: Իսկ ինչ վերաբերում է իրադրության առանձնահատկություններին, ապա այստեղ կարևոր է հաշվի առնել նպատակներին հասնելու տարբեր միջոցների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև դրան հասնելու ադեկվատ եղանակի ընտրության համար անհրաժեշտ ժամանակը, այլ մարդկանց վարքը, ընդհանուր բարոյական վիճակը միկրոմիջավայրում կամ հասարակությունում:

Նպատակներին հասնելու հակահրավական, հանցավոր եղանակի ընտրությունը կախված է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից, որոնց մեջ վճռական դեր է խաղում պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների միջև անհամապատասխանությունը [35]: Դրա հետ կապված ակնհայտ է, որ հանցագործությունների կանխումը պետք է հիմնվի տվյալ անհամապատասխանությունը հաղթահարելու կամ մեղմելու վրա, ինչպես նաև այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը չեզոքացնելու, որոնցով պայմանավորում է այդ ընտրությունը: Եվ այստեղ, ըստ Ա. Գաբուզյանի, վճռական նշանակություն ունեն փոփոխությունները հասարակության կենսագործունեության օբյեկտիվ պայմաններում: Վերջին հաշվով գլխավորը հանգում է նրան, որպեսզի ընդլայնվեն նպատակներին հասնելու իրավական եղանակների, հնարավորությունների շրջանակը:

Այսպիսով, հակահասարակական վարքը անձի սոցիալական վարքի (սոցիալական դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների և այլն) քրեականացման արդյունք է և դրա գենեզիսը հատկանշվում է նրանով, որ վարքի պարզունակ խախտումներից հետզհետե կազմավորվում են օրենքը խախտելու, դրա նկատմամբ ոտնձգություններ կատարելու, այդ թվում՝ հանցավոր վարքագիծ դրսևորելու միտումները:

## 3. 2. Օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հարաբերակցության առանձնահատկությունները

Հակահասարակական վարքի պատճառականության շղթայում փոխադարձ կապի և փոխպայմանավորվածության մեջ են գտնվում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, որոնք, համաձայն քրեաբանների և իրավաբանական հոգեբանների, հոգեբանա–քրեաբանական հետազոտության հիմնախնդիր են:

Սուբյեկտիվ գործոն ասելով հասկանում ենք գիտակցությունը և դրա ազդեցությունը օբյեկտիվ պայմանների զարգացման վրա: «Օբյեկտիվ պայմանները /օբյեկտիվ գործոն/ -

դրանք այն հանգամանքներն են, որոնք կախված չեն առանձին մարդկանցից, գիտակցությունից, կամքից, ցանկությունից: Դրահետ մեկտեղ այդ հանգամանքները որոշում են մարդկանց գործունեության բնույթը, նրանց գիտակցությունը, կամքը սուբյեկտից անկախ[8]:

Քանի որ սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնները գտնվում են հարաբերակցության մեջ, ապա հանցավոր վարքը վերլուծելիս անհրաժեշտ է բացահայտել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոնները, որոնք բացասականորեն են ազդում անձի վարքի վրա և պայմանավորում են նրա հակահասարակական վարքագիծը: Վ.Ն. Կուդրյավցևը [59] համարում է, որ ելակետային պահ այս դեպքում հանդիսանում է շեղումն անձնավորության պահանջմունքների և հետաքրքրությունների ոլորտում: Անձի հակահասարակական ուղղվածությունը այս ոլորտում կարող է բերել օրենքով արգելված և բարոյականության նորմերին հակասող վարքի նպատակների ընտրությանը:

Հակահասարակական վարքը օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների, մարդու անձնային որակների և հատկանիշների փոխազդեցության արդյունք է, որոնք պայմանավորված են սոցիալական միջավայրի անցյալ ազդեցությամբ [14]:

Իրավախախտումը ծագում է օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների և պայմանների փոխազդեցության արդյունքում: Այդ դեպքում տվյալ փոխազդեցությունը հանդիսանում է ոչ թե միապահ և անցողիկ, այլ իրենից ներկայացնում է հետևանքների բարդ շղթա: Օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերը, օրինաչափ և պատահական հանգամանքները սերտորեն միահյուսվում են՝ պայմանավորելով միմյանց, և որոշելով հակահասարակական վարքի գենեզիսը:

Բարոյապես համարժեք և ոչ համարժեք վարքը, անձի ամբողջական օրինական և ոչ օրինական գործունեությունն ունի երկակի պատճառականություն. արտաքին և ներքին: Վարքի արտաքին դետերմինացիան որոշում են օբյեկտիվ բարենպաստ և անբարենպաստ գործոնները, որոնք գալիս են անձնավորության շրջակա միջավայրից և նպաստում են նրա դիրքորոշումների, այսինքն՝ նրա վարքի ներքին դետերմինանտների ձևավորմանը: Սոցիալական

միջավայրն իր դրական և բացասական դրսևորումներով անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով ազդում է անձնավորության վրա, ձևավորում նրա անձնային կառուցվածքը, կառավարում է ինչպես կառուցվածքակազմավորման գործընթացը, այնպես էլ նրա վարքը և գործունեությունը, իսկ անհրաժեշտության դեպքում վերակառուցում է վարքը, ուղղում նրան և այլն: Արտաքին միջավայրն անձի ընդհանուր սոցիալական ակտիվության մեջ առաջատար տեղ է զբաղեցնում նրա բարոյապես ընդունելի կամ անոմալ ձևավորման մեջ, որոշում է նրա զարգացման և արտաքին ձևավորման ներքին ընթացքը և տրամաբանությունը:

Ս. Արզումանյանի [18] իրավախախտի անձնավորության կազմավորման մասին տեսության համաձայն՝ արտաքին դետերմինացիան շարժում է անձի անհատական և հասարակական ակտիվությունը միայն այն դեպքում, երբ դրա ազդեցության տակ ձևավորվում է անձի սոցիալական ակտիվության ներքին դետերմինացիան: Ընկալելով, յուրացնելով սոցիալական ազդեցությունները՝ անձնավորությունն իր մեջ ձևավորում է ներքին անձնային գործոնների ամբողջական համակարգ, որը հանդես է գալիս որպես նրա արտաքին սոցիալական վարքի ներքին դետերմինացիա: Դրանից հետո նա կուրորեն չի ենթարկվում այդ գործոններին, այլ գտնվելով նրանց ազդեցության տակ՝ նրանց նկատմամբ դրսևորում է ընտրողական վերաբերմունք: Այլ խոսքերով, ինչ-որ արտաքին գործոնների ազդեցության տակ ինչ–որ արտաքին ակտիվություն դրսևորելուց առաջ, անձնավորության մեջ որոշակի ձևով կազմավորվում են ներքին հոգեբանական պայմաններ, ներքին դետերմինացիա այդ ադեկվատ ակտիվության համար, որն ուղղորդում, շարժման մեջ է դնում նրա գործողությունները, արարքները և վարքը, մասամբ հսկում և կառավարում է դրանք:

Հանցավոր վարքին հանգեցնող սոցիալական որակների և կողմնորոշումների այլափոխումը կամ դեֆորմացիան անձի մեջ տեղի է ունենում աստիճանաբար,-կարծում է քրեաբան Ս. Տարարուխինը [91]: Անձնավորության վարքն առավելապես պայմանավորված է սոցիալական միջավայրով, բայց միջավայրի

ազդեցությունը չի կարող հանգեցվել պարզ «միջավայր-վարք» պրոյեկցիայի: Որպեսզի օբյեկտիվ պատճառները սկսեն գործել, նրանք պետք է ոչ միայն անցնեն անձնավորության գիտակցության միջով, այլև առաջացնեն կոնկրետ հանցագործության որոշակի դրդապատճառներ:

Ս.Ա Տարարուխինի կարծիքով՝ հանցագործության կատարման բացատրությունը արտաքին և ներքին գործոններով միայն, լիովին չի սպառում հանցավորության խնդիրը քրեաբանության մեջ: Հանցագործությունն ինքն իրեն հակադարձ ազդեցություն է գործում անձի վրա, խաթարելով նրա սոցիալական որակները, իսկ ինքը հանցագործը՝ անցյալի ապրումների կրողը, նրանց ծայրահեղ արտահայտության մեջ խորտակիչ ազդեցություն է գործում շրջապատողների վրա: Այդ կերպ տեղի է ունենում միմյանց վրա պատճառի և հետևանքի փոխադարձ ազդեցություն: Ճիշտ այդպես էլ տեղի է ունենում նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների առանձին մասերի փոխազդեցությունը: Այսպես, փոխազդեցության մեջ են մտնում անձնավորության սոցիալական որակների կառուցվածքային բաղկացուցիչները, որոնք սխալ զարգացում են ստացել, և անձից դուրս գտնվող օբյեկտիվ գործոնների տարբեր զուգորդումների ամբողջությունը:

Ինչպես հայտնի է, պատճառական կապի բազմազանության դեպքում այս կամ այն պատճառը չի առաջացնում հետևանք անխուսափելիորեն, դրա համար անհրաժեշտ է պայմանների որոշակի համատեղում: Պայմանները, այնպես, ինչպես և պատճառները, գոյություն ունեն օբյեկտիվորեն: Նրանք սուբյեկտի կողմից ընկալվում են և մի դեպքում օգտագործվում են հանցագործության կատարման ժամանակ, իսկ մյուս դեպքերում չեն նկատվում կամ էլ ընկալվում են խեղաթյուրված, լինում է, որ նրանք թվում են նույնիսկ կասկածելի, բայց, հանցագործություն կատարելիս սուբյեկտի կողմից հաշվի են առնվում: Երբեմն հանցագործություն կատարելու անբարենպաստ պայմանները անտեսվում են հանցագործի կողմից կամ նրա կողմից հաղթահարվում են դրված հանցավոր նպատակի իրականացման դեպքում:

Անձի սոցիալական հասունացումն անբաժան է շրջապատող միջավայրի, այլ մարդկանց, հասարակության հետ անհատապես ձևավորված նրա հարաբերություններից: Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների ուժով մարդը երբեմն կարող է հայտնվել նորմալ կապերից և հարաբերություններից օտարացման կամ մեկուսացման պայմաններում, ինչը ուղեկցվում է բարոյական գիտակցության դեֆորմացիայով և հաճախ նախորդում է հանցավոր ճանապարհին կանգնելուն:

Նորմալ կապերից և հարաբերություններից հոգեբանական օտարացումը, ըստ մի շարք քրեաբանների (Յու. Անտոնյան, Ս. Տարարուխին և այլոք), ամենից հաճախկյանքի պայմանների և դրանց փոփոխության նկատմամբ անհատի սոցիալական անհարմարվողականության արդյունք է: Այդպիսի անձանց մոտ շփման նկատմամբ բնական ձգտումը կարող է ստանալ իր սխալ լուծումը և բերել անբարենպաստ միջավայրի հետ շփումների, որոնք ավարտում են անձնավորության սոցիալական որակների դեֆորմացիայով:

Իրավախախտների մեծ մասի համար բնութագրական է անհարմարվողականությունը հանրօրեն օգտակար աշխատանքի, բարոյական և իրավական պահանջների նկատմամբ: Հանցագործություն կատարած անձանց ուսումնասիրության ժամանակ իր վրա ուշադրություն է դարձնում նրանց մոտ կայուն մտածելակերպի բացակայությունը, ինչն արտահայտվում է պատահականորեն առաջացած իրադրությունից գրեթե ամբողջական կախվածությամբ, իրեն կառավարելու անկարողությամբ, պահանջմունքների և ցանկությունների անմիջական բավարարում ստանալու ձգտմամբ: Անձնական ցանկությունները հասարակական պահանջմունքների հետ համապատասխանեցնելու անցանկալիությունն այդպիսի անձանց մոտ, որը համատեղվում է աշխատանքի նկատմամբ անհարգալից վերաբերմունքով և պահանջմունքների ու հետաքրքրությունների պարզունակությամբ, հասարակական կյանքի առավել էական, սոցիալապես նշանակալից տարրերի խեղաթյուրված կամ ոչ ճիշտ ըմբռնմամբ, դրանք արտացոլումեն անձի որոշակի արժեքային կողմնորոշումները:

Այդպիսի կողնորոշումը հաճախ հանդիսանում է ինչպես ոչ ճիշտ կամ սխալ դաստիարակության ուղղակի հետևանք, այնպես էլ անբարենպաստ միջավայրի (օրինակ, հանցավոր խմբավորում) անմիջական ազդեցության տակ արժեքների գերագնահատման արդյունք: Արժեքների գերագնահատման ժամանակ բացասական ուղղության մեջ տեղի է ունենում ասես բարձր տիպի արժեքային կողմնորոշման փոխարինում այլ՝ ցածր, առավել պարզ ուղղվածությամբ արժեքային կողմնորոշմամբ: Այս պարագայում հանրորեն օգտակար արժեքները և գնահատականները ճնշվում են այլ՝ հանրային նշանակություն չունեցող արժեքներով: Այդ տիպի արժեքային կողմնորոշման փոփոխումն առաջացնում է անձնավորության ներքին ապակառուցվածքայնություն, և սոցիալապես նշանակալից պարտականությունների և նորմալ կենսակերպի նկատմամբ անհարմարվողականության զգացում: Անձնավորության սոցիալական որակները և հատկանիշներն արժեզրկվում են, անձը աստիճանաբար ենթարկվում է դեգրադացիայի:

Անձնավորության զարգացման հետընթացը կամ ռեգրեսը ընհանուր առմամբ կարելի է բնութագրել որպես ոչինչով չզսպվող պարզունակ պահանջմունքների, հետաքրքրությունների առավել անկեղծ դրսևորում: Կրկնվելով նման իրադրություններում, կոնկրետ գործողություններում, արարքներում և աստիճանաբար վերածվելով սովորության, նրանք զբաղեցնում են առավել մեծ տեղ մարդու ներքին աշխարհում՝ ճնշելով սոցիալապես նշանակալից հետաքրքրությունները և ձգտումները: Ս. Տարարուխինի [91] ենթադրությամբ անձի մոտսկզբից առաջանում է հետաքրքրություն հանցագործության կատարման նկատմամբ, իսկ հանցավոր ակտերի կրկնության դեպքում հանցավոր գործունեության շարունակությունը վերածվում է հակվածության: Բայց դա հանցավոր վարքի մոտիվացիոն ոլորտի ուսումնասիրության պարզեցված մոտեցում է: Իրականում այն առավել բարդ է:

Աշխարհայացքի հակասականությունը և անզարգացվածությունը, անհետևողականությունը շրջապատող իրականության իրադարձությունների, երևույթների գնահատման

մեջ, բարոյական հասկացությունների և պատկերացումների խեղաթյուրված բնույթը հատկապես վառ դրսևորվում է հակաբնական գաղափարների, պատկերացումների, սկզբունքների գողական և այլ հանցավոր ավանդույթների աշխարհում ապրող կրկնահանցագործների կամ ռեցիդիվիստների մոտ, որոնք գիտակցորեն իրենց հակադրում են շրջապատողներին, հասարակությանը ամբողջությամբ: Նրանք կյանքում և այլ մարդկանց հետ հարաբերություններում ղեկավարվում են ոչ մեծ քանակությամբ հակասական կանոններով, որոնք ինչ–որ կերպ յուրացվել են դաստիարակության ճանապարհով՝ ենթարկվելով միկրոմիջավայրի ավանդույթներին և պարզունակ մտածելակերպին, հայացքներին, որը նրանց շրջապատում է: Հանցավոր գործունեության, հանցավոր միջավայրում շփման և հանրորեն օգտակար կապերից և հարաբերություններից հոգեբանական մեկուսացման արդյունքում նրանցից որոշների մոտ մշակվում են բավականին հստակ արտահայտված հակումներ այդպիսի գործունեության նկատմամբ:

Այսպիսով, հակահասարակական վարքի օբյեկտիվ և սուբյեկտիվ (կամ հոգեբանական) պատճառները գտնվում են հոգեբանական հարաբերակցության մեջ: Հոգեբանական պատճառներն իրենց գենեզիսում օբյեկտիվ պայմանավորվածություն ունեն, այսինքն՝ օբյեկտիվ անբարենպաստ (քրեածին, կոնֆլիկտային) պայմանների, հանգամանքների և իրադրությունների ազդեցության տակ աստիճանաբար կազմավորվում է (կամ առանձին դեպքերում ձևավորվում է) իրավազանց, քրեածին, այնուհետև հանցածին անձը և նրա ասոցիալ, հակահասարակական վարքը: Հանցագործության օբյեկտիվ պատճառներն անձին դրդում են հանցարարքի՝ միջնորդավորվելով նրա հոգեբանական առանձնահատկություններով, որոնց բացակայության դեպքում նա չի խախտում օրենքը բարոյականությունը:

### 3.3. Սուբյեկտիվ գործոնների նախականխման հոգեբանա-քրեաբանական պայմանները

Քրեադատավարական գործունեությունը արտացոլող բազմաթիվ քրեաբանների և քրեահոգեբանների հետազոտություններում (Մ. Ենիկեև [43], Ս. Արզումանյան [18], Յու. Անտոնյան [10], Ա. Ռատինով [81], Վ. Վասիլև [30], Վ.Ռոմանով [84] և ուր.) շեշտվում է այն փաստը, որ հանցագործության նախաքննությունը, քրեադատավարական գործընթացը ճիշտ կազմակերպելու, հանցագործի նկատմամբ խափանման ճիշտ միջոց ընտրելու, քննչական գործողությունների մարտավարություն ընտրելու, մեղադրյալի և քրեական գործով անցնող այլ անձանց հարցաքննության ճիշտ գնահատման ռազմավարություն ընտրելու, համարժեք դաստիարակչական ներգործություն ապահովելու, համարժեք պատժաչափ ընտրելու և պատիժը կրելու նպատակով քրեակատարողական հիմնարկն ու ռեժիմն ընտրելու և այլ նախաքննչական և դատաքննչական գործողություններ իրականացնելու համար խիստ անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտիվ կողմի իմացությունը: Այստեղ տեղին է հիմք ընդունել Ս.Լ.Ռուբինշտեյնի [86] անձի /սուբյեկտի/ ուսումնասիրության հանրահայտ այն տեսական դրույթը /ռազմավարությունը/, համաձայն որի՝ արտաքին ներգործությունը այնքանով գոյություն ունի, որքանով ներքինում /անհատական առանձնահատկություն, նյարդային տիպ, ժառանգական տարրեր և այլն/: Այն բեկվում և վերամշակվում է, վերածվում է սուբյեկտիվ գործոնի, հատկության, գործելաոճի և այլն:

Հակահասարակական վարքի սուբյեկտիվ բաղադրիչների ուսումնասիրությունը, ինչն առավելապես ընդգրկում է այդ վարքի սուբյեկտի անձնային որակներն ու հատկանիշները, նրա սոցիալական և արժեքային կողմնորոշումներն ու դիրքորոշումները, հնարավորություն կտա քննիչին և դատավորին ինչպես ճիշտ կազմակերպել մեղադրյալի անձի հետազոտման գործընթացը, ճիշտ ընտրել նրա վրա ուղղիչ–դաստիարակչական ներգործության ուղիներն ու միջոցները, այնպես էլ նպաստել մեղքի գիտակցմանը և արդարացի պատիժը կրելու հոգեբանական պատրաստակամության ձևավորմանը [43]: Քանի որ նախաքննության և դատաքննության կարևոր ֆունկցիաներից մեկը ուղղումն ու վերադաստիարակությունն է, ուստի այդ գործունեության

կազմակերպողները պետք է հնարավորություն ունենան կողմնորոշվելու այն հարցում, թե ինչպես, ինչ միջոցներով ներգործեն մեղադրյալի անձնային այս կամ այն որակի վրա՝ դրանց ուղղվածությունը փոխելու կամ հաղթահարելու նպատակով:

Հակահասարակական վարքի նախականխման կամ կանխարգելման հիմնախնդիրը ընդգրկում է ոչ միայն հենց կանխումը, այսինքն՝ հանցավոր վարքին նախորդող սուբյեկտիվ գործոնների չեզոքացմանը ուղղված գործունեությունը, այլև անձի ձևավորման, հատկապես նրա սոցիալիզացիայի վաղ փուլերում կյանքի առավել բարենպաստ պայմանների ապահովումը: Այդ գործունեության արդյունավետությունը առաջին հերթին ապահովվում է կյանքի նյութական և հոգևոր մակարդակների բարձրացմամբ: Նախազգուշական աշխատանքի կարևոր մաս է կազմում հանցագործների ուղղման և վերադաստիարակության ուղղությամբ իրականացվող գործունեությունը:

Անձնավորության էությունը, ըստ քրեահոգեբան Յու. Անտոնյանի [9] կանխորոշվում է նրա սոցիալականացման բնույթով, իսկ ձևավորման փուլերը համապատասխանում են սոցիալականացման փուլերին. առաջնային (երեխայի սոցիալիզացիա), մարգինալ (միջանկյալ կամ կեղծ կայուն) և կայուն (կոնցեպտուալ, ամբողջական): Այդ պատճառով անձի հակահասարակական ուղղվածության նախականխման իդեալական տարբերակ է հանդիսանում սոցիալիզացիայի թերությունների չեզոքացումը: Յու. Անտոնյանը եզրակացնում է, որ մարդու պատշաճ սոցիալականացումը հանցավորության դեմ պայքարի կարևորագույն ճանապարհն է:

Ս. Տարարուխինը [91] նշում է, որ անձի զարգացման ծրագրի գիտական մշակումը անհրաժեշտ է ա) սոցիալական հատկանիշների, բարոյական, իրավական մտածելակերպի, անձի հոգեկան աճը որոշող սոցիալական նշանակալից հետաքրքրությունների, արժեքային կողմնորոշման համակարգի և նրա հանրորեն օգտակար գործունեության մոտիվացիայի ձևավորման համար, բ) հակահասարակական վարքը ծնող արդեն ձևավորված կամ

ձևավորվելու գործընթացում գտնվող հակահասարակական որակների և հատկանիշների հաղթահարման համար:

Իրավախախտ վարքագծի կանխարգելման համար շատ կարևոր է մարդու ապագա վարքագծի կանխատեսումը: Կանխատեսման համար կարևորվում է անձի զարգացման երկու հնարավոր ճանապարհը. ա) անձի հոգևոր աճը՝ կապված սոցիալապես օգտակար գործունեության նկատմամբ հետաքրքրությունների և ձգտումների անընդհատ ընդլայնման հետ, անձի նորմալ սոցիալիզացիայի մասին վկայող կայուն համոզմունքների և արժեքային կողմնորոշումների դրսևորմամբ և բ) անձի ռեգրեսը (դեսոցիալիզացիա), որը արտահայտվում է հետաքրքրությունների նեղացման մեջ՝ ընդհուպ մինչև պարզունակ պահանջմունքների բավարարման մակարդակը, բարոյական և իրավական գիտակցության թուլացումը, հակահասարակական վարքի բացասական հնարքների և սովորությունների դրսևորումը:

Ըստ Ս. Տարարուխինի՝ իրավաբանական-հոգեբանական կանխատեսումը, որպես սոցիալ-հոգեբանական կանխատեսման մաս, նախ և առաջ պետք է վերաբերի անձի ռեգրեսի ուսումնասիրմանը: Հենց այդպիսի ուսումնասիրությունը կօգնի հասնել հանցավորության և՛ ընդհանուր, և՛ հատուկ նախազգուշացմանը, դատապարտյալների ուղղմանը և վերադաստիարակմանը:

Ա.Ա. Գաբուզյանը [35] գրում է. «Քանի որ հանցավոր վարքի աղբյուրները ընկած են ապակառուցողական կամ դեստրուկտիվ վարքի նկատմամբ մարդու կենսահոգեբանական և հոգեկան հակվածության ոլորտում, ապա ակնհայտ է, որ հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղություններ կարող են հանդիսանալ այնպիսի միջոցառումներ, որոնք կքչացնեին վերը նշված գործոնների ազդեցությունը, կչեզոքացնեին նրանց ազդեցությունը և հակառակը, կակտուալացնեին մարդուն հատուկ բարձր բարոյական որակները: Այդ պատճառով առավել արդյունավետ հսկողություն հանցավորության նկատմամբ կարող է ապահովել հասարակության բարոյական առաջընթացը: Իսկ դրա համար նա կարևորում է տնտեսական առաջընթացը»:

Քանի որ խոսքը հանցագործության սուբյեկտիվ գործոնների նախականխման մասին է, ապա առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում հիմնախնդրի հոգեբանական ասպեկտը: Այն արտացոլվում է համապատասխան անձանց հոգեբանական օգնություն ցուցաբերելու, հոգեբանական խորհուրդները բազմակողմանի հաշվի անելու և հոգեբանության ժամանակակից ձեռքբերումների լայն օգտագործման մեջ:

Անձանց վարքի նախազգուշացումը պետք է հիմնվի անձնային առանձնահատկությունների, առաջին հերթին՝ կոնկրետ մարդու վարքի դրդապատճառների վրա:

Հանցավոր վարքի նախազգուշացման դեպքում պետք է ուսումնասիրել այն հանգամանքը, որ մարդու ողջ գործունեությունը որոշվում է նրա սոցիալական կյանքի պայմաններով, և որ մարդու ակտիվության բնույթի որոշման մեջ առաջատար տեղը պատկանում է կենսագործունեության նյութական պայմաններին: Կարևոր է նաև հիշել, որ պայմանները իրենք իրենց չեն հանդիսանում մարդու սոցիալական ակտիվության միակ գործոնը: Միայն արտացոլվելով գիտակցության մեջ և ընդունելով իդեալական դդապատճառի ձև, օբյեկտիվը դառնում է սուբյեկտիվ՝ մարդուն դրդելով կոնկրետգործունեության:

Հանցավոր վարքի նախազգուշացումը պահանջում է իրար հետ կապված երեք տեսակի ուսումնասիրության անցկացում.

1. անձի վարքի մոտիվացիոն ոլորտի փոփոխությունների ուսումնասիրություն,

2. անձի հետ կատարվող բացասական փոփոխությունների գործընթացի ուսումնասիություն,

3. անձի մեջ արդեն ձևավորված հակահասարակական գծերի և մոտիվացիայի ուսումնասիրություն:

Հակահասարակական վարքի սուբյեկտիվ գործոնների նախազգուշացման գործընթացը բաղկացած է տրամաբանորեն իրարից բխող երեք փուլից: Առաջին փուլում բացահայտվում են սուբյեկտիվ գործոնների առկայությունը մի շարք մեթոդների և մեթոդիկաների օգնությամբ (դիտում, զրույց, անկետային տվյալների վերլուծություն և այլն): Երկրորդ փուլում կազմվում

են նրանց բնութագիրները: Երրորդում իրականացվում է սուբյեկտիվ գործոնների կանխումը: Իսկ դա իրականանում է նշված նախադրյալները չեզոքացնելու միջոցով:

Վարքի մոտիվացիան որոշող գործոնների ճնշող մեծամասնությունը ազդում է մարդու վրա անմիջական մարդկային հարաբերությունների ոլորտում՝ միջավայրում: Միջավայրի հետ անձի փոխհարաբերությունների վերլուծությունը թույլ է տալիս հաստատել մոտիվացիայի բովանդակությունը: Բացահայտելով միջավայրում գերակշռող վարքի դրդապատճառները և հիմնական գործունեությունը, կարելի է ենթադրել և հանցագործության մոտիվացիայի բովանդակությունը: Անբարենպաստ պայմաններում անձի բարոյական ձևավորման արդյունքում այս կամ այն չափով սահմանափակվում կամ սպառվում է ճիշտ ընտրողական վարք ցուցաբերելու վարքի ընդունակությունը: Այդ կորուստի, սպառման աստիճանը վկայում է անձի սոցիալական խաթարման և դեգրադացիայի տարբեր մակարդակների մասին:

Հանցավորության դեմ պայքարը, շեղվող (դեվիանտ և դելիկվենտ) վարքը կանխարգելող աշխատանքները կարող են տալ իրենց դրական արդյունքները, եթե մշակվի հանցավորության, ընդհանրապես իրավախախտումների ընդհանուր սոցիալական պրոֆիլակտիկայի ծրագիր և դրա սկզբնական բաղադրիչը համարվի վաղ հոգեբանական (սոցիալ–հոգեբանական) կանխարգելումը կամ պրոֆիլակտիկան: Դա կնպաստի նրան, որ բարոյական և իրավական նորմերի խախտումները բացահայտվեն և հաղթահարվեն դրանց առաջացման և զարգացման սկզբնափուլում:

Սոցիալ–հոգեբանական կանխման հիմքում պետք է դրվի սոցիալական և հոգեբանական միջոցառումների համատեղման սկզբունքը: Այդպիսի կանխումը իրենից ներկայացնում է համալիր գործունեություն՝ ուղղված նրան, որպեսզի չթույլատրվեն նշված սուբյեկտիվ գործոններով անձանց հանցավոր ուղու վրա կանգնելը և այդպիսի հնարավորության մասին վկայող կենսակերպը և արարքները: Այն պետք է իրականացվի ժամանակին այդպիսի անձանց բացահայտելու և նրանց նկատմամբ դաստիարակչական, հոգեբանական

միջոցառումներ իրականացնելու, բարենպաստ կյանքի պայմաններ ստեղծելու միջոցով:

Պրակտիկան ցույց է տալիս, որ հանցավոր վարքի կանխումը անհնարին է, եթե դրա կարիքը զգացող անձանց չցուցաբերվի համապատասխան հոգեբանական օգնություն: Սուբյեկտիվ գործոնները, փոխելով անձի շատ սոցիալական չափանիշներ, իրենք են դառնում քրեածին դեր խաղացող նշանակալից սոցիալական գործոն: Սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը հանցավոր վարքի վրա թույլ է տալիս եզրակացնել, որ անհրաժեշտ է առանձնացնել հանցագործության նախազգուշացման հատուկ ոլորտ՝ սոցիալ–հոգեբանական կանխարգելում:

Այսպիսով, հանցավորության, ընդհանրապես իրավախախտումների սոցիալական կանխման կազմում իր ուրույն տեղը պետք է գրավի վաղ հոգեբանական կամ սոցիալ–հոգեբանական կանխումը, որին համարժեք պետք է մշակվեն կրթա–դաստիարակչական և ուղղիչ–դաստիարակչական միջոցառումներ:

Հանցագործությունների կանխման էությունը կայանում է նրանում, որպեսզի ստեղծվեն առավել նպաստավոր կյանքի պայմաններ քաղաքացիների լայն զանգվածի համար, բացառվեն, հաղթահարվեն այն գործոնները, որոնք հրահրում են հանցավոր վարք (օրինակ՝ բռնության, դաժանության տեսարաններ ցուցադրող ֆիլմերը և այլն), բարելավվի անչափահասների կրթությունը և դաստիարակությունը, բարձրացվի ազգաբնակչության իրավական և բարոյական կուլտուրայի մակարդակը, կատարելագործվի իրավապահ մարմինների գործունեության և այլն:

Ինչպես տեսնում ենք, հանցավորության կանխումը ենթադրում է լայնածավալ կրթական և դաստիարակչական աշխատանքներ, տարաբնույթ միջոցառումներ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրո առարկային վերաբերվող ուսումնասիրված գրականության և կատարված հետազոտության արդյունքների հոգեբանա-քրեաբանական վերլուծությունը թույլ է տալիս անելու հետևյալ ընդհանուր եզրակացությունները.

1. Հակահասարակական վարքը ունի երկակի օբյեկտիվ և սուբյեկտիվ դետերմինացիա կամ պատճառականություն: Այդպիսի վարքի օբյեկտիվ պատճառականությունը (հանցավոր իրադարձությունը և այլ նպաստավոր պայմանները և այլն) հանգամանորեն ուսումնասիրված է քրեաբանության, ընդհանրապես իրավաբանության մեջ: Վերջինում օբյեկտիվ պատճառականությանը զուգընթաց քննարկվում է նաև հանցավոր վարքի սուբյեկտիվ պատճառականությունը կամ սուբյեկտիվ հոգեբանական կողմը, սակայն այն քրեաբանության հիմնախնդիր չէ: Հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը թույլ է տալիս հավաստելու, որ հանցարարքի սուբյեկտիվ գործոնները իրավաբանական հոգեբանության ուսումնասիրության կարևորագույն ոլորտ է, որը դեռևս բավարար չափով հետազոտված չի:
2. Օրինապահ և հակահասարակական վարքի համեմատական (առավելապես տեսական) հոգեբանական վերլուծությունը թույլ է տալիս առաջադրելու այն դրույթը, որ հանցավորության պատճառականության մեջ որոշակիորեն ստվերվում են հանցարարքի սուբյեկտիվ (անձնային) գործոնները օբյեկտիվ գործոնների (հանցավոր հանգամանքների, հանցագործության օբյեկտի և այլն) կողմից: Մինչդեռ իրականում օբյեկտիվ գործոնների վրա գերակայում են սուբյեկտիվ հոգեբանական գործոնները, քանի որ արարքի մտահղացումը, պլանավորումը և կատարումը պայմանավորված են հանցարարքի սուբյեկտից բխող գործոններով:
3. Հակահասարակական գործունեության սուբյեկտիվ կողմի հետազոտման ընթացքում նպատակահարմար է հիմնվել

սուբյեկտիվ գործոնների հետևյալ դասակարգման վրա. ա/ կոգնիտիվ գործոններ (պատկերացումները հանցագործության վերաբերյալ),դիրքորոշումներ,բ/

4. մոտիվացիոն գործոններ (պահանջմունքներ, դրդապատճառներ, կյանքի իմաստավորվածություն, արժեքներ), գ/ անհատական առանձնահատկություններ (բնավորություն, խառնվածք), դ/ հուզական գործոններ (տագնապայնություն, ագրեսիվություն):
5. Անձի հակահասարակական գործունեության կողմնորոշման հիմքը մի յուրահատուկ տեսություն է,որով անձը փաստերով և փաստարկներով հիմնավորում է իր հանցագործ գործունեությունը կամ կոնկրետ արարքը և «հանում» է տվյալ հանցագործությունն իրականացնելու բարոյական արգելքը:
6. Անձի հակահասարակական գործունեության մեջ առկա հետևյալ սուբյեկտիվ գործոնները բնորոշ են տարբեր բնույթի հանցագործություն իրականացրած անձանց. ա/ կյանքի անիմաստության զգացումը, բ/էքստերնալությունը, գ/ նյութական բարօրության արժեքի բացարձակացումը, դ/ ագրեսիվությունը:
7. Բարձր անձնային տագնապայնությունը բնորոշ է կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ կատարած անձանց:
8. Հանցագործության պատճառականության շղթայում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները գտնվում են բարդ հոգեբանական հարաբերակցության, փոխպայմանավորվածության մեջ: Նրանց միասնականության արդյունքում է ծնվում հանցավոր արարքը և սուբյեկտիվ կամ հոգեբանական կողմի դերում հանդես է գալիս հանցարարքի սուբյեկտի այս կամ այն կողմը (դրդապատճառը, դիրքորոշումը և այլն), իր խաթարված անձնային որակների և հատկանիշների ամբողջությամբ: Այսպիսի մոտեցումը ապահովում է հանցավորության դեմ պայքարի հոգեբանական կողմը,այսինքն կասեցնում անձի հետ կատարվող այլ ափոխումների ընթացքը:

9. Հանցավորության սուբյեկտիվ կամ հոգեբանական պատճառների միջև պատճառա-հետևանքային կապերի բացահայտումը, դրանց ձևավորման և դրսևորման առանձնահատկությունների իմացությունը երկակի նպատակ են հետապնդում: Առաջին, ընտրել օբյեկտիվ պատճառներից խուսափելու կամ շրջանցելու ուղիներ և միջոցներ, և երկրորդ, փնտրել հոգեբանական ուղիներ անձի բարոյալքման պրոցեսը կասեցնելու կամ այն հաղթահարելու համար: Դա հնարավորություն կտա նաև մշակել անհատական մոտեցման ուղիներ պրոֆիլակտիկ աշխատանքներ կազմակերպելու ժամանակ:
10. Հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը հավասարապես պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների և պայմանների ուսումնասիրությամբ և դրանց նախազգուշացման և հաղթահարման միջոցառումների իրականացմամբ: Այդ պայքարը կտա իր դրական արդյունքը այն դեպքում, երբ որ հանցավորության ընդհանուր սոցիալական պրոֆիլակտիկայի կառուցվածքային հիմնական և վճռորոշ բաղադրիչը կդառնա անձի վաղ հոգեբանական պրոֆիլակտիկան, անձնային որակների և հատկանիշների, անձնային վարքագծային դրսևորումների այլափոխումների վաղ հոգեբանական նախազգուշացումն ու հաղթահարումը:

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Մեր հետազոտությունների վրա հիմնվելով հակահասարակական վարքի հակվածության ախտորոշման, կանխման և հանցավոր վարք դրսևորած անձանց վերադաստիարակության համար առաջարկում ենք հետևյալ մեթոդական հանձնարարականները.

1. Բարոյական և իրավական գիտակցության մակարդակի բարձրացում: Այստեղ կարևորվում է ոչ թե բարոյական և իրավական նորմերի իմացությունը, այլև վերաբերմունքը դրանց նկատմամբ, քանի որ գերակշռում է անտարբեր, երբեմն արհամարհական վերաբերմունքը: Իսկ դրան կարող է նպաստել «օրենք և իրավունք» հասկացության արժևորումը, դրանք հօգուտ ժողովրդի շահերի կիրառելը: Օրենքի պաշտպանող ֆունկցիան գիտակցելով կփոխվի վերաբերմունքը դրա նկատմամբ:
2. Անձի կողմնորոշման հիմքի հետազոտությունը տարբեր հանցագործությունների վերաբերյալ: Անհրաժեշտ է հետազոտության ենթարկել անձի հակահասարակական գործունեության, տարբեր հանցագործությունների վերաբերյալ կողմնորոշման հիմքը, նրա տեսությունները և այն դեպքերում, երբ անձը տրամաբանորեն հիմնավորում, ռացիոնալիզացիայի է ենթարկում, արդարացնում է այս կամ այն հանցագործությունը, հակահասարակական ակտիվությունը, ապա կարելի է ենթադրել, որ նա տվյալ ոլորտում կարող է թույլ տալ իրեն հանցագործություն կատարելու: Մյուս կողմից հակահասարակական վարքի կանխման և անձի վերադաստիարակության համար անհրաժեշտ է փոխել անձի հակահասարակական գործունեության

կողմնորոշման հիմքը՝ ցույց տալ, որ նրա արդարացումները, ռացիոնալիզացիաները, հանցավոր գործունեության հիմնավորումները կեղծ են, և որ մարդիկ ամենևին էլ այդպես չեն մտածում:

3. Սեփական գոյության իմաստավորումը: Անհրաժեշտ է օգնել հակահասարակական վարք դրսևորած անձանց իմաստավորելու սեփական գոյությունը, քանի որ այն դեպքում, երբ անձը իմաստ է տեսնում իր կյանքում, ապա նա հանուն այդ իմաստի իր կյանքը փորձությունների չի ենթարկի, չի կատարի արարքներ, որոնց հետևանքով նա կարող է հայտնվել ազատազրկման մեջ:
4. Հոգեբանական աշխատանքների իրականացում հանցավոր արարք թույլ տված անձանց էքստերնալությունը հաղթահարելու, ինքնաքննադատականությունը և սեփական արարքների համար պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ:
5. Հոգեբանական աշխատանքների իրականացում անձի արժեքային համակարգը վերակառուցելու ուղղությամբ: Նյութականի վրա գերկենտրոնացումը, փողը գերաժեք դարձնելն աղավաղում է անձի բարոյական կերպարը, նրա մեջ պատրաստականություն է ձևավորում հանուն փողի գնալու հակահասարակական արարքների: Արժեքների վերաիմաստավորումը, նրանց նկատմամբ վերաբերմունքն ադեկվատդարձնելը կօգնի անձին բացվելու այլ արժեքների հանդեպ:
6. Սեփական անձի և շրջապատողների նկատմամբ բարյացակամ վերաբերմունք: Դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ ցանկացած վատ, արհամարհական, նվաստացնող վերաբերմունք մարդու նկատմամբ իր արտացոլումն է գտնում շրջապատողներին նմանատիպ վերաբերմունք ցուցաբերելու մեջ: Ժամանակակից հոգեբանությունը վկայում է այն մասին, որ անձը պետք է սիրի և հարգի իրեն և այս դեպքում միայն բարյացակամությամբ և սիրով կվերաբերվի այլ մարդկանց: Ուրիշների նկատմամբ

վերաբերմունքը ամուր կապված է սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի հետ և հակառակը: Այդպիսի պահանջմունքի անբավարարության դեպքում անձի մոտ ձևավորվում է անլիարժեքության բարդույթ: Նշվում է նաև, որ ներդաշնակ հոգեկանով անձինքլրիվ այլ կերպեն վերաբերվում կյանքի դժվար իրավիճակներին, քան հոգեկան անհավասարակշռված, երկատված սոցիալական գիտակցությամբ կամ դիսհարմոնիկ զարգացումունեցող անձինք:

7. Հոգեբանական օգնության արժևորում: Այսօր դեռևս անվստահություն կա և՛ իրավապահ մարմինների, և՛ հոգեբանների գործունեության նկատմամբ: Դա հանգեցնում է նրան, որ իրավական և հոգեբանական բնույթի խնդիրներ ունենալու ժամանակ մարդիկ գերադասում են դրանք լուծել ինքնուրույն, որոնք ոչ միշտ են ունենում դրական արդյունք:
8. Ինքնակատարելագործման պոտենցիալի զարգացում: Ինքնակառավարման մեջ սկզբունքային դեր են խաղում մարդու համոզմունքները և սոցիալական դիրքորոշումները: Այն, թե ինչ է մարդ ընտրում և ինչպես է գործում, կախված է նրա համոզմունքներից, պահանջմունքների և հետաքրքրությունների ուժից, սոցիալական դիրքորոշումներից, ազգային և կրոնական պատկանելիությունից: Ինքնակառավարումը մեծ մասամբ կախված է մարդու այնպիսի անձնային հատկանիշներից, ինչպիսիք են նպատակադրվածությունը, ինքնաքննադատությունը, զսպվածությունը, հոգևոր հարստությունը, բարոյական դաստիարակությունը: Ինքնակառավարումը պետք է դիտել ոչ միայն որպես անձնային նշանակալից պրոցես, այլև որպես սոցիալական նշանակալից գործունեություն, որը կատարում է ձևավորման հասարակական ֆունկցիա. դա անձի բարոյա–հոգեբանական հատկությունների ձևավորման նպատակաուղղված, գիտակցական պրոցես է: Ինքնակառավարումը ուղղված է դրական որակների

ձևավորմանը և բացասական որակների հաղթահարմանը, և դրանով ձևավորվում է առավել կայուն անձնավորություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Արզումանյան Ս., Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն: Դասագիրք բուհերի համար - Եր., Զանգակ-97, 2004. - 432 էջ:
2. Արզումանյան Ս.Զ., Ս.Ծ.Մկրտչյան, Սարգսյան Վ.Ժ., Կիրառական հոգեբանության պրակտիկում: - Եր.: Զանգակ-97, 2002. - 392 էջ:
3. ՀՀ քրեական իրավունք: Ընդհ. մաս. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012. – 544 էջ:
4. Սարգսյան Վ.Ժ., Հոգեկարգավորում.-Եր.: Ասողիկ, 2007. - 176 էջ:
5. Ֆրոյդ Զ., Հոգվերլուծության ներածություն.- /դասախոսություններ/: Զանգակ-97, Երևան, 2002. - 472 էջ:
6. Аминов И. И., Давыдов Н. А., Юридическая психология: учебник.–Москва: Проспект.2015.-303 с.
7. Ананьев Б. Г. Человек как предмет познания психологии» - СПб.: Питер, 2001. - 288 с.
8. Антонян М.О. «Соотношение объективных условий и субъективного фактора при социализме». Ереван, 1967. - 239 с.
9. Антонян, Ю.М., Психологическое отчуждение личности и преступное поведение. Генезис и профилактика дезаптивных преступлений. Ереван: Изд: Айастан.-1987.–206 с.
10. Антонян Ю.М. Изучение личности преступника / Ю.М. Антонян. М.: ВНИИ МВД СССР, 1982. -79 с.
11. Антонян Ю.М. Преступное поведение и психические аномалии / Ю.М. Антонян, С.В. Бородин. М.: Спарк, 1998. - 215 с.

**12.** Антонян Ю.М., Гульдан В.В. Криминальная мотивация, М.: «Наука», 1986. – 302 с.

**13.** Антонян Ю.М., Кудрявцев В.Н., Эминов В.Е. Личность преступника.– СПб.: Изд.Юр. центр Пресс, 2004. – 366 с.

**14.** Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. - М.: «Логос», 2004.– 448 с.

**15.** Антонян Ю. М. Причины преступного поведения. - М.: Академия МВД РФ, 1992. - 207 с.

**16.** Антонян Ю.М., Барановский Н.А., Дагель П.С. Механизм преступного поведения. Дубовик О.Л., и др.; Отв. ред.: Кудрявцев В.Н. М. Наука 1981г.-248с.

**17.** Апиян Х.А., Апиян С.Н., Правосознание, правовое воспитание, правовая культура. Ереван: Изд. ЕГУ, 2001. –279 с.

**18.** Арзуманян С.Д., Психолого–криминологическая теория становления личности правонарушителя. Ер., Зангак – 97, 2000. – 328 с.

**19.** Асеев В.Г. Мотивация поведения и формирования личности. М., «Мысль».-1976. - 158 с.

**20.** Бартол К. Психология криминального поведения. 7-е международное издание, СПб.: Прайм-Еврознак, М.: Олма-Пресс. - 2004. - 57 с.

**21.** Бассин Ф.В. Проблема бессознательного (О неосознаваемых формах высшей нервной деятельности), М., 1968. - 468 с.

**22.** Блэкборн Р. Психология криминального поведения: Учебник. - Спб.: Питер, 2004. - 496 с.

**23.** Божович Л. И. Возрастные закономерности формирования личности ребенка: Автореф. дис….докт.психол.наук.-М., 1966. – 40 с.

**24.** Божович Л. И. Личность и ее формирование в детском возрасте. М., «Просвещение». - 1968. – 464 с.

**25.** Божович Л. И. Проблема развития мотивационной сферы ребенка // Изучение мотивации поведения детей и подростков. - М., "Педагогика", 1972. – 352 с.

**26.** Бодальев А. А. Восприятие и понимание человека человеком.-М.:Изд-во Моск. у, н-та, 1982- 200 с.

**27.** Бодальев А. А. Психология о личности. М.: Изд-во Моск. ун – та, 1988.-188с.

**28.** Бодальев А.А. Формирование понятия о другом человеке как личности. Изд. Ленинградского университета 1970. –129 с.

**29.** Варчук Т.В. Криминология. М. “ Инфра – М ” 2002. – 298 с.

**30.** Васильев В.Л. Юридическая психология: учебник / В. Л. Васильев; С.- Петерб. ун-т МВД России. – 6 -е изд., перераб. и доп. – Санкт-Петербург и др.: Питер, 2012. - 604 с.

**31.** Викторов Б.А. Цель и мотив в тяжких преступлениях. – М.: Госюриздат, 1963. – 82 с.

**32.** Власов В.И. История политических и правовых учений: Учебное пособие для высшых учебных заведений. - Ростов н/Д: Феникс, 2004.-512 с.

**33.** Выготский Л.С. Собрание сочинений. В 6-ти т. Т. 3. Проблемы развития психики. М.: Педагогика, 1983. – 368 с.

**34.** Выготский Л. С. Психология искусства. 3-е изд. М.: Искусство, 1986. – 573 с.

**35.** Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период, Изд. Ереванского ун-та, Ереван, 2007 - 256 с.

**36.** Гиппенрейтер Ю.Б., Фаликман М.В. Психология мотиваций и эмоций. Хрестоматия. - М.: АСТ: Астрель, 2009. - 704 с.

**37.** Долгова А.И. Криминология / А.И. Долгова. - 3-е изд. - М.: НОРМА, 2015.- 384с.

**38.** Дубинин Н.П., Карпец И.И., Кудрявцев В.Н. Генетика, поведение, ответственность: О природе антиобщественных поступков и путях их предупреждения. М.: Политиздат, 1982. - 304 с.

**39.** Дюркгейм Э. О разделении общественного труда. Метод социологии. М: Наука. 1991. - 574 с.

**40.** Дюркгейм Э., Самоубийство: Социологический этюд, М.: Мысль, 1994.- 399 с.

**41.** Елисеев О. П., Практикум по психологии личности. – 2 – е изд., испр. и перераб. – СПб.: Питер, 2005. – 509 с.:

**42.** Еникеев М.И. Юридическая психология. М.: Норма, 2003. - 256 с.

**43.** Еникеев М.И. Юридическая психология. С основами общей и социальной психологии НОРМА, ИНФРА- М, 2016.-512 с.

**44.** Зелинский А.Ф. Криминальная психология. – Киев : Юринком Интер, 1999.– 240 с.

**45.** Зелинский А.Ф. Осознаваемое и неосознаваемое в преступном поведении. Харьков: Вища школа, 1986. - 168 с.

46. Зиновьева Д. М. Психология отчуждения: монография/ Д. М. Зиновьева; ГОУ ВПО «Волгоградская академия государственной службы». – Волгоград: Изд-во ГОУ ВПО «ВАГС», 2005. – 172 с.
47. Змановская Е. В. Девиантология (Психология отклоняющегося поведения): Учеб.пособие для студ. высш. учеб. заведений. – 2-е изд., испр. - М.: Издательский центр «Академия», 2004. – 288 с.
48. Игошев К.Е. Опыт социально-психологического анализа личности несовершеннолетних правонарушителей. - Москва : НИ и РИО, 1967.- 77с.
49. Игошев К.Е. Типология личности преступника и мотивация преступного поведения. Горький: Изд-во ГВШ МВД СССР,, 1974.- 165 с.
50. Ильин Е. П. Психология агрессивного поведения. - СПб.: Питер, 2014. – 368с.
51. Ильин Е. П. Мотивация и мотивы. - СПб.: Питер, 2002 - 512 с.
52. Изард К.Э.. Психология эмоций. - СПб.: Питер, Серия: Мастера Психологии, 2007. – 464 с.
53. Карпец И. И. Проблема преступности. - М., Издательство: Юрид. лит. 1969. - 168 с.
54. Клонингер С. Теории личности: познание человека. - 3-е изд. - СПб.: Питер, 2003. - 718 с.
55. Кудрявцева В.Н., Эминова В.Е Криминология. Под ред. Кудрявцева В.Н., Эминова В.Е. М.: Юристъ, 1997. - 512 с.
56. Кудрявцев В.Н. Борьба мотивов в преступном поведении. М.: Изд: Норма. 2007- 128 с.
57. Кудрявцев В.Н., Обьективная сторона преступления. М. Изд. Госюриздат 1960. – 244 с.
58. Кудрявцев В.Н. Причинность в криминологии (О структуре индивидуального преступного поведения): монография. М. : Проспект, 2007. – 176 с.
59. Кудрявцев В.Н., Причины правонарушений. <Наука>, М. 1976. – 286 с.
60. Кудрявцев И.А., Ратинова Н.А., Криминальная агрессия /экспертная типология и судебно-психологическая оценка/.– М.: Московский Университет, 2000.- 192с.
61. Кудрявцев В.Н. Механизм преступного поведения /Отв.ред. В.Н. Кудрявцев. М., 1 Изд: Наука 1981. – 248 с.
62. Лейкина Н.С., Личность преступника и уголовная ответственность. Изд. ЛГУ, 1968. - 128 с.

**63.** Леонтьев А.Н., Деятельность, сознание, личность. М. Политиздат.1975.– 304 с.

**64.** Леонтьев А.Н., Проблемы развития психики. М.: Издательство Академии педагогических наук РСФСР, 1959. - 345 с.

**65.** Леонтьев А.Н., Проблемы развития психики. - дополн 2-е, дополненное изд. - М: Мысль. М., 1965. – 574 с.

**66.** Ломброзо Ч., Преступление. Пер. Г.Н. Гордона, СПб., 1900. - 299 с.

**67.** Лунеев В.В. Преступное поведение: мотивация, прогнозирование, профилактика: учебное пособие.– М.: Издательство Военного университета, 1980. – 137 с.

**68.** Лурия, А. Р. Лекции по общей психологии - СПб.: Питер, 2006. - 320 с.

**69.** Маклаков А. Г. Общая психология Учебник для вузов.– СПБ. Питер, 2008.- 583с.

**70.** Малкина – Пых И.Г., Справочник практического психолога. М. “ Эксмо, 2006.- 784 с.

**71.** Мэй Р. Смысл тревоги / Перев. с англ. М.И. Завалова и А.И. Сибуриной. М.: Независимая фирма “Класс”, 2001. - 384 с.

**72.** Мясишев В.Н., Психология отношений, - М.: Изд-во Ин-тапрактич. психологии; Воронеж: Модэк, 1995. – 356 с.

**73.** Надирашвили, Ш.А. Установка и деятельность / Ш.А. Надирашвили. – /б. м./ Мецниереба, 1987. - 361 с.

**74.** Наумов А.В. Российское уголовное право: курс лекций: в 3 т. Т. 1: Общая часть/ А.В Наумов. - 5 – е изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2011. – 768 с.

**75.** Нерсесянц В.С. История политических и правовых учений. Учебник для вузив. Изд. 2-е. -М.: Изд группа НОРМА-ИНФРА М., 1999.- 736 с.

**76.** Петровский А. В. Введение в психологию / Под общ. ред. проф. А. В. Петровского. - Москва: Издательский центр «Академия», 1996. - 496 с.

**77.** Пиражков В.Ф. Криминальная психология. – М.: “ Ось – 89 ”, 2001. – 548 с.

**78.** Пирожков В.Ф. Криминальная психология / В.Ф. Пирожков.-(Юридическая психология): Ось-89, 2014. - 704 с.

**79.** Познишев С.В. Криминальная психология: Преступные типы. – М.: ИНФРА – М, 2007. – 320 с.

**80.** Рарог А.И. Субъективная сторона и квалификация преступлений. М.: ООО "Профобразование", 2001. – 133 с.

**81.** Ратинов А.Р. К ядру личности преступника //Актуальные проблемы уголовного права и криминологии. Сборник научных трудов. - М.: Изд-во Всесоюз. ин-та по изуч. причин и разраб. мер предупреждения преступности, 1981. – 575 с.

**82.** Решетников А. Ю. Криминология: краткий курс лекций / А. Ю. Решетников, О. Р. Афанасьева. - М. : Юрайт, 2012. – 155 с.

**83.** Реан А.А., Психология человека от рождения до смерти. Санкт – Петербург “Прайн – ЕВРОЗНАК’’ 2006. – 651 с.

**84.** Романов В.В. Юридическая психология: учебник для академического бакалавриата. 6-ое изд., переработанное и дополненное. – М.: Изд-во Юрайт: ИД Юрайт, 2015. – 537 с.

**85.** Рубинштейн, С.Л. Основы общей психологии / С.Л. Рубинштейн.-СПб. : Питер, 2000.- 712 с.

**86.** Рубинштейн С.Л. Бытие и сознание. Человек и мир. СПб.: Питер, 2003.- 512 с.

**87.** Сахаров А.Б., О личности преступника и причинах преступности в СССР. Госюриздат. М. 1961. – 279 с.

**88.** Серый А В, Яницкий М.С. Ценностно-смысловая сфера личности/ Учебное пособие. - Кемерово: Кемеровский государственный университет, 1999. – 92 с.

**89.** Соломин И.Л. Современные методы психологической экспресс-диагностики и профессионального консультирования. М.: Речь, 2006. - 279 с.

**90.** Спивак В.А. Организационное поведение и управление персоналом. СПб: Издательство «Питер», 2000. — 416 с.

**91.** Тарарухин С.А. Преступное поведение. Социальные и психологические черты - М. : Юрид. лит., 1974. - 244 с.

**92.** Тарарухин С.А., Установление мотива и квалификация преступлений. К., Издательство при Киевском государственном университете издательского объединения «Вища школа» 1977. – 151с.

**93.** Узнадзе, Д.Н. Экспериментальные основы психологии установки/Д.Н. Узнадзе. - Тбилиси, 1961. -210 с.

**94.** Узнадзе, Д.Н. Психологические исследования / Д.Н. Узнадзе. М. : Наука, 1966. - 450 с.

**95.** Узнадзе Д.Н., Психология установки, СПб, 2001 г., «Питер». – 416 с.

**96.** Узнадзе, Д.Н., Теория установки: Избранные психологические труды: В 70 т. / Д.Н. Узнадзе. М. : ИПП; Воронеж : НПО МОДЭК, 1997. - 448 с.

**97.** Уотсон Д. Психология как наука о поведении. М. – Л.: Государственное издательство, 1926. – 384 с.

**98.** Фокс В., Введение в криминологию. М. “ Прогресс ” 1985. – 312 с.

**99.** Фрэнкин Р. Мотивация поведения. Биологические, когнитивные и социальные аспекты. - СПб.: Питер, 2003. - 651 с.

**100.** Чуфаровский Ю.В. Юридическая психология.- М.:Право и закон, 1997.- 320 с.

**101.** Чуфаровский Ю.В. Юридическая психология. Учебник.-М. Проспект, 2014. - 480 с.

**102.** Яковлев А.М. Преступность и социальная психология. Социально-психологические закономерности противоправного поведения: М. Изд: Юрид. лит. 1971. – 248 с.

**103.** Ярошевский М.Г. История психологии от античности до середины XX В. Учеб. пособие. – М., 1996. – 416 с.

**ՀԱՎԵԼՎԱԾ N 1**

## ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ FPI ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ՄՈԴԻՖԻԿԱՑՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ

Անձնային հարցաթերթիկը ստեղծված է հիմնականում կիրառական հետազոտություններ իրականացնելու նպատակով: Հարցաթերթիկի սանդղակները ձևավորվել են գործոնային վերլուծության հիման վրա և արտացոլում են փոխկապակցված գործոնների ամբողջությունը: Հարցաթերթիկը նախատեսված է անձի այն վիճակների և հատկությունների ախտորոշման համար, որոնք առաջնային նշանակություն ունեն սոցիալական ադապտացիայի և վարքագծի կարգավորման համար: Այն ընդգրկում է 12 սանդղակ և 114 հարց: Առաջին հարցը ոչ մի սանդղակի մեջ չի մտնում և ստուգիչ բնույթ ունի: 1-9-րդ սանդղակները հիմնական են, իսկ 10-12-ը՝ ինտեգրացնող:

Աշխատանքի կարգը: Հետազոտությունը կարելի է անցկացնել անհատական կամ հետազոտվողների խմբի հետ: Վերջինիս դեպքում

անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր հետազոտվող ունենա պատասխանների թերթիկի անհատական բլանկը և առանձին հարցաթերթիկը՝ հրահանգի հետ միասին: Հետազոտող_հոգեբանը հակիրճ շարադրում է հետազոտության նպատակը և հարցաթերթիկի հետ աշխատելու կանոնները: Անհրաժեշտ է հետազոտվողների մոտ դրական վերաբերմունք և հետաքրքրություն առաջացնել խնդրի նկատմամբ: Նրանց ուշադրությունը պետք է հրավիրել աշխատանքի ընթացքում փոխադարձ կոնսուլտացիաների անթույլատրելիության վրա: Այդ բացատրություններից հետո հոգեբանը առաջարկում է ուսումնասիրել հրահանգը, պատասխանում է հարցերին և առաջարկում է անցնել հարցաթերթիկի հետաշխատանքին:

Հրահանգ փորձարկվողին: Ստորև ներկայացված են մի շարք կարծիքներ, որոնցից յուրաքանչյուրը ենթադրում է Ձեզ վերաբերող հարց այն մասին, թե արդյոք համապատասխանում է, թե ոչ տվյալ կարծիքը Ձեր վարքագծի որոշ առանձնահատկություններին, արարքներին, մարդկանց նկատմամբ վերաբերմունքին, աշխարհայացքին և այլն: Եթե Դուք գտնում եք, որ կա այդպիսի համապատասխանություն, ապա պատասխանեք «այո», հակառակ դեպքում պատասխանեք «ոչ»: Ձեր պատասխանը նշեք Ձեզ մոտ եղած պատասխանի թերթիկում «+» նշանակելով համապատասխան վանդակում: Անհրաժեշտ է պատասխանել բոլոր հարցերին:

Հետազոտության արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե որքանով ուշադիր է կատարվում առաջադրանքը: Ոչ մի դեպքում չի կարելի պատասխանների շնորհիվ փորձել լավ տպավորություն գործել, քանի որ ոչ մի հարց չի գնահատվում որպես լավ կամ վատ: Ձեզ չպետք է անհանգստացնի այն, որ որոշ հարցեր կարող են շատ անձնական լինել, որովհետև հետազոտությունը չի նախատեսում յուրաքանչյուր հարցի առանձին վերլուծություն, այլ հիմնվում է որոշակի տեսակի հարցերի վերլուծության վրա:

**Հավելված N 2.**

## ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Արժեքների նշանակության և հասանելիության հարաբերակցության բացահայտման մեթոդիկան հնարավորություն է տալիս բացահայտել արժեքների հիերարխիան, որը ներառում է ներքին անհամաձայնության արտահայտվածության մակարդակը /ներքին կոնֆլիկտներ և վակուումներ/: Անձի դրդապատճառային ոլորտի անհամաձայնությունն ասելով՝ հասկանում ենք ցանկալիի (A) և իրականի, հասանելիի (H) միջև անհամաձայնության աստիճանը: Վերջինս համարվում է ընդհանուր ցուցանիշ և նշանակվում է R, որտեղ R=Σ(A-H): R-ի նվազագույն արժեքը 0-ն է, իսկ առավելագույն՝ 72-ը: Նորման գտնվում է 32-37-ի միջակայքում: Անհամաձայնության աստիճանը յուրաքանչյուր արժեքի համար որոշվում է առանձին: Եթե արժեքը գերազանցում է նրա հասանելիությանը, ապա նշանակում է, որ տվյալ մարդու մոտ առկա է ներանձնային

կոնֆլիկտ /ՆԿ/: Եթե հասանելիությունն է գերազանցում արժեքին, ապախտսվում է ներանձնային վակուումի /ՆԿ/ մասին:

Հետազոտվողներին տրվում է տասներկու արժեքներից բաղկացած ցանկը և հետևյալ հրահանգը. «Աղյուսակում նշված արժեքները համեմատեք ըստ դրանց կարևորության, նշանակության և իրական կյանքում հասանելիության: Առավելագույն միավորը 12-ն է, իսկ նվազագույնը՝ 1-ը»:

| հ/հ | Արժեքներ |
|---|---|
| 1 | Ակտիվ, գործնական կյանք, կենսակերպ |
| 2 | Հետաքրքիր աշխատանք |
| 3 | Առողջություն /հոգեկան և ֆիզիկական/ |
| 4 | Բնության, արվեստի գեղեցկություն |
| 5 | Սեր /հոգևոր և ֆիզիկական մերձեցում սիրելի մարդու հետ/ |
| 6 | Նյութական բարեհարմարություն |
| 7 | Լավ և հավատարիմ ընկերների առկայություն |
| 8 | Ինքնավստահություն /ազատություն ներքին հակասություններից/ |
| 9 | Ճանաչողություն /մտավոր զարգացման, ինքնաիրացման հնարավորություններ |
| 10 | Ազատություն գործողություններում և արարքներում |
| 11 | Երջանիկ ընտանեկան կյանք |
| 12 | Ստեղծագործություն, ստեղծագործելու հնարավորություն |

**Հավելված N 3.**

## ՌԵԱԿՏԻՎ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ

Խնդրում ենք ուշադիր կարդալ ներքևում շարադրված նախադասությունները: Ծրջանակի մեջ առեք թվերը՝ կախված այն հանգամանքից, թե ինչպես եք Ձեզ զգում հենց այս պահին:

Ներկայացված նախադասությունների շուրջ երկար մի մտածեք, քանի որ «ճիշտ» կամ «սխալ» պատասխաններ չկան:

<u>ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ</u>

A- Ոչ, դա այդպես չէ
B- Թերևս այդպես է
C- Ճիշտ է
D- Լիովին ճիշտ է

| | | A | B | C | D |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ես հանգիստեմ | 1 | 2 | 3 | 4 |
| 2 | Ինձ ոչինչ չի սպառնում | 1 | 2 | 3 | 4 |
| 3 | Ես լարվածություն եմ զգում | 1 | 2 | 3 | 4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Ես ափսոսանք եմ զգում | 1 | 2 | 3 | 4 |
| 5 | Ես ինձ ազատեմ զգում | 1 | 2 | 3 | 4 |
| 6 | Ես ընկճված եմ | 1 | 2 | 3 | 4 |
| 7 | Ինձ անհանգստացնում են հնարավոր անհաջողությունները | 1 | 2 | 3 | 4 |
| 8 | Ես ինձ հանգստացած եմ զգում | 1 | 2 | 3 | 4 |
| 9 | Ես գոհ չեմ ինձնից | 1 | 2 | 3 | 4 |
| 10 | Ես ներքին բավարարվածության զգացողություն ունեմ | 1 | 2 | 3 | 4 |
| 11 | Ես վստահում եմ իմ ուժերին | 1 | 2 | 3 | 4 |
| 12 | Ես նյարդայնանում եմ | 1 | 2 | 3 | 4 |
| 13 | Ես տեղս չեմ գտնում | 1 | 2 | 3 | 4 |
| 14 | Ես դյուրագրգիռ եմ | 1 | 2 | 3 | 4 |
| 15 | Ես ճնշվածություն, լարվածություն եմ զգում | 1 | 2 | 3 | 4 |
| 16 | Ես բավարարված եմ | 1 | 2 | 3 | 4 |
| 17 | Ես մտահոգ եմ | 1 | 2 | 3 | 4 |
| 18 | Ես չափից դուրս գրգռված եմ և տեղս չեմ գտնում | 1 | 2 | 3 | 4 |
| 19 | Ես ուրախեմ | 1 | 2 | 3 | 4 |
| 20 | Ինձ հաճելի է | 1 | 2 | 3 | 4 |
| 21 | Ես բավարարածություն եմ զգում | 1 | 2 | 3 | 4 |
| 22 | Ես շատշուտհոգնում եմ | 1 | 2 | 3 | 4 |
| 23 | Ես հեշտությամբ կարող եմ լաց լինել | 1 | 2 | 3 | 4 |
| 24 | Ես կցանկանայի լինել նույնքան երջանիկ, ինչպես մյուսները | 1 | 2 | 3 | 4 |
| 25 | Ես պարտվում եմ, որովհետև չեմ կարողանում արագ որոշումներ կայացնել | 1 | 2 | 3 | 4 |
| 26 | Սովորաբար ես ինձ թարմացած եմ զգում | 1 | 2 | 3 | 4 |
| 27 | Ես հանգիստեմ,սառնարյուն և հավաքված | 1 | 2 | 3 | 4 |
| 28 | Սպասվող դժվարությունները սովորաբար տագնապեցնում են ինձ | 1 | 2 | 3 | 4 |
| 29 | Ես չափից շատ եմ անհանգստանում չնչին բաների համար | 1 | 2 | 3 | 4 |
| 30 | Ես բավականին երջանիկ եմ | 1 | 2 | 3 | 4 |
| 31 | Ես ամեն ինչ չափից շատ եմ սրտիս մոտ ընդունում | 1 | 2 | 3 | 4 |
| 32 | Ինձ անհրաժեշտ է ինքնավստահություն | 1 | 2 | 3 | 4 |
| 33 | Սովորաբար ես ինձ ապահով եմ զգում | 1 | 2 | 3 | 4 |
| 34 | Ես փորձում եմ խուսափել կրիտիկական իրավիճակներ | 1 | 2 | 3 | 4 |
| 35 | Ունենում եմ «խառը» վիճակներ | 1 | 2 | 3 | 4 |
| 36 | Ես գոհ եմ | 1 | 2 | 3 | 4 |
| 37 | Յուրաքանչյուր չնչին բան շեղում և անհանգստացնում է ինձ | 1 | 2 | 3 | 4 |
| 38 | Ես չափից դուրս գրգռված եմ և տեղս չեմ գտնում | 1 | 2 | 3 | 4 |
| 39 | Ես հավասարակշռված մարդ եմ | 1 | 2 | 3 | 4 |
| 40 | Ես բավականին անհանգստանում եմ, երբ մտածում եմ իմ գործերի և պարտականությունների մասին | 1 | 2 | 3 | 4 |

**ՀԱՎԵԼՎԱԾ 4**

## Ջ. Ռոթթերի վերահսկան տեղակայման թեստը

Հրահանգ-«Կարդացեք զույգ պնդումներից յուրաքանչյուրը և որոշեք, թե դրանցից որն է ավելի հիմնավորված: Պատասխանների թերթիկում նշեք ձեր ընտրած պնդման տառը՝ ա կամ բ»:

| N | Ա | Բ |
|---|---|---|
| 1 | Երեխաները զանազան պատմությունների մեջ են հայտնվում այն պատճառով, որ ծնողները նրանց հաճախեն պատժում: | Մեր ժամանակներում երեխաները տհաճ պատմությունների մեջ են ընկնում հաճախ այն պատճառով, որ ծնողները նրանց շատ մեղմ են դաստիարակում: |
| 2 | Շատ անհաջողություններ ուղղակի բախտը չբերելու հետևանք են: | Անհաջողությունների պատճառը մարդու, հենց իր կողմից թույլ տված սխալներն են: |
| 3 | Մարդկանց անբարոյական արարքները պայմանավորված են նրանով, որ միջավայրը համակերպվում է դրանց հետ: | Անբարոյական արարքները եղել են և կլինեն, անկախ այն բանից, թե միջավայրն ինչ ջանքեր է թափում դրանց կանխման ուղղությամբ: |
| 4 | Ի վերջո մարդիկ ստանում են այն ինչի արժանի են: | Ցավոք, մարդու արժանիքները հաճախ |

| | | |
|---|---|---|
| | | մնում են չգնահատված |
| 5 | Այն կարծիքը, թե դասախոսները սովորողների նկատմամբ անարդար են՝ ճիշտ չէ: | Ծատուսանողներ չեն հասկանում, որ իրենց գնահատականները կարող են պայմանավորված լինել պազմաթիվ պատահական գործոններով: |
| 6 | Ղեկավարի հաջողությունները հիմնականում պայմանավորված են նպաստավոր հանգամանքներով: | Ընդունակ մարդիկ, ովքեր ղեկավար չեն դարձել, ուղղակի չեն օգտագործել իրենց հնարավորությունները: |
| 7 | Որքան էլ դուք ջանաք, որոշ մարդիկ ձեր նկատմամբ համակրանք չեն ունենա: | Նաով չի կարողացել արժանանալ շրջապատի համակրանքին ուղղակի ուրիշների հետլեզու գտնելու ընդունակություն չունի: |
| 8 | Մարդու բնավորության և վարքի ձևավորման գործում ժառանգականությունն առաջնային դեր ունի: | Միայն կյանքի փորձն է որոշում բնավորությունն ու վարքը: |
| 9 | Ես հաճախեմ համոզվել «Լինելու բանը կլինի» ասույթի ճմարտացիությաան մեջ: | Ըստիս ավելի ճիշտ է որոշում կայացնել ու գործել, քան հույսը դնել ճակատագրի վրա: |
| 10 | Ըստիս ավելի ճիշտ է որոշում կայացնել ու գործել, քան հույսը դնել ճակատագրի վրա: | Նույնիսկ լավ պատրաստված մասնագետը կարող է խնդիրներ ունենալ, եթե քննությունն իրականացվում է կանխակալ վերաբերմունքով: |
| 11 | Հաջողությունը հետևանք է քրտնաջան աշխատանքի և քիչ է պայմանավորված բախտով: | Հաջողության հասնելու համար կարևոր է պահը բաց չթողնել: |
| 12 | Ցանկացած քաղաքացի կարողէ ազդել կարևոր քաղաքական որոշումների վրա: | Հասարակությունը ղեկավարում են մարդիկ, ովքեր ուղղակի նշանակվել են այս կամ այն պաշտոնին, իսկ հասարակ մարդիկ դժվար թե ինչ-որ բան կարող են |

| | | |
|---|---|---|
| | | փոխել: |
| 13 | Երբ ես ծրագրեր եմ մշակում, համոզված եմ, որ կկարողանամ դրանք իրականացնել: | Ամեն ինչ չէ, որ իմաստ ունի պլանավորել, քանի որ շատբան պայմանավորված է հանգամանքներով: |
| 14 | Կան մարդիկ ում մասին վստահորեն կարելի է ասել, որ նրանք լավը չեն: | Ցանկացած մարդու մեջ կան դրական կողմեր: |
| 15 | Իմ ցանկությունների իրականացումը պատահական հաջողությունների հետևանք չեն: | Երբ չգիտեն ինչ անել, մետաղադրամ են գցում: Կարծում եմ կյանքում հաճախկարելի է դիմել այս մեթոդին: |
| 16 | Հաճախ հանգամանքների բերմամբ են մարդիկ պաշտոններ ստանում: | Ղեկավար դառնալու համար պետք է մարդկանց կառավարել իմանալ, իսկ բախտն այստեղ ոչ մի կապ չունի: |
| 17 | Մարդկանց մեծ մասը չի կարող քիչ թե շատ ուրջ ազդեցություն ունենալ համաշխարհային գործընթացների վրա: | Հասարակական կյանքին ակտիվորեն մասնակցելով մարդիկ կարող են ազդել համաշխարհային գործընթացների վրա: |
| 18 | Մարդկանց մեծ մասը չի հասկանում, որ իրենց կյանքը մեծապես պայմանավորված է պատահական գործոններով: | Իրականում այնպիսի երևույթ, ինչպիսին է բախտը գոյություն չունի: |
| 19 | Միշտ պետք է կարողանալ խոստովանել սեփական սխալները: | Պետք է սկզբունք որդեգրել, չքննարկել սեփական սխալները: |
| 20 | Դժվար է հասկանալ դուրս գալիս դուդիմացինին, թե՝ ոչ: | Ձեր ընկերների քանակը պայմանավորված է նրանով, թե որքանով եք կարողանում տրամադրել մարդկանց ձեր նկատմամբ: |
| 21 | Ի վերջո մեր կյանքում տեղի ունեցած բացասական իրադարձությունները հավասարակշռվում են դրական իրադարձություններով: | Անհաջողությունների մեծ մասը պայմանավորված է համապատասխան ընդունակությունների, գիտելիքների կամ աշխատասիրության բացակայությամբ կամ այդ երեքով միաժամանակ: |
| 22 | Եթե բավարար ջանքեր թափել, ապա կարելի է արմատախիլ անել ձևականությունը և | Կան երևույթներ, որոնց դեմ դժվար է պայքարել. դրանցից են |

| | | |
|---|---|---|
| | անտարբերությունը: | անտարբերությունն ու ձևավականությունը. դրանք հնարավոր չէ վերացնել: |
| 23 | Երբեմն դժվար է հասկանալ, թե ինչի համար են ղեկավարները խրախուսում այս կամ այն աշխատակցին: | Աշխատանքային խրախուսանքներն արդյունք են ջանասեր աշխատանքի: |
| 24 | Լավ ղեկավարը սպասում է, որ իր աշխատակիցները որոշեն, թե ինչ են անելու: | Լավ ղեկավարը հստակ ցուցումներ է տալիս, թե ինչ է պետք անել: |
| 25 | Ես հաճախ զգում եմ, որ քիչ եմ ազդում ինձ հետկատարվածի վրա: | Չեմ հավատում, որ պատահական գործոնները և ճակատագիրը կարևոր դեր են խաղում իմ կյանքում: |
| 26 | Մարդիկ միայնակ են այն պատճառով, որ բարեհամբույր չեն իրենց շրջապատի հանդեպ: | Անիմաստ է խիստ ջանքեր թափել մարդկանց քո հանդեպ տրամադրելու համար, հավանողն առանց դրա էլ կհավանի քեզ: |
| 27 | Մարդու բնավորությունը հիմնականում պայմանավորված է նրա կամքով: | Մարդու բնավորությունը հիմնականում ձևավորվում է կոլեկտիվում: |
| 28 | Այն ինչ ինձ հետկատարվում է իմ ձեռքի գործն է: | Երբեմն ես զգում եմ, որ կյանքն ընթանում մի ուղիով, որն իմ կամքից անկախ է: |
| 29 | Ես հաճախ չեմ կարողանում հասկանալ, թե ինչու են ղեկավարները վարվում այսպես և ոչ թե այնպես: | Ի վերջո կազմակերպության վատ կառավարման համար պատասխանատու են հենց իրենք աշխատակիցները: |